ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Զոհրաբ Հովհաննիսյան

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

Խնդիրներ և լուծումներ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶՈՀՐԱԲ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

Խնդիրներ և լուծումներ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 517.95(076.1)
ԳՄԴ 22.311ց7
Հ854

Հրատարակության է երաշխավորվել
ԻԿՄ ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Հովհաննիսյան Զոհրաբ Բագրատի
Հ854 Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ: Խնդիրներ և լուծումներ / Զ. Բ. Հովհաննիսյան.-Եր.: ԵՊՀ հրատ., 2023.-226 էջ:

Ժողովածուում շարադրված են մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումների դասական տեսության մի շարք խնդիրների լուծման հիմնական մեթոդները: Բաժիններից յուրաքանչյուրն ընդգրկում է տիպային խնդիրների լուծման օրինակներ, իսկ վերջում առաջադրված են խնդիրներ՝ ինքնուրույն և լսարանային աշխատանքի համար: Տեքստում հակիրճ շարադրված են նաև հիմնական տեսական փաստերը:

Նախատեսված է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար: Այն օգտակար կլինի նաև ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական այլ ոլորտների մասնագետներին:

ՀՏԴ 517.95(076.1)
ԳՄԴ 22.311ց7

ISBN 978-5-8084-2651-1
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426511

Բովանդակություն

Նախնական գաղափարներ

Մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարում (այսուհետ՝ հավասարում) կոչվում է այն հավասարումը, որտեղ անհայտը մեկից ավելի փոփոխականի ֆունկցիա է։ Ընդ որում՝ այն պետք է էապես պարունակի անհայտ ֆունկցիայի մեկ կամ մի քանի մասնական ածանցյալ և կարող է պարունակել անկախ փոփոխականներն ու որոնելի ֆունկցիան։

Հավասարումը կոչվում է m -րդ կարգի, եթե նրա մեջ մասնակցում է որոնելի ֆունկցիայի առնվազն մեկ m -րդ կարգի մասնական ածանցյալ, իսկ m-ից բարձր կարգի ածանցյալներ չեն մասնակցում։

Ցանկացած հավասարում ունի

$$\Phi\left(x_1, x_2, \ldots, x_n, u, \frac{\partial u}{\partial x_1}, \frac{\partial u}{\partial x_2}, \ldots, \frac{\partial u}{\partial x_n}, \ldots, \frac{\partial^{|\alpha|} u}{\partial x_1^{\alpha_1} \partial x_2^{\alpha_2} \ldots \partial x_n^{\alpha_n}}, \ldots\right) = 0$$

տեսքը, որտեղ Φ ֆունկցիան կապ է ստեղծում $x_1, x_2, \ldots, x_n$ անկախ փոփոխականների, $u(x_1, x_2, \ldots, x_n)$ որոնելի ֆունկցիայի և նրա ածանցյալների միջև։ Այստեղ $\alpha = (\alpha_1, \alpha_2, \ldots \alpha_n)$ վեկտոր է, որի բաղադրիչները ոչ բացասական ամբողջ թվեր են, $|\alpha| = \alpha_1 + \alpha_2 + \ldots + \alpha_n \leqslant m$, m-ը հավասարման կարգն է։

Այսուհետ u ֆունկցիայի մասնական ածանցյալների համար կօգտագործենք նաև

$$u_{x_i} = \frac{\partial u}{\partial x_i}, \qquad u_{x_i x_j} = \frac{\partial^2 u}{\partial x_i \partial x_j}$$

նշանակումները։

Հավասարումը կոչվում է գծային, եթե Φ ֆունկցիան գծորեն է կախված u-ից և նրա ածանցյալներից[1]։ Այսպես, երկրորդ կարգի գծային հավասարման ընդհանուր տեսքն է՝

$$\sum_{i=1}^{n} \sum_{j=1}^{n} a_{ij}(x) u_{x_i x_j} + \sum_{i=1}^{n} b_i(x) u_{x_i} + c(x) u = f(x):$$

Այստեղ $x = (x_1, x_2, \ldots, x_n)$, $u(x)$-ը անհայտ ֆունկցիան է, $a_{ij}(x)$, $b_i(x)$, $c(x)$ ֆունկցիաները կոչվում են հավասարման գործակիցներ, $f(x)$ ֆունկցիան կոչվում է ազատ անդամ կամ աջ մաս։ Եթե $f(x) \equiv 0$, ապա գծային հավա-

[1]Կասենք, որ $k+m$ հատ փոփոխականներից կախված $G(t_1, t_2, \ldots, t_k, y_1, y_2, \ldots, y_m)$ ֆունկցիան ($k \geqslant 0$, $m > 0$ ամբողջ թվեր են) գծային է $y_1, y_2, \ldots, y_m$ փոփոխականների նկատմամբ, կամ գծորեն է կախված $y_1, y_2, \ldots, y_m$ փոփոխականներից, եթե այն ունի

$$G(t_1, t_2, \ldots, t_k, y_1, y_2, \ldots, y_m) = \sum_{i=1}^{m} a_i(t_1, t_2, \ldots, t_k) y_i + b(t_1, t_2, \ldots, t_k)$$

տեսքը։ a_i ֆունկցիաները կոչվում են գործակիցներ, իսկ b-ն՝ ազատ անդամ։ Եթե $b \equiv 0$, ապա G -ն կոչվում է համասեռ գծային ֆունկցիա։

սարումը կոչվում է համասեռ:

Հետագայում կհամարենք, որ բարձր կարգի ածանցյալների գործակիցներից կազմված $A(x){=}\|a_{ij}(x)\|_{i,j=1}^{n}$ մատրիցը սիմետրիկ է: Իրոք, հաշվի առնելով, որ մինչև երկրորդ կարգի անընդհատ ածանցյալ ունեցող ֆունկցիաների երկրորդ կարգի "խառը" մասնական ածանցյալները հավասար են՝ $u_{x_ix_j}{=}u_{x_jx_i}$, կունենանք

$$\sum_{i=1}^{n}\sum_{j=1}^{n} a_{ij}(x)u_{x_ix_j} = \sum_{i=1}^{n}\sum_{j=1}^{n}\frac{a_{ij}(x)+a_{ji}(x)}{2}\,u_{x_ix_j},$$

հետևաբար $A(x)$ մատրիցը միշտ կարելի է փոխարինել

$$\frac{1}{2}(A(x)+A^T(x)) = \left\|\frac{a_{ij}(x)+a_{ji}(x)}{2}\right\|_{i,j=1}^{n}$$

սիմետրիկ մատրիցով, առանց փոխելու հավասարումը:

Եթե Φ ֆունկցիան գծորեն է կախված որոնելի ֆունկցիայի ամենաբարձր՝ m-րդ կարգի ածանցյալներից, ապա հավասարումը կոչվում է քվազիգծային: Երկրորդ կարգի քվազիգծային հավասարման ընդհանուր տեսքն է՝

$$\sum_{i=1}^{n}\sum_{j=1}^{n} a_{ij}(x,u,u_{x_1},u_{x_2},\ldots,u_{x_n})\,u_{x_ix_j} + F(x,u,u_{x_1},u_{x_2},\ldots,u_{x_n}) = 0:$$

Եթե քվազիգծային հավասարման մեջ ամենաբարձր կարգի ածանցյալների գործակիցները կախված են միայն անկախ փոփոխականներից, ապա այն կոչվում է կիսագծային հավասարում: Օրինակ, երկու (x,y) անկախ փոփոխականների դեպքում երկրորդ կարգի կիսագծային հավասարումը կունենա

$$a(x,y)\,u_{xx} + 2\,b(x,y)\,u_{xy} + c(x,y)\,u_{yy} + F(x,y,u,u_x,u_y) = 0$$

տեսքը:

Դիցուք Ω-ն n չափանի R^n էվկլիդեսյան տարածության որևէ տիրույթ է (բաց կապակցված բազմություն): Կասենք, որ $u(x_1,x_2,\ldots,x_n)$ ֆունկցիան հավասարման լուծում է Ω տիրույթում, եթե այն այդ տիրույթում

- որոշված և անընդհատ է.
- գոյություն ունեն և անընդհատ են այն ածանցյալները, որոնք մասնակցում են հավասարմանը.
- տեղադրելով հավասարման մեջ՝ ստացվում է նույնություն անկախ փոփոխականների նկատմամբ Ω տիրույթում:

Բնության մեջ տեղի ունեցող պրոցեսների ուսումնասիրությունը շատ դեպքերում բերվում է մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարման լուծումներ գտնելու խնդրին. դա է պատճառը, որ այդ հավասարումները կոչվում են նաև մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ:

Հավասարման բոլոր լուծումների բազմությունը կոչվում է ընդհանուր լուծում: Օրինակ, $u_x = 0$ հավասարման ընդհանուր լուծումը տրվում է $u(x, y) = g(y)$ բանաձևով, որտեղ $g(y)$-ը կամայական անընդհատ ֆունկցիա է:

Եթե սովորական դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը պարունակում է կամայական հաստատուններ, ապա մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը պարունակում է կամայական ֆունկցիաներ: m-րդ կարգի հավասարման ընդհանուր լուծումը պարունակում է m հատ կամայական ֆունկցիա, որոնցից յուրաքանչյուրի փոփոխականների քանակը մեկով պակաս է որոնելի ֆունկցիայի փոփոխականների քանակից: Ենթադրվում է, որ այդ ֆունկցիաները բավականաչափ ողորկ են:

Օրինակ 1: Լուծել $\dfrac{\partial^2 u}{\partial x \partial y} = x^2 - y$ հավասարումը:

Լուծում: Ներկայացնենք հավասարումը

$$\frac{\partial}{\partial y}\left(\frac{\partial u}{\partial x}\right) = x^2 - y$$

տեսքով: Նախ ինտեգրենք աջ և ձախ մասերը ըստ y-ի՝

$$\frac{\partial u}{\partial x} = \int (x^2 - y) dy = x^2 y - \frac{y^2}{2} + f_1(x), \qquad f_1(x)\text{-ը կամայական ֆունկցիա է:}$$

Այժմ ստացվածը ինտեգրենք ըստ x-ի՝

$$u(x, y) = \frac{x^3 y}{3} - \frac{y^2 x}{2} + f(x) + g(y) :$$

Այստեղ $f(x)$-ը և $g(y)$-ը կամայական դիֆերենցելի ֆունկցիաներ են ($f(x)$-ը $f_1(x)$-ի նախնականն է):

Պատասխան՝ $u(x, y) = \dfrac{x^3 y}{3} - \dfrac{y^2 x}{2} + f(x) + g(y) :$

Օրինակ 2: Լուծել $\dfrac{\partial^2 u}{\partial x \partial y} = 2\,\dfrac{\partial u}{\partial x}$ հավասարումը:

Լուծում: Հավասարումը ներկայացնենք

$$\frac{\partial}{\partial x}\left(\frac{\partial u}{\partial y} - 2u\right) = 0$$

տեսքով: Ինտեգրելով աջ և ձախ մասերը ըստ x-ի, կստանանք՝

$$\frac{\partial u}{\partial y} - 2u = g_1(y), \tag{1}$$

որը, եթե համարենք x-ը պարամետր, առաջին կարգի գծային սովորական դիֆերենցիալ հավասարում է: Լուծենք այն հաստատունի վարիացիայի եղանակով: Համապատասխան համասեռ՝ $u_y - 2u = 0$ հավասարման ընդհանուր լուծումն ունի

$$u_0(x, y) = h(x)e^{2y}$$

տեսքը, որտեղ $h(x)$-ը կամայական ֆունկցիա է: Անհամասեռ՝ (1) հավասարման լուծումը փնտրենք

$$u(x, y) = z(x, y)e^{2y}$$

տեսքով: $z(x, y)$ ֆունկցիան գտնելու համար տեղադրենք (1) հավասարման մեջ՝

$$\frac{\partial z}{\partial y} = g_1(y)e^{-2y},$$

որտեղից, ինտեգրելով ըստ y-ի, կստանանք $z(x, y)$ ֆունկցիան՝

$$z(x, y) = g_2(y) + f(x) :$$

Այստեղ $g_2(y)$-ը, որպես $g_1(y)e^{-2y}$ կամայական ֆունկցիայի նախնական, կամայական դիֆերենցելի ֆունկցիա է: Այսպիսով՝

$$u(x, y) = (f(x) + g_2(y))e^{2y} = f(x)e^{2y} + g_2(y)e^{2y} = f(x)e^{2y} + g(y) :$$

Պատասխան՝ $u(x, y) = f(x)e^{2y} + g(y)$:

Խնդիրներ

Պարզել, հետևյալ հավասարություններն արդյո՞ք մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումներ են: Եթե այո, ապա ո՞ր կարգի.

1. $\cos(u_x + u_y) - \cos u_x \cos u_y + \sin u_x \sin u_y = 0$:
2. $\dfrac{\partial}{\partial x} \operatorname{tg} u - u_x \sec^2 u - 3u + 2 = 0$:
3. $\ln |u_{xx}u_{yy}| - \ln |u_{xx}| - \ln |u_{yy}| + u_x + u_y = 0$:

4. $u_x u_{xy}^2 + \left(u_{xx}^2 - 2u_{xy}^2 + u_y\right)^2 - 2xy = 0:$

5. $2\left(u_x - 2u\right)u_{xy} - \dfrac{\partial}{\partial y}\left(u_x - 2u\right)^2 - xy = 0:$

6. $2u_{xx}u_{xxy} - \dfrac{\partial}{\partial y}\left(u_{xx} - u_y\right)^2 - 2u_y u_{xxy} + u_x = 0:$

7. $3u_x \dfrac{\partial}{\partial y} \ln|u_x| + \sin u - 3u_{xy} = 6u_y:$

8. $\dfrac{\partial}{\partial x} \operatorname{ctg} u + 6u^2 = \dfrac{u_x}{\cos^2 u - 1} + x^2 y:$

9. $4\sin^2\left(u_x + 3u_y\right) + x + y = u^3 - 2\cos\left(2u_x + 6u_y\right):$

Պարզել, հետևյալ հավասարումներից որո՞նք են գծային (համասեռ կամ անհամասեռ), և որոնք՝ ոչ գծային (քվազիգծային).

10. $u_x\, u_{xy}^2 + 2x\, u\, u_{yy} - 3xy\, u_y - u = 0:$

11. $u_y\, u_{xx} - 3x^2\, u\, u_{xy} + 2\, u_x - f(x,y)\, u = 0:$

12. $2\sin(x+y)\, u_{xx} - x\cos y\; u_{xy} + xy\, u_x - 3u + 1 = 0:$

13. $x^2 y\, u_{xxy} + 2e^x y^2\, u_{xy} - (x^2y^2+1)u_{xx} - 2u = 0:$

14. $3\, u_{xy} - 6\, u_{xx} + 7u_y - u_x + 8x = 0:$

15. $u_{xy}\, u_{xx} - 3u_{yy} - 6x\, u_y + xy\, u = 0:$

16. $a(x,y)u_{xx} + b(x,y)u_{xy} + c(x,y)u_{yy} + d(x,y)u_x + e(x,y)u_y + h(x,y) = 0:$

17. $a(x,y,u_x,u_{xy})\, u_{xyy} + b(x,y,u_{yy})\, u_{yyy} + 2u\, u_{xy}^2 - f(x,y) = 0:$

18. $u_{xy} + u_y + u^2 - xy = 0:$

19. $2x\, u_{xy} - 6\, \dfrac{\partial}{\partial x}(u^2 - xy) + u_{yy} = 0:$

20. $\dfrac{\partial}{\partial y}\left(yu_y + u_x^2\right) - 2u_x u_{xy} + u_x - 6u = 0:$

Հավասարումը ձևափոխել ξ, η փոփոխականների.

21. $x^2\, \dfrac{\partial^2 u}{\partial x^2} - y^2\, \dfrac{\partial^2 u}{\partial y^2} = 0, \qquad \xi = xy, \qquad \eta = \dfrac{y}{x}:$

22. $\dfrac{\partial^2 u}{\partial x^2}+\dfrac{\partial^2 u}{\partial y^2}=0, \qquad \xi=\dfrac{x}{x^2+y^2}, \qquad \eta=-\dfrac{y}{x^2+y^2}:$

23. $\dfrac{\partial^2 u}{\partial x\partial y}-\dfrac{1}{2xy}\dfrac{\partial^2 u}{\partial y^2}=0, \qquad \xi=xy, \qquad \eta=\dfrac{y}{x}:$

Հավասարումը ձևափոխել r, φ բևեռային կոորդինատների.

24. $x\dfrac{\partial z}{\partial y}-y\dfrac{\partial z}{\partial x}=0:$

25. $x\dfrac{\partial z}{\partial x}+y\dfrac{\partial z}{\partial y}=0:$

26. $\dfrac{\partial^2 u}{\partial x^2}+\dfrac{\partial^2 u}{\partial y^2}=0$ (Լապլասի հավասարումը) :

Ստուգել, որ ցանկացած φ և ψ դիֆերենցելի ֆունկցիաների դեպքում տրված ֆունկցիան հավասարման լուծում է.

27. $y\dfrac{\partial z}{\partial x}-x\dfrac{\partial z}{\partial y}=0, \qquad z=\varphi\left(x^2+y^2\right):$

28. $\dfrac{1}{x}\dfrac{\partial z}{\partial x}+\dfrac{1}{y}\dfrac{\partial z}{\partial y}=\dfrac{z}{y^2}, \qquad z=\dfrac{y}{\varphi\left(x^2-y^2\right)}:$

29. $x^2\dfrac{\partial z}{\partial x}-xy\dfrac{\partial z}{\partial y}+y^2=0, \qquad z=\dfrac{y^2}{3x}+\varphi(xy):$

30. $y^2\dfrac{\partial z}{\partial x}+xy\dfrac{\partial z}{\partial y}=xz, \qquad z=y\,\varphi\left(x^2-y^2\right):$

31. $\dfrac{\partial^2 u}{\partial x\partial y}-2y\dfrac{\partial u}{\partial x}-2x\dfrac{\partial u}{\partial y}+4xy\,u=0, \qquad u=e^{x^2+y^2}\left(\varphi(x)+\psi(y)\right):$

32. $u_{tt}-a^2u_{xx}=0$ (Լարի տատանման հավասարում), $u=\varphi(x-at)+\psi(x+at):$

33. $u_{xx}-2u_{xy}+u_{yy}=0, \quad u=x\varphi(x+y)+y\psi(x+y):$

Գտնել հավասարման ընդհանուր լուծումը.

34. $\dfrac{\partial^2 u}{\partial x\partial y}=0:$

35. $\dfrac{\partial^2 u}{\partial x^2}=0:$

36. $\dfrac{\partial^2 u}{\partial x\partial y}=x+y:$

37. $\dfrac{\partial^2 u}{\partial x^2}=x^2+y:$

38. $\dfrac{\partial^2 u}{\partial y^2}=e^{x+y}:$

39. $\dfrac{\partial^2 u}{\partial x\partial y}=5\dfrac{\partial u}{\partial y}:$

40. $\dfrac{\partial^2 u}{\partial x \partial y} = 2y \, \dfrac{\partial u}{\partial x}$:

41. $\dfrac{\partial^2 u}{\partial x \partial y} = \dfrac{1}{x} \, \dfrac{\partial u}{\partial y}$:

42. $u_{xx} = 2$:

43. $u_{xy} = 2x$:

44. $u_{yy} = u_y$:

45. $u_{yy} = x + y$:

46. $u_{xx} = 6x$:

47. $\dfrac{\partial^4 u}{\partial x^2 \partial y^2} = 0$:

48. $\dfrac{\partial^3 u}{\partial x \partial y \partial z} = 0$:

Գտնել հավասարման այն լուծումը, որը բավարարում է տրված պայմաններին.

49. $\dfrac{\partial^2 u}{\partial x \partial y} = x + y, \;\; u(x,0) = x, \;\; u(0,y) = y^2$:

50. $\dfrac{\partial^2 u}{\partial x \partial y} = x + y - xy, \quad u(0,y) = y^2$:

51. $\dfrac{\partial z}{\partial y} = x^2 + 2y, \quad z(x,y)\big|_{y=x^2} = 1$:

Գլուխ 1
Առաջին կարգի հավասարումներ

§ 1. Գծային համասեռ հավասարում

Դիտարկենք $u = u(x_1, x_2, \ldots, x_n)$ ֆունկցիայի նկատմամբ

$$a_1(x_1, x_2, \ldots, x_n)\frac{\partial u}{\partial x_1} + a_2(x_1, x_2, \ldots, x_n)\frac{\partial u}{\partial x_2} + \ldots + a_n(x_1, x_2, \ldots, x_n)\frac{\partial u}{\partial x_n} = 0 \tag{1.1}$$

հավասարումը, որտեղ $a_1, a_2, \ldots a_n$ գործակիցները $\Omega \subseteq \mathrm{R}^n$ տիրույթում որոշված, անընդհատ ֆունկցիաներ են և միաժամանակ զրո չեն դառնում:

1.1 Ընդհանուր լուծումը: (1.1) հավասարմանը համապատասխանեցնենք սիմետրիկ տեսքով գրված սովորական դիֆերենցիալ հավասարումների հետևյալ համակարգին.

$$\frac{dx_1}{a_1(x_1, x_2, \ldots, x_n)} = \frac{dx_2}{a_2(x_1, x_2, \ldots, x_n)} = \ldots = \frac{dx_n}{a_n(x_1, x_2, \ldots, x_n)} : \tag{1.2}$$

Դիցուք, օրինակ, $a_n \neq 0$: Այդ դեպքում, եթե x_n-ը համարենք անկախ փոփոխական, (1.2) համակարգը համարժեք կլինի

$$\frac{dx_1}{dx_n} = \frac{a_1}{a_n}, \quad \frac{dx_2}{dx_n} = \frac{a_2}{a_n}, \ \ldots \ , \frac{dx_{n-1}}{dx_n} = \frac{a_{n-1}}{a_n} \tag{1.3}$$

նորմալ համակարգին:

Հայտնի է, որ եթե $\psi(x_1, x_2, \ldots, x_n)$ ֆունկցիան (1.3) (կամ որ նույնն է (1.2)) համակարգի ինտեգրալ է[2], ապա $u = \psi(x_1, x_2, \ldots, x_n)$ ֆունկցիան (1.1) հավասարման լուծում է, և հակառակը՝ եթե $u = \psi(x_1, x_2, \ldots, x_n) \not\equiv \mathrm{const}$. ֆունկցիան (1.1) հավասարման լուծում է, ապա $\psi(x_1, x_2, \ldots, x_n)$ ֆունկցիան (1.3) համակարգի ինտեգրալ է:

Եթե $a_1, a_2, \ldots a_n$ ֆունկցիաների առաջին կարգի մասնական ածանցյալներն անընդհատ են, ապա (1.3) համակարգն ունի $n-1$ հատ գծորեն անկախ՝

$$\psi_1(x_1, x_2, \ldots, x_n), \ \ \psi_2(x_1, x_2, \ldots, x_n), \ldots, \psi_{n-1}(x_1, x_2, \ldots, x_n) \tag{1.4}$$

ինտեգրալներ: Այդ հավաքածուն կոչվում է (1.2) համակարգի ընդհանուր ինտեգրալ: Եթե գտնվել է (1.4) ընդհանուր ինտեգրալը, ապա (1.1) հավա-

---

[2] $\psi(x_1, x_2, \ldots, x_n) \not\equiv \mathrm{const}$ ֆունկցիան կոչվում է (1.3) համակարգի ինտեգրալ, եթե այդ համակարգի ցանկացած $x_1 = \varphi_1(x_n),\ x_2 = \varphi_2(x_n), \ \ldots \ , x_{n-1} = \varphi_{n-1}(x_n)$ լուծման համար $\psi(\varphi_1(x_n), \varphi_2(x_n), \ldots \varphi_{n-1}(x_n), x_n)$ ֆունկցիան հաստատուն է, կախված չէ x_n-ից: Այդ դեպքում $\psi(x_1, x_2, \ldots, x_n) = c$ հավասարությունը կոչվում է առաջին ինտեգրալ:

սարման ընդհանուր լուծումը տրվում է

$$u = F(\psi_1, \psi_2, \ldots, \psi_{n-1})$$

բանաձևով, որտեղ F-ը կամայական անընդհատ դիֆերենցելի ֆունկցիա է:

Երկու անկախ փոփոխականների դեպքում (1.1) հավասարումը սովորաբար գրվում է

$$P(x,y)\,\frac{\partial z}{\partial x} + Q(x,y)\,\frac{\partial z}{\partial y} = 0 \tag{1.5}$$

տեսքով, որտեղ $z(x,y)$-ը անհայտ ֆունկցիան է, իսկ $P(x,y)$-ը և $Q(x,y)$-ը տրված ֆունկցիաներ են: Այդ դեպքում (1.2) համակարգը վեր է ածվում մեկ հավասարման՝

$$\frac{dx}{P(x,y)} = \frac{dy}{Q(x,y)} : \tag{1.6}$$

Եթե $\psi(x,y)$-ը (1.6) հավասարման ընդհանուր ինտեգրալն է, ապա (1.5) հավասարման ընդհանուր լուծումը տրվում է

$$z = F(\psi(x,y)) \tag{1.7}$$

բանաձևով:

Երկրաչափորեն (1.7) ընդհանուր լուծմանը համապատասխանում է F կամայական ֆունկցիայից կախված մակերևույթ, որը կոչվում է (1.5) հավասարման ինտեգրալ մակերևույթ:

Օրինակ 1.1: Լուծել հավասարումը.

$$x\frac{\partial u}{\partial x} + y\frac{\partial u}{\partial y} + z\frac{\partial u}{\partial z} = 0 :$$

Լուծում: Սովորական դիֆերենցիալ հավասարումների համապատասխան համակարգն է՝

$$\frac{dx}{x} = \frac{dy}{y} = \frac{dz}{z} :$$

Այն ունի (երբ $x \neq 0$) գծորեն անկախ երկու՝

$$\psi_1 = \frac{y}{x}, \qquad \psi_2 = \frac{z}{x} \tag{1.8}$$

ինտեգրալ: Ընդհանուր լուծումն է՝

$$u = F(\psi_1, \psi_2) = F\left(\frac{y}{x}, \frac{z}{x}\right),$$

որտեղ F-ը երկու փոփոխականի կամայական դիֆերենցելի ֆունկցիա է:

Պատասխան՝ $u = F\left(\frac{y}{x}, \frac{z}{x}\right)$:

1.2 Կոշիի խնդիրը: Պահանջվում է գտնել (1.1) հավասարման այնպիսի $u(x_1, x_2, \dots, x_n)$ լուծում, որը փոփոխականներից մեկի, օրինակ, x_n-ի որևէ ֆիքսած՝ x_n^0 արժեքի դեպքում հավասարվում է տրված $\varphi(x_1, x_2, \dots, x_{n-1})$ անընդհատ դիֆերենցելի ֆունկցիային՝

$$u\Big|_{x_n = x_n^0} = \varphi(x_1, x_2, \dots, x_{n-1}) : \tag{1.9}$$

Լուծման գոյության համար անհրաժեշտ է, որ $a_n(x_1, x_2, \dots, x_{n-1}, x_n^0) \neq 0$: (1.9) պայմանը կոչվում է Կոշիի կամ սկզբնական պայման:

Կոշիի խնդրի լուծումը կարելի է ստանալ հետևյալ քայլերով.

- Տեղադրել (1.4) ընդհանուր ինտեգրալի մեջ x_n-ի փոխարեն x_n^0: Ստացված ֆունկցիաները նշանակել $\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}$-ով՝

$$\begin{cases} \psi_1(x_1, x_2, \dots, x_{n-1}, x_n^0) = \tilde{\psi}_1, \\ \psi_2(x_1, x_2, \dots, x_{n-1}, x_n^0) = \tilde{\psi}_2, \\ . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \\ \psi_{n-1}(x_1, x_2, \dots, x_{n-1}, x_n^0) = \tilde{\psi}_{n-1} : \end{cases} \tag{1.10}$$

- Լուծել (1.10) համակարգը $x_1, x_2, \dots, x_{n-1}$ փոփոխականների նկատմամբ՝

$$\begin{cases} x_1 = \omega_1(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}), \\ x_2 = \omega_2(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}), \\ . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \\ x_{n-1} = \omega_{n-1}(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}) : \end{cases}$$

- Տեղադրել φ ֆունկցիայի մեջ՝

$$\varphi(\omega_1(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}), \omega_2(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}), \dots \omega_{n-1}(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1})),$$

  և փոխարինել $\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \dots, \tilde{\psi}_{n-1}$ ֆունկցիաները $\psi_1, \psi_2, \dots, \psi_{n-1}$ ֆունկցիաներով: Ստացված՝

$$u = \varphi(\omega_1(\psi_1, \psi_2, \dots, \psi_{n-1}), \omega_2(\psi_1, \psi_2, \dots, \psi_{n-1}), \dots, \omega_{n-1}(\psi_1, \psi_2, \dots, \psi_{n-1}))$$

  ֆունկցիան կլինի Կոշիի խնդրի լուծումը:

Երկու փոփոխականի դեպքում պահանջվում է գտնել (1.5) հավասարման այն լուծումը, որը բավարարում է $z(x_0, y) = \varphi(y)$ պայմանին: Այս դեպքում (1.10) համակարգը վեր է ածվում մեկ հավասարման՝

$$\psi(x_0, y) = \tilde{\psi} :$$

Այստեղից՝

$$y = \omega(\tilde{\psi}),$$

և պահանջվող լուծումը կլինի՝

$$z = \varphi(\omega(\psi(x, y))) :$$

Օրինակ 1.2: Գտնել

$$x\frac{\partial u}{\partial x} + y\frac{\partial u}{\partial y} + z\frac{\partial u}{\partial z} = 0$$

հավասարման այն լուծումը, որը բավարարում է

$$u(2, y, z) = y + z$$

պայմանին:

Լուծում: Սովորական դիֆերենցիալ հավասարումների համապատասխան համակարգի ինտեգրալներն են՝ $\psi_1 = y/x$, $\psi_2 = z/x$ (տես 1.1 օրինակը): Տեղադրենք նրանց մեջ $x = 2$ և ստացված ֆունկցիաները նշանակենք $\tilde{\psi}_1$, $\tilde{\psi}_2$-ով.

$$\frac{y}{2} = \tilde{\psi}_1, \quad \frac{z}{2} = \tilde{\psi}_2, \quad \text{կամ} \quad y = 2\tilde{\psi}_1, \quad z = 2\tilde{\psi}_2 :$$

Պահանջվող լուծումը կլինի՝ $u = 2\psi_1 + 2\psi_2 = \dfrac{2(y+z)}{x}$:

Պատասխան՝ $u = \dfrac{2(y+z)}{x}$:

Օրինակ 1.3: Գտնել

$$y\,\frac{\partial z}{\partial x} - x\,\frac{\partial z}{\partial y} = 0 \tag{1.11}$$

հավասարման այն ինտեգրալ մակերևույթը, որը անցնում է $z = y^2$ կորով, երբ $x = 0$:

Լուծում: (1.11)-ին համապատասխանում է

$$\frac{dx}{y} = \frac{dy}{-x}$$

անջատվող փոփոխականներով հավասարումը, որի ինտեգրալն է՝ $\psi = x^2 + y^2$: Տեղադրենք $x = 0$ և ստացված ֆունկցիան նշանակենք $\tilde{\psi}$, կստանանք՝ $\tilde{\psi} = y^2$, որտեղից՝

$$y = \pm\sqrt{\tilde{\psi}} :$$

Տեղադրելով կորի $z = y^2$ հավասարման մեջ և $\tilde{\psi}$-ը փոխարինելով ψ-ով, կստանանք պահանջվող լուծումը՝

$$z = \left(\pm\sqrt{\psi}\right)^2 = \psi(x, y) = x^2 + y^2 \, :$$

Պատասխան՝ $z = x^2 + y^2$:

§ 2. Քվազիգծային հավասարում

Դիտարկենք $u = u(x_1, x_2, \ldots, x_n)$ ֆունկցիայի նկատմամբ

$$a_1(x_1, x_2, \ldots, x_n, u)\,\frac{\partial u}{\partial x_1} + a_2(x_1, x_2, \ldots, x_n, u)\,\frac{\partial u}{\partial x_2} + \ldots + a_n(x_1, x_2, \ldots, x_n, u)\,\frac{\partial u}{\partial x_n} = \\ = b(x_1, x_2, \ldots, x_n, u) \quad (1.12)$$

քվազիգծային հավասարումը: Նկատենք, որ երբ a_i գործակիցները և b աջ մասը կախված չեն u-ից, ապա այն գծային անհամասեռ հավասարում է:
2.1 Ընդհանուր լուծումը: Եթե (1.12) հավասարման լուծումը փնտրենք

$$V(x_1, x_2, \ldots, x_n, u) = 0 \tag{1.13}$$

անբացահայտ տեսքով, ապա V ֆունկցիայի նկատմամբ ստացվում է

$$a_1\,\frac{\partial V}{\partial x_1} + a_2\,\frac{\partial V}{\partial x_2} + \ldots + a_n\,\frac{\partial V}{\partial x_n} + b\,\frac{\partial V}{\partial u} = 0 \tag{1.14}$$

գծային համասեռ հավասարումը: Սովորական դիֆերենցիալ հավասարումների համապատասխան համակարգն է՝

$$\frac{dx_1}{a_1(x_1, x_2, \ldots, x_n, u)} = \frac{dx_2}{a_2(x_1, x_2, \ldots, x_n, u)} = \ldots = \frac{dx_n}{a_n(x_1, x_2, \ldots, x_n, u)} = \frac{du}{b(x_1, x_2, \ldots, x_n, u)} \, :$$

Դիցուք այն ունի n հատ

$$\psi_1(x_1, x_2, \ldots, x_n, u),\ \psi_2(x_1, x_2, \ldots, x_n, u), \ldots, \psi_n(x_1, x_2, \ldots, x_n, u) \tag{1.15}$$

գծորեն անկախ ինտեգրալներ: Այդ դեպքում $V = F(\psi_1, \psi_2, \ldots, \psi_n)$ բանաձևով կտրվի (1.14) հավասարման ընդհանուր լուծումը, որտեղ F-ը կամայական դիֆերենցելի ֆունկցիա է: Հաշվի առնելով (1.13)-ը՝ (1.12) հավասարման ընդհանուր լուծումը կգրվի

$$F(\psi_1, \psi_2, \ldots, \psi_n) = 0 \tag{1.16}$$

անբացահայտ տեսքով: Եթե հաջողվի (1.16)-ը լուծել u-ի նկատմամբ, ապա կստանանք լուծումը բացահայտ տեսքով՝ $u = f(x_1, x_2, \ldots, x_n)$:

Երկու անկախ փոփոխականների դեպքում ունենք

$$P(x,y,z)\,\frac{\partial z}{\partial x}+Q(x,y,z)\,\frac{\partial z}{\partial y}=R(x,y,z) \tag{1.17}$$

հավասարումը: Սովորական դիֆերենցիալ հավասարումների համապատասխան համակարգը այդ դեպքում կլինի՝

$$\frac{dx}{P}=\frac{dy}{Q}=\frac{dz}{R}\;: \tag{1.18}$$

Եթե

$$\psi_1(x,y,z), \qquad \psi_2(x,y,z) \tag{1.19}$$

ֆունկցիաներն այդ համակարգի անկախ ինտեգրալներ են, ապա (1.17) հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$F(\psi_1,\psi_2)=0\;:$$

2.2 Կոշիի խնդիրը: Պահանջվում է գտնել (1.12) հավասարման այն լուծումը, որը բավարարում է

$$u\big|_{x_n=x_n^0}=\varphi(x_1,x_2,\ldots,x_{n-1}) \tag{1.20}$$

պայմանին: Այստեղ φ-ն տրված անընդհատ ֆունկցիա է:

Կոշիի խնդիրը լուծելու համար օգտվենք (1.15) ինտեգրալներից: Դրա համար պետք է՝

- այդ ինտեգրալներում տեղադրել $x_n=x_n^0$՝

$$\begin{cases}\psi_1(x_1,x_2,\ldots,x_{n-1},x_n^0,u)=\tilde\psi_1,\\ \psi_2(x_1,x_2,\ldots,x_{n-1},x_n^0,u)=\tilde\psi_2,\\ .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\\ \psi_n(x_1,x_2,\ldots,x_{n-1},x_n^0,u)=\tilde\psi_n.\end{cases} \tag{1.21}$$

- լուծել $x_1,x_2,\ldots,x_{n-1},u$ փոփոխականների նկատմամբ՝

$$\begin{cases}x_1=\omega_1(\tilde\psi_1,\tilde\psi_2,\ldots,\tilde\psi_n),\\ x_2=\omega_2(\tilde\psi_1,\tilde\psi_2,\ldots,\tilde\psi_n),\\ .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\quad .\\ x_{n-1}=\omega_{n-1}(\tilde\psi_1,\tilde\psi_2,\ldots,\tilde\psi_n),\\ u=\omega(\tilde\psi_1,\tilde\psi_2,\ldots,\tilde\psi_n).\end{cases} \tag{1.22}$$

- տեղադրել ստացված լուծումը (1.20)-ի մեջ և փոխարինել $\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \ldots, \tilde{\psi}_n$ ֆունկցիաները $\psi_1, \psi_2, \ldots, \psi_n$ ֆունկցիաներով՝

$$\omega(\psi_1, \psi_2, \ldots, \psi_n) = \varphi(\omega_1(\psi_1, \psi_2, \ldots, \psi_n), \omega_2(\psi_1, \psi_2, \ldots, \psi_n), \ldots, \omega_{n-1}(\psi_1, \psi_2, \ldots, \psi_n)) :$$

Ստացված հավասարմամբ կորոշվի Կոշիի խնդրի լուծումը անբացահայտ տեսքով:

Երկու փոփոխականի դեպքում պահանջվում է գտնել (1.17) հավասարման այն $z = z(x, y)$ լուծումը, որը բավարարում է

$$z(x_0, y) = \varphi(y) \tag{1.23}$$

պայմանին:

Լուծումը ստանալու համար (1.18) համակարգի (1.19) ինտեգրալներում տեղադրենք $x = x_0$ և նշանակենք ստացվածը $\tilde{\psi}_1,\ \tilde{\psi}_2$-ով՝

$$\begin{cases} \psi_1(x_0, y, z) = \tilde{\psi}_1, \\ \psi_2(x_0, y, z) = \tilde{\psi}_2, \end{cases}$$

որտեղից՝

$$\begin{cases} y = \omega_1(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2), \\ z = \omega(\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2) : \end{cases}$$

Կոշիի խնդրի լուծումը, հաշվի առնելով (1.23)-ը, կլինի՝ $\omega(\psi_1, \psi_2) = \varphi(\omega_1(\psi_1, \psi_2)) :$

Օրինակ 1.4: Լուծել

$$x\frac{\partial u}{\partial x} + y\frac{\partial u}{\partial y} + z\frac{\partial u}{\partial z} = u \tag{1.24}$$

հավասարումը և առանձնացնել այն լուծումը, որը բավարարում է

$$u(2, y, z) = \frac{1}{2}(y + z) \tag{1.25}$$

պայմանին:

Լուծում: Փնտրելով (1.24) հավասարման ընդհանուր լուծումը

$$V(x, y, z, u) = 0 \tag{1.26}$$

անբացահայտ տեսքով, V ֆունկցիայի նկատմամբ կստացվի

$$x\frac{\partial V}{\partial x} + y\frac{\partial V}{\partial y} + z\frac{\partial V}{\partial z} + u\frac{\partial V}{\partial u} = 0 \tag{1.27}$$

հավասարումը: Սովորական դիֆերենցիալ հավասարումների համակատասխան համակարգն է՝

$$\frac{dx}{x} = \frac{dy}{y} = \frac{dz}{z} = \frac{du}{u}, \tag{1.28}$$

որի երեք գծորեն անկախ ինտեգրալներն են (երբ $x \neq 0$)

$$\psi_1 = \frac{y}{x}, \qquad \psi_2 = \frac{z}{x}, \qquad \psi_3 = \frac{u}{x} : \tag{1.29}$$

(1.27) հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$V = F\Big(\frac{y}{x}, \frac{z}{x}, \frac{u}{x}\Big),$$

որտեղ F-ը կամայական դիֆերենցելի ֆունկցիա է: Համաձայն (1.26)-ի՝ (1.24) հավասարման ընդհանուր լուծումը անբացահայտ տեսքով կլինի՝

$$F\Big(\frac{y}{x}, \frac{z}{x}, \frac{u}{x}\Big) = 0,$$

իսկ բացահայտ տեսքով՝

$$u = xf\Big(\frac{y}{x}, \frac{z}{x}\Big), \tag{1.30}$$

որտեղ f-ը կամայական դիֆերենցելի ֆունկցիա է:

Այժմ գտնենք այն լուծումը, որը բավարարում է (1.25) պայմանին: Տեղադրենք (1.29) ինտեգրալներում $x = 2$ և նշանակենք

$$\tilde{\psi}_1 = \frac{y}{2}, \qquad \tilde{\psi}_2 = \frac{z}{2}, \qquad \tilde{\psi}_3 = \frac{u}{2},$$

որտեղից՝

$$y = 2\tilde{\psi}_1, \quad z = 2\tilde{\psi}_2, \quad u = 2\tilde{\psi}_3 : \tag{1.31}$$

Տեղադրենք (1.31)-ը (1.25)-ի մեջ և $\tilde{\psi}_1, \tilde{\psi}_2, \tilde{\psi}_3$-ը փոխարինենք ψ_1, ψ_2, ψ_3-ով, կստանանք

$$2\psi_3 = \frac{1}{2}(2\psi_1 + 2\psi_2)$$

կամ

$$2\,\frac{u}{x} = \frac{1}{2}\Big(2\,\frac{y}{x} + 2\,\frac{z}{x}\Big),$$

որտեղից՝ $u = \dfrac{y+z}{2}$:

Պատասխան՝ $F\Big(\dfrac{y}{x}, \dfrac{z}{x}, \dfrac{u}{x}\Big) = 0$ կամ $u = xf\Big(\dfrac{y}{x}, \dfrac{z}{x}\Big), \quad u = \dfrac{y+z}{2}$:

Խնդիրներ

Լուծել հավասարումը.

52. $(x^2+y^2)\,\dfrac{\partial z}{\partial x}+2xy\,\dfrac{\partial z}{\partial y}=0$:

53. $\dfrac{\partial u}{\partial x}-(y+2z)\,\dfrac{\partial u}{\partial y}+(3y+4z)\dfrac{\partial u}{\partial z}=0$:

54. $\dfrac{\partial z}{\partial x}+(2y-z)\,\dfrac{\partial z}{\partial y}=y+2z$:

55. $x\,\dfrac{\partial z}{\partial x}+y\,\dfrac{\partial z}{\partial y}=z$:

56. $\sin x\,\dfrac{\partial z}{\partial x}+\sin y\,\dfrac{\partial z}{\partial y}=\sin z$:

57. $yz\,\dfrac{\partial z}{\partial x}+xz\,\dfrac{\partial z}{\partial y}=xy$:

58. $y\,\dfrac{\partial z}{\partial x}=z$:

59. $\sqrt{x}\,\dfrac{\partial z}{\partial x}+\sqrt{y}\,\dfrac{\partial z}{\partial y}=\dfrac{1}{2}$:

Լուծել հավասարումը և առանձնացնել այն լուծումը, որը բավարարում է նշված պայմանին.

60. $x\,\dfrac{\partial u}{\partial x}+yz\,\dfrac{\partial u}{\partial z}=0,\quad u=x^y,$ երբ $z=1$:

61. $(z-y)^2\,\dfrac{\partial u}{\partial x}+z\,\dfrac{\partial u}{\partial y}+y\,\dfrac{\partial u}{\partial z}=0,\quad u=2y(y-z),$ երբ $x=0$:

62. $(1+x^2)\,\dfrac{\partial z}{\partial x}+xy\,\dfrac{\partial z}{\partial y}=0,\quad z=y^2,$ երբ $x=0$:

63. $y\,\dfrac{\partial u}{\partial x}+z\,\dfrac{\partial u}{\partial z}=0,\quad u=\ln z-\dfrac{1}{y},$ երբ $x=1$:

64. $yz\,\dfrac{\partial z}{\partial x}+x\,\dfrac{\partial z}{\partial y}=0,\quad z=x^2,$ երբ $y=1$:

65. $x\,\dfrac{\partial z}{\partial x}=z,\quad z=z(x,y),\quad z=y,$ երբ $x=1$:

66. $x\,\dfrac{\partial u}{\partial x}-y\,\dfrac{\partial u}{\partial y}+z\,\dfrac{\partial u}{\partial z}=u,\quad u=y+z,$ երբ $x=1$:

67. $x\,\dfrac{\partial z}{\partial x}+z\,\dfrac{\partial z}{\partial y}=0,\quad z=-y,,$ երբ $x=1$:

68. $x\,\dfrac{\partial z}{\partial x}+y\,\dfrac{\partial z}{\partial y}=2z,\quad z=y,$ երբ $x=1$:

Գլուխ 2
Երկրորդ կարգի հավասարումների դասակարգումը և կանոնական տեսքը

§ 1. Երկու անկախ փոփոխականների դեպքը

Դիտարկենք

$$a(x,y)u_{xx} + 2b(x,y)u_{xy} + c(x,y)u_{yy} + F(x,y,u,u_x,u_y) = 0, \tag{2.1}$$

հավասարումը, որտեղ $u(x,y)$ անհայտ Ֆունկցիան է, $(x,y) \in \Omega \subseteq \mathrm{R}^2$: Դիցուք $a(x,y)$, $b(x,y)$, $c(x,y)$ գործակիցներն անընդհատ են և Ω -ի ոչ մի կետում միաժամանակ զրո չեն դառնում: Այդ հավասարումը դասակարգվում է ըստ

$$D(x,y) = (b(x,y))^2 - a(x,y) \cdot c(x,y)$$

դիսկրիմինանտի նշանի: Այսպես, հավասարումը $(x,y) \in \Omega$ կետում կոչվում է

- հիպերբոլական տիպի, եթե $D(x,y) > 0$,
- պարաբոլական տիպի, եթե $D(x,y) = 0$,
- էլիպտական տիպի, եթե $D(x,y) < 0$:

Եթե հավասարումը հիպերբոլական (պարաբոլական, էլիպտական) տիպի է $E \subseteq \Omega$ բազմության բոլոր կետերում, ապա այն կոչվում է հիպերբոլական (պարաբոլական, էլիպտական) տիպի E բազմությունում:

Կատարենք փոփոխականների փոխարինում: (x,y) փոփոխականների փոխարեն ներմուծենք նոր՝ (ξ,η) անկախ փոփոխականներ

$$\xi = \varphi(x,y), \qquad \eta = \psi(x,y)$$

բանաձևերով, որտեղ $\varphi, \psi \in C^2(\Omega)$, և

$$\begin{vmatrix} \varphi_x & \varphi_y \\ \psi_x & \psi_y \end{vmatrix} = \varphi_x\psi_y - \varphi_y\psi_x \neq 0 : \tag{2.2}$$

Ածանցյալները ձևափոխվում են

$$\begin{aligned}
&u_x = u_\xi \xi_x + u_\eta \eta_x, \\
&u_y = u_\xi \xi_y + u_\eta \eta_y, \\
&u_{xx} = u_{\xi\xi}\xi_x^2 + 2u_{\xi\eta}\xi_x\eta_x + u_{\eta\eta}\eta_x^2 + u_\xi \xi_{xx} + u_\eta \eta_{xx},
\end{aligned}$$

$$u_{xy} = u_{\xi\xi}\xi_x\xi_y + u_{\xi\eta}(\xi_x\eta_y + \xi_y\eta_x) + u_{\eta\eta}\eta_x\eta_y + u_\xi\xi_{xy} + u_\eta\eta_{xy},$$
$$u_{yy} = u_{\xi\xi}\xi_y^2 + 2u_{\xi\eta}\xi_y\eta_y + u_{\eta\eta}\eta_y^2 + u_\xi\xi_{yy} + u_\eta\eta_{yy}$$

բանաձևերով: Տեղադրելով (2.1) հավասարման մեջ՝ նոր փոփոխականներով հավասարումը կընդունի

$$A(\xi,\eta)u_{\xi\xi} + 2B(\xi,\eta)u_{\xi\eta} + C(\xi,\eta)u_{\eta\eta} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0 \tag{2.3}$$

տեսքը, որտեղ՝

$$A(\xi,\eta) = a(x,y)\xi_x^2 + 2b(x,y)\xi_x\xi_y + c(x,y)\xi_y^2,$$
$$C(\xi,\eta) = a(x,y)\eta_x^2 + 2b(x,y)\eta_x\eta_y + c(x,y)\eta_y^2,$$
$$B(\xi,\eta) = a(x,y)\xi_x\eta_x + 2b(x,y)(\xi_x\eta_y + \xi_y\eta_x) + c(x,y)\xi_y\eta_y :$$

Անմիջական տեղադրումով կարելի է ցույց տալ, որ

$$B^2 - AC = (b^2 - ac)(\xi_x\eta_y - \xi_y\eta_x)^2,$$

իսկ դա նշանակում է, որ փոփոխականների փոխարինում կատարելիս հավասարման տիպը չի փոխվում (ինվարիանտ է ձևափոխության նկատմամբ):

Կասենք, որ (2.3) հավասարումն ունի կանոնական տեսք, եթե այն ունի՝

- հիպերբոլական տիպի դեպքում

$$u_{\xi\eta} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0 \quad \text{կամ} \quad u_{\xi\xi} - u_{\eta\eta} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0$$

  տեսքը,

- պարաբոլական տիպի դեպքում

$$u_{\xi\xi} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0 \quad \text{կամ} \quad u_{\eta\eta} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0$$

  տեսքը,

- էլիպտական տիպի դեպքում

$$u_{\xi\xi} + u_{\eta\eta} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0$$

  տեսքը:

Դիտարկենք

$$a(x,y)(dy)^2 - 2b(x,y)dxdy + c(x,y)(dx)^2 = 0 \tag{2.4}$$

սովորական դիֆերենցիալ հավասարումը, որը կոչվում է (2.1) հավասարման բնութագրիչների (կամ բնութագրիչ) հավասարում: (2.1) հավասարումը կանոնական տեսքի բերելու համար պետք է կազմել (2.4) բնութագրիչ հավասարումը, որը տրոհվում է երկու հավասարումների՝

$$y - \left(b + \sqrt{b^2 - ac}\right) dx = 0, \tag{2.5}$$

$$y - \left(b - \sqrt{b^2 - ac}\right) dx = 0 : \tag{2.6}$$

Այնուհետև պետք է գտնել սրանց ընդհանուր ինտեգրալները և ըստ դրա որոշել փոփոխականների այնպիսի փոխարինում, որով հավասարումը կբերվի կանոնական տեսքի: Քննարկենք դեպքերից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

ա) Հ ի պ ե ր բ ո լ ա կ ա ն տ ի պ ի հ ա վ ա ս ա ր ու մ ն ե ր՝ $b^2 - ac > 0$:
Այս դեպքում (2.5) և (2.6) հավասարումների ընդհանուր ինտեգրալներն իրական են և միմյանցից տարբեր՝ $\varphi(x,y) = c$ և $\psi(x,y) = c$: Օգտագործելով այս ինտեգրալները, ներմուծենք նոր (ξ,η) փոփոխականներ $\xi = \varphi(x,y)$ և $\eta = \psi(x,y)$ բանաձևերով: Այդպես վարվելով կստանանք՝ $A(\xi,\eta) = 0$, $C(\xi,\eta) = 0$, և հավասարումը կբերվի կանոնական տեսքի՝

$$u_{\xi\eta} + \tilde{F}(\xi,\eta,u,u_\xi,u_\eta) = 0 : \tag{2.7}$$

Եթե կատարենք փոփոխականների

$$\alpha = \frac{\xi+\eta}{2}, \qquad \beta = \frac{\xi-\eta}{2}$$

փոխարինում, ապա՝

$$u_\xi = \frac{1}{2}(u_\alpha + u_\beta), \quad u_\eta = \frac{1}{2}(u_\alpha - u_\beta), \quad u_{\xi\eta} = \frac{1}{4}(u_{\alpha\alpha} - u_{\beta\beta}),$$

և տեղադրելով (2.7)-ի մեջ, կստանանք՝

$$u_{\alpha\alpha} - u_{\beta\beta} + \tilde{F}_1(\alpha,\beta,u,u_\alpha,u_\beta) = 0 :$$

Այն կոչվում է հիպերբոլական տիպի հավասարման երկրորդ կանոնական տեսք:

բ) Պ ա ր ա բ ո լ ա կ ա ն տ ի պ ի հ ա վ ա ս ա ր ու մ ն ե ր՝ $b^2 - ac = 0$:
Այս դեպքում (2.5) և (2.6) հավասարումները համընկնում են, և կունենանք միայն մեկ ընդհանուր ինտեգրալ՝ $\varphi(x,y) = c$: Կատարենք

$$\xi = \varphi(x,y), \quad \eta = \psi(x,y) \tag{2.8}$$

փոփոխականների փոխարինումը, որտեղ $\psi(x,y)$-ը երկու անգամ անընդհատ դիֆերենցելի այնպիսի ֆունկցիա է, որ տեղի ունի (2.2) պայմանը (սովորաբար ընդունվում է $\psi(x,y) = x$, եթե $\varphi_y \neq 0$ կամ $\psi(x,y) = y$, եթե $\varphi_x \neq 0$): Այս դեպքում հավասարումը բերվում է

$$u_{\eta\eta} + \tilde{F}(\xi, \eta, u, u_\xi, u_\eta) = 0$$

կանոնական տեսքի:

գ) Է լ ի պ տ ա կ ա ն տ ի պ ի հ ա վ ա ս ա ր ու մ ն ե ր՝ $b^2 - ac < 0$:
Այս դեպքում (2.5) և (2.6) հավասարումների ընդհանուր ինտեգրալները կոմպլեքս համալուծ են՝

$$\varphi(x, y) + i\psi(x, y) = c,$$
$$\varphi(x, y) - i\psi(x, y) = c:$$

Եթե ընդհանուր ինտեգրալներից մեկի իրական մասը վերցնենք որպես ξ, իսկ կեղծ մասը որպես η՝

$$\xi = \varphi(x, y), \quad \eta = \psi(x, y),$$

ապա հավասարումը կբերվի

$$u_{\xi\xi} + u_{\eta\eta} + \tilde{F}(\xi, \eta, u, u_\xi, u_\eta) = 0$$

կանոնական տեսքի:

Այն դեպքում, երբ հավասարման գործակիցները հաստատուններ են, կանոնական տեսքի բերելուց հետո կարելի է կատարել հետագա պարզեցումներ: Այսպես, եթե փնտրենք անհայտ ֆունկցիան

$$u(\xi, \eta) = e^{\lambda\xi + \mu\eta} w(\xi, \eta)$$

տեսքով, ապա նոր՝ $w(\xi, \eta)$ ֆունկցիայի նկատմամբ հավասարումը նորից կունենա կանոնական տեսք: Բացի դրանից, համապատասխան ձևով ընտրելով λ և μ պարամետրերը, կարելի է հանգել հավասարման, որի մեջ բացակայեն առաջին կարգի ածանցյալները, եթե հավասարումն էլիպտական կամ հիպերբոլական տիպի է, կամ որոնելի ֆունկցիան ու առաջին կարգի ածանցյալներից որևէ մեկը, եթե հավասարումը պարաբոլական տիպի է:

Երբեմն կանոնական տեսքի բերելուց հետո հավասարումը հնարավոր է լինում տրոհել սովորական դիֆերենցիալ հավասարումների: Դա նշանակում է, որ բնութագրիչ կորերի վրա մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարումը վեր է ածվում սովորական դիֆերենցիալ հավասարման: Այդ սովորական դիֆերենցիալ հավասարման լուծումները գտնելուց հետո և վերադառնալով հին փոփոխականներին՝ կստանանք մասնական ածանցյալներով դիֆերենցիալ հավասարման ընդհանուր լուծումը: Ընդհանուր լուծումը գտնելու այդ ձևը կոչվում է բնութագրիչների մեթոդ:

Օրինակ 2.1: Բերել կանոնական տեսքի.

$$2u_{xx}+3u_{xy}+u_{yy}+7u_x+4u_y-2u=0 :$$

Լուծում: $D=1/4>0$, հետևաբար հավասարումը հիպերբոլական տիպի է: Գտնենք $2(dy)^2-3dxdy+(dx)^2=0$ բնութագրիչ հավասարման ընդհանուր ինտեգրալները՝

$$\left[\begin{array}{l} 2dy=dx, \\ dy=dx, \end{array}\right. \Rightarrow \left[\begin{array}{l} 2y-x=c, \\ y-x=c : \end{array}\right.$$

Վերցնենք $\xi=2y-x, \quad \eta=y-x$: Ունենք

$$u_x=u_\xi\xi_x+u_\eta\eta_x=-u_\xi-u_\eta,$$

$$u_y=u_\xi\xi_y+u_\eta\eta_y=2u_\xi+u_\eta,$$

$$u_{xx}=(-u_\xi-u_\eta)_x=-(u_{\xi\xi}\xi_x+u_{\xi\eta}\eta_x)-(u_{\eta\xi}\xi_x+u_{\eta\eta}\eta_x)=u_{\xi\xi}+2u_{\xi\eta}+u_{\eta\eta},$$

$$u_{xy}=(-u_\xi-u_\eta)_y=-(u_{\xi\xi}\xi_y+u_{\xi\eta}\eta_y)-(u_{\eta\xi}\xi_y+u_{\eta\eta}\eta_y)=-2u_{\xi\xi}-3u_{\xi\eta}-u_{\eta\eta},$$

$$u_{yy}=(2u_\xi+u_\eta)_y=2(u_{\xi\xi}\xi_y+u_{\xi\eta}\eta_y)+(u_{\eta\xi}\xi_y+u_{\eta\eta}\eta_y)=4u_{\xi\xi}+4u_{\xi\eta}+u_{\eta\eta} :$$

Տեղադրելով հավասարման մեջ՝

$$2(u_{\xi\xi}+2u_{\xi\eta}+u_{\eta\eta})+3(-2u_{\xi\xi}-3u_{\xi\eta}-u_{\eta\eta})+4u_{\xi\xi}+4u_{\xi\eta}+u_{\eta\eta}+ \\ +7(-u_\xi-u_\eta)+4(2u_\xi+u_\eta)-2u=0,$$

և կատարելով նման անդամների միացում՝ կստանանք կանոնական տեսքը:

Պատասխան՝ $u_{\xi\eta}-u_\xi+3u_\eta+2u=0, \qquad \xi=2y-x, \quad \eta=y-x :$

Օրինակ 2.2: Բերել կանոնական տեսքի.

$$9u_{xx}-6u_{xy}+u_{yy}+10u_x-15u_y-50u+x-2y=0 :$$

Լուծում: $D=9-9=0$: Հավասարումը պարաբոլական տիպի է: Բնութագրիչ $9(dy)^2+6dxdy+(dx)^2=0$ հավասարման ընդհանուր ինտեգրալն է՝ $3y-x=c$: Վերցնենք

$$\begin{cases} \xi=3y+x, \\ \eta=x : \end{cases} \Rightarrow \begin{cases} \xi_x=1,\ \xi_y=3, \\ \eta_x=1,\ \eta_y=0 : \end{cases} \qquad J=\begin{vmatrix} \xi_x & \xi_y \\ \eta_x & \eta_y \end{vmatrix}=\begin{vmatrix} 1 & 3 \\ 1 & 0 \end{vmatrix}=-3\neq 0 :$$

Ունենք

$$u_x=u_\xi\xi_x+u_\eta\eta_x=u_\xi+u_\eta,$$

$$u_y=u_\xi\xi_y+u_\eta\eta_y=3u_\xi,$$

$$u_{xx} = (u_\xi + u_\eta)_x = (u_{\xi\xi}\xi_x + u_{\xi\eta}\eta_x) + (u_{\xi\eta}\xi_x + u_{\eta\eta}\eta_x) = u_{\xi\xi} + 2u_{\xi\eta} + u_{\eta\eta},$$

$$u_{xy} = (3u_\xi)_x = 3(u_{\xi\xi}\xi_x + u_{\xi\eta}\eta_x) = 3u_{\xi\xi} + 3u_{\xi\eta},$$

$$u_{yy} = (3u_\xi)_y = 3(u_{\xi\xi}\xi_y + u_{\xi\eta}\eta_y) = 9u_{\xi\xi} :$$

Տեղադրելով ստացված ածանցյալները հավասարման մեջ՝

$$9(u_{\xi\xi} + 2u_{\xi\eta} + u_{\eta\eta}) - 6(3u_{\xi\xi} + 3u_{\xi\eta}) + 9u_{\xi\xi} + 10(u_\xi + u_\eta) - 15 \cdot 3u_\xi - 50u + x - 2y = 0,$$

և հաշվի առնելով, որ $x = \eta$, $y = (\xi - \eta)/3$, կստանանք կանոնական տեսքը:

Պատասխան՝ $u_{\eta\eta} - \dfrac{35}{9}u_\xi + \dfrac{10}{9}u_\eta - \dfrac{50}{9}u + \dfrac{5\eta - 2\xi}{27} = 0, \qquad \xi = 3y + x, \quad \eta = x :$

Օրինակ 2.3: Բերել կանոնական տեսքի.

$$(1 + x^2)u_{xx} + (1 + y^2)u_{yy} + xu_x + yu_y - 2u = 0 :$$

Լուծում: Բնութագրիչ հավասարումն է՝ $(1 + x^2)(dy)^2 + (1 + y^2)(dx)^2 = 0$: Քանի որ

$$D = 0 - (1 + x^2)(1 + y^2) < 0,$$

ապա հավասարումն էլիպտական տիպի է R^2-ում: Գտնենք բնութագրիչ հավասարման ընդհանուր ինտեգրալը: Ունենք

$$(1 + x^2)(dy)^2 = -(1 + y^2)(dx)^2$$

կամ

$$\frac{dy}{\sqrt{1 + y^2}} = \pm i \frac{dx}{\sqrt{1 + x^2}} :$$

Ինտեգրենք աջ և ձախ մասերը՝

$$\ln(y + \sqrt{1 + y^2}) \pm i \cdot \ln(x + \sqrt{1 + x^2}) = c :$$

Կատարենք փոփոխականների փոխարինում՝

$$\begin{cases} \xi = \ln(y + \sqrt{1 + y^2}), \\ \eta = \ln(x + \sqrt{1 + x^2}), \end{cases} \Rightarrow \begin{cases} \xi_x = 0, & \xi_y = \dfrac{1}{\sqrt{1 + y^2}}, \\ \eta_x = \dfrac{1}{\sqrt{1 + x^2}}, & \eta_y = 0 : \end{cases}$$

Հաշվենք ածանցյալները.

$$u_x = u_\xi\xi_x + u_\eta\eta_x = \frac{1}{\sqrt{1 + x^2}}\,u_\eta, \qquad u_y = u_\xi\xi_y + u_\eta\eta_y = \frac{1}{\sqrt{1 + y^2}}\,u_\xi,$$

$$u_{xx}=\left(\frac{1}{\sqrt{1+x^2}}\,u_\eta\right)_x=\left(\frac{1}{\sqrt{1+x^2}}\right)'u_\eta+\frac{1}{\sqrt{1+x^2}}\,(u_\eta)_x=$$

$$=-\frac{x}{\sqrt{(1+x^2)^3}}\,u_\eta+\frac{1}{\sqrt{1+x^2}}\,(u_{\xi\xi}\xi_x+u_{\eta\eta}\eta_x)=$$

$$=\frac{1}{1+x^2}\,u_{\eta\eta}-\frac{x}{\sqrt{(1+x^2)^3}}\,u_\eta,$$

$$u_{yy}=\left(\frac{1}{\sqrt{1+y^2}}\,u_\xi\right)_y=\frac{1}{1+y^2}\,u_{\xi\xi}-\frac{y}{\sqrt{(1+y^2)^3}}\,u_\xi\ :$$

Տեղադրենք հավասարման մեջ՝

$$u_{\eta\eta}+u_{\xi\xi}-\frac{x}{\sqrt{1+x^2}}\,u_\eta-\frac{y}{\sqrt{1+y^2}}\,u_\xi+x\frac{1}{\sqrt{1+x^2}}\,u_\eta+y\frac{1}{\sqrt{1+y^2}}\,u_\xi-2u=0\ :$$

Պատասխան՝ $u_{\xi\xi}+u_{\eta\eta}-2u=0,\qquad \xi=\ln(x+\sqrt{1+x^2}),\quad \eta=\ln(y+\sqrt{1+y^2})$:

Օրինակ 2.4: Բերել կանոնական տեսքի.

$$xu_{xx}+yu_{yy}+2u_x+2u_y=0\ :$$

Լուծում: Բնութագրիչ հավասարումն է՝ $x(dy)^2+y(dx)^2=0$: $D=-xy$:
ա) Պարաբոլական տիպի է, երբ $x=0,\ y\neq 0,$ կանոնական տեսքը՝

$$u_{yy}+\frac{2}{y}(u_x+u_y)=0,$$

և երբ $y=0,\ x\neq 0,$ կանոնական տեսքը՝

$$u_{xx}+\frac{2}{x}(u_x+u_y)=0\ :$$

բ) Հիպերբոլական տիպի է, երբ $x>0,\ y<0$ (IV քառորդ), և երբ $x<0,\ y>0$ (II քառորդ): Ստանանք կանոնական տեսքը, երբ $x>0,\ y<0$: Բնութագրիչ հավասարումից՝

$$\left[\begin{array}{l} xdy=-\sqrt{-xy}\ dx,\\ xdy=\ \sqrt{-xy}\ dx, \end{array}\right.\qquad\Rightarrow\qquad \left[\begin{array}{l} \dfrac{dy}{\sqrt{-y}}=\dfrac{-\sqrt{x}dx}{\sqrt{x}},\\ \dfrac{dy}{\sqrt{-y}}=\dfrac{\sqrt{x}dx}{\sqrt{x}}\ : \end{array}\right.$$

Ինտեգրենք՝

$$\left[\begin{array}{l} -2\sqrt{-y} = -2\sqrt{x} + c, \\ -2\sqrt{-y} = 2\sqrt{x} + c, \end{array}\right. \quad \Rightarrow \quad \left[\begin{array}{l} \sqrt{-y} - \sqrt{x} = c, \\ \sqrt{-y} + \sqrt{x} = c : \end{array}\right.$$

Վերցնենք

$$\begin{cases} \xi = \sqrt{-y} - \sqrt{x}, \\ \eta = \sqrt{-y} + \sqrt{x} : \end{cases} \Rightarrow \begin{cases} x = (\eta - \xi)^2, \\ y = -(\eta + \xi)^2 : \end{cases} \Rightarrow \begin{cases} \xi_x = -\dfrac{1}{2\sqrt{x}}, \ \xi_y = -\dfrac{1}{2\sqrt{-y}}, \\ \eta_x = \dfrac{1}{2\sqrt{x}}, \ \eta_y = -\dfrac{1}{2\sqrt{-y}} : \end{cases}$$

Ունենք

$$u_x = u_\xi \xi_x + u_\eta \eta_x = \frac{1}{2\sqrt{x}}(u_\eta - u_\xi),$$

$$u_y = u_\xi \xi_y + u_\eta \eta_y = -\frac{1}{2\sqrt{-y}}(u_\eta + u_\xi),$$

$$u_{xx} = \frac{1}{4x\sqrt{x}}(u_\xi - u_\eta) + \frac{1}{4x}(u_{\xi\xi} - 2u_{\xi\eta} + u_{\eta\eta}),$$

$$u_{yy} = -\frac{1}{4y\sqrt{-y}}(u_\xi + u_\eta) - \frac{1}{4y}(u_{\xi\xi} + 2u_{\xi\eta} + u_{\eta\eta}) :$$

Տեղադրենք սրանք հավասարման մեջ.

$$\frac{1}{4\sqrt{x}}(u_\xi - u_\eta) + \frac{1}{4}(u_{\xi\xi} - 2u_{\xi\eta} + u_{\eta\eta}) - \frac{1}{4\sqrt{-y}}(u_\xi + u_\eta) - \frac{1}{4}(u_{\xi\xi} + 2u_{\xi\eta} + u_{\eta\eta}) +$$
$$+ \frac{1}{\sqrt{x}}(u_\eta - u_\xi) - \frac{1}{\sqrt{-y}}(u_\eta + u_\xi) = 0 :$$

Պարզեցնելով, կստանանք կանոնական տեսքը՝

$$u_{\xi\eta} + \frac{3}{\xi^2 - \eta^2}\left(\eta u_\xi - \xi u_\eta\right) = 0 :$$

$x < 0, \ y > 0$ դեպքում ստացվում է նույն կանոնական տեսքը, եթե կատարենք

$$\begin{cases} \xi = \sqrt{y} - \sqrt{-x}, \\ \eta = \sqrt{y} + \sqrt{-x} : \end{cases}$$

փոփոխականների փոխարինումը:

գ) Էլիպտական տիպի է, երբ $x > 0, \ y > 0$ (I քառորդ), և երբ $x < 0, \ y < 0$ (III քառորդ): Ստանանք կանոնական տեսքը, երբ $x > 0, \ y > 0$: Բնութագրիչ հավասարումն է՝

$$\sqrt{x}\ dy = \ \pm i\ \sqrt{y}\ dx \Rightarrow \frac{dy}{\sqrt{y}}\ =\ \pm i\ \frac{dx}{\sqrt{x}} :$$

Ինտեգրենք՝

$$2\sqrt{y} = \pm 2i\sqrt{x} + c \Rightarrow \sqrt{y} \pm i\sqrt{x} = c :$$

Կատարելով

$$\begin{cases} \xi = \sqrt{y}, \\ \eta = \sqrt{x} : \end{cases} \Rightarrow \begin{cases} y = \xi^2, \\ x = \eta^2 \end{cases}$$

փոփոխականների փոխարինում, ստանում ենք հետևյալ կանոնական տեսքը՝

$$u_{\xi\xi} + u_{\eta\eta} + 3\left(\frac{1}{\xi}u_\xi + \frac{1}{\eta}u_\eta\right) = 0 :$$

$x < 0,\ \ y < 0$ դեպքում ստացվում է նույն կանոնական տեսքը, եթե կատարենք

$$\begin{cases} \xi = \sqrt{-y}, \\ \eta = \sqrt{-x} : \end{cases}$$

փոփոխականների փոխարինումը:

Պատասխան՝

Պարաբոլական, երբ $x = 0,\ y \neq 0,\quad u_{yy} + \dfrac{2}{y}(u_x + u_y) = 0$, և երբ $x \neq 0,\ y = 0$,

$$u_{xx} + \frac{2}{x}(u_x + u_y) = 0:$$

Հիպերբոլական II, IV քառորդներում (երբ $xy < 0$),

$$u_{\xi\eta} + \frac{3}{\xi^2 - \eta^2}(\eta u_\xi - \xi u_\eta) = 0,$$

II քառորդում՝ $\xi = \sqrt{y} - \sqrt{-x},\ \ \eta = \sqrt{y} + \sqrt{-x},$

IV քառորդում՝ $\xi = \sqrt{-y} - \sqrt{x},\ \ \eta = \sqrt{-y} + \sqrt{x},$

Էլիպտական I, III քառորդներում (երբ $xy > 0$),

$$u_{\xi\xi} + u_{\eta\eta} + 3\left(\frac{1}{\xi}u_\xi + \frac{1}{\eta}u_\eta\right) = 0,$$

I քառորդում՝ $\xi = \sqrt{y},\ \eta = \sqrt{x},$

III քառորդում՝ $\xi = \sqrt{-y},\ \eta = \sqrt{-x} :$

Օրինակ 2.5: Բերել կանոնական տեսքի և կատարել հետագա պարզեցումներ.

$$2u_{xx}+2u_{xy}+u_{yy}+4u_x+4u_y+u=0:$$

Լուծում: $D=-1<0$, հետևաբար հավասարումն էլիպտական տիպի է: Բնութագրիչ հավասարումն է՝

$$2(dy)^2-2dxdy+(dx)^2=0 \quad \text{կամ} \quad 2dy=(1\pm i)\,dx,$$

որի ինտեգրալն է՝ $2y-x\pm ix=c$: Համապատասխան փոփոխականների փոխարինումը կլինի

$$\begin{cases}\xi=2y-x,\\ \eta=x:\end{cases} \quad \Rightarrow \quad \begin{cases}\xi_x=-1, \quad \xi_y=2,\\ \eta_x=1, \quad \eta_y=0:\end{cases}$$

Ածանցյալները կձևափոխվեն

$$u_x=u_\xi\xi_x+u_\eta\eta_x=-u_\xi+u_\eta, \qquad u_y=u_\xi\xi_y+u_\eta\eta_y=2u_\xi,$$

$$u_{xx}=(-u_\xi+u_\eta)_x=u_{\xi\xi}-2u_{\xi\eta}+u_{\eta\eta}, \quad u_{xy}=(-u_\xi+u_\eta)_y=-2u_{\xi\xi}+2u_{\xi\eta},$$

$$u_{yy}=(2u_\xi)_y=4u_{\xi\xi}$$

բանաձևերով: Տեղադրելով հավասարման մեջ՝

$$2(u_{\xi\xi}-2u_{\xi\eta}+u_{\eta\eta})+2(-2u_{\xi\xi}+2u_{\xi\eta})+4u_{\xi\xi}+4(-u_\xi+u_\eta)+4\cdot 2u_\xi+u=0,$$

կստանանք կանոնական տեսքը՝

$$u_{\xi\xi}+u_{\eta\eta}+2u_\xi+2u_\eta+\frac{1}{2}\,u=0: \tag{2.9}$$

Հետագա պարզեցումների համար կատարենք որոնելի ֆունկցիայի

$$u(\xi,\eta)=e^{\lambda\xi+\mu\eta}\,w(\xi,\eta)$$

փոխարինումը: Այդ դեպքում՝

$$u_\xi=(\lambda w+w_\xi)e^{\lambda\xi+\mu\eta}, \quad u_\eta=(\mu w+w_\eta)e^{\lambda\xi+\mu\eta},$$

$$u_{\xi\xi}=(\lambda^2w+2\lambda w_\xi+w_{\xi\xi})e^{\lambda\xi+\mu\eta}, \quad u_{\eta\eta}=(\mu^2w+2\mu w_\eta+w_{\eta\eta})e^{\lambda\xi+\mu\eta}:$$

Տեղադրելով (2.9) կանոնական տեսքի մեջ, կստանանք՝

$$(\lambda^2 w + 2\lambda w_\xi + w_{\xi\xi})e^{\lambda\xi+\mu\eta} + (\mu^2 w + 2\mu w_\eta + w_{\eta\eta})e^{\lambda\xi+\mu\eta} + 2(\lambda w + w_\xi)e^{\lambda\xi+\mu\eta} + \\ + 2(\mu w + w_\eta)e^{\lambda\xi+\mu\eta} + \frac{1}{2}e^{\lambda\xi+\mu\eta}w(\xi,\eta) = 0 :$$

Բաժանենք աջ և ձախ մասերը $e^{\lambda\xi+\mu\eta}$-ի և խմբավորենք՝

$$w_{\xi\xi} + w_{\eta\eta} + 2(\lambda+1)w_\xi + 2(\mu+1)w_\eta + (\lambda^2 + \mu^2 + 2\lambda + 2\mu + 1/2)w = 0 :$$

Ընտրենք λ և μ պարամետրերն այնպես, որ w_η-ի և w_ξ-ի գործակիցները դառնան զրո՝

$$\begin{cases} 2(\lambda+1) = 0, \\ 2(\mu+1) = 0 : \end{cases} \Rightarrow \begin{cases} \lambda = -1, \\ \mu = -1 : \end{cases}$$

Տեղադրելով, կստանանք այն կանոնական տեսքը, որը չի պարունակում առաջին կարգի ածանցյալներ:

Պատասխան՝ $w_{\xi\xi} + w_{\eta\eta} - \dfrac{3}{2}w = 0, \quad u(\xi,\eta) = w(\xi,\eta)e^{-\xi-\eta}, \quad \xi = 2y - x, \ \ \eta = x :$

Օրինակ 2.6: Բերել կանոնական տեսքի և կատարել հետագա պարզեցումներ.

$$u_{xy} + u_{xx} - u_y - 10u + 4x = 0 :$$

Լուծում: $D = 1/4 > 0$, հետևաբար հավասարումը հիպերբոլական տիպի է: Բնութագրիչ հավասարումն է՝

$$-dxdy + (dy)^2 = 0 \quad \text{կամ} \quad dy(dy - dx) = 0,$$

որտեղից՝

$$\left[\begin{array}{c} dy = 0, \\ dy - dx = 0 : \end{array}\right. \Rightarrow \left[\begin{array}{c} y = c, \\ y - x = c : \end{array}\right.$$

Վերցնենք

$$\begin{cases} \xi = y, \\ \eta = y - x : \end{cases} \Rightarrow \begin{cases} \xi_x = 0, \quad \xi_y = 1, \\ \eta_x = -1, \quad \eta_y = 1 : \end{cases}$$

Կունենանք՝

$$u_x = u_\xi \xi_x + u_\eta \eta_x = -u_\eta, \quad u_y = u_\xi \xi_y + u_\eta \eta_y = u_\xi + u_\eta,$$

$$u_{xx} = (-u_\eta)_x = u_{\eta\eta}, \quad u_{xy} = (-u_\eta)_y = -u_{\xi\eta} - u_{\eta\eta} :$$

Տեղադրելով հավասարման մեջ և հաշվի առնելով, որ $x = \xi - \eta$, կստանանք կանոնական տեսքը՝

$$u_{\xi\eta} + u_\xi + u_\eta + 10u - 4(\xi - \eta) = 0 : \tag{2.10}$$

Հետագա պարզեցումների համար կատարենք $u(\xi,\eta) = e^{\lambda\xi+\mu\eta}w(\xi,\eta)$ փոխարինումը: Հաշվենք ածանցյալները.

$$u_\xi = (\lambda w + w_\xi)e^{\lambda\xi+\mu\eta}, \quad u_\eta = (\mu w + w_\eta)e^{\lambda\xi+\mu\eta},$$

$$u_{\xi\eta} = (w_{\xi\eta} + \lambda w_\eta + \mu w_\xi + \mu\lambda w)e^{\lambda\xi+\mu\eta} :$$

Տեղադրենք (2.10) կանոնական տեսքի մեջ, բաժանենք $e^{\lambda\xi+\mu\eta}$-ի և խմբավորենք՝

$$w_{\xi\eta} + (\mu+1)w_\xi + (\lambda+1)w_\eta + (\mu\lambda + \lambda + \mu + 10)w - 4(\xi - \eta)e^{-(\lambda\xi+\mu\eta)} = 0 :$$

Եթե վերցնենք

$$\begin{cases} \lambda + 1 = 0, \\ \mu + 1 = 0, \end{cases} \Rightarrow \begin{cases} \lambda = -1, \\ \mu = -1, \end{cases}$$

կստանանք այն կանոնական տեսքը, որը չի պարունակում առաջին կարգի ածանցյալներ:

Պատասխան՝

$$w_{\xi\eta} + 9w + 4(\eta - \xi)e^{\xi+\eta} = 0, \quad u(\xi,\eta) = w(\xi,\eta)e^{-\xi-\eta}, \quad \xi = y, \quad \eta = y - x :$$

Օրինակ 2.7: Բերել կանոնական տեսքի և կատարել հետագա պարզեցումներ.

$$u_{xx} - 2u_{xy} + u_{yy} - 3u_x + 12u_y + 27u = 0 :$$

Լուծում: $D = 0$, հավասարումը պարաբոլական տիպի է: Բնութագրիչ հավասարումն է՝ $(dy)^2 + 2dxdy + (dx)^2 = 0$ կամ $(dy + dx)^2 = 0$: Ընդհանուր ինտեգրալն է՝ $y + x = c$:

Վերցնենք

$$\begin{cases} \xi = y + x, \\ \eta = x, \end{cases} \Rightarrow \begin{cases} \xi_x = 1, \quad \xi_y = 1, \\ \eta_x = 1, \quad \eta_y = 0 : \end{cases}$$

Հաշվենք ածանցյալները.

$$u_x = u_\xi\xi_x + u_\eta\eta_x = u_\xi + u_\eta, \qquad u_y = u_\xi\xi_y + u_\eta\eta_y = u_\xi,$$

Հիպերբոլական տիպի հավասարումներն առավել հաճախ հանդիպում են այնպիսի ֆիզիկական խնդիրներում, որոնք կապված են տատանողական պրոցեսների հետ: Դիտարկենք ֆիզիկական խնդիրների օրինակներ, որոնք բերվում են գծային հիպերբոլական տիպի հավասարումների: Կքննարկենք նաև սկզբնական և եզրային պայմանների դրվածքը:

1.1 Լարի լայնական տատանումների հավասարումը: Դիցուք ճկուն, առաձգական, $\rho(x)$ գծային խտություն ունեցող լարը ձգված է T_0 ճիգով: Ենթադրենք, որ հավասարակշռության վիճակում այն ընկած է Oxu կոորդինատային հարթության Ox առանցքի վրա: Լարի շարժումը բնութագրվում է $u(x,t)$ ֆունկցիայի միջոցով, որը ժամանակի t պահին լարի x աբսցիս ունեցող կետի օրդինատն է: $u(x,t)$ ֆունկցիան բավարարում է

$$\rho(x)\, u_{tt} - T_0\, u_{xx} = 0$$

հավասարմանը, որը կոչվում է լարի տատանման հավասարում:

Համասեռ խտության դեպքում, երբ $\rho = \text{const}$, հավասարումը կարելի է գրել

$$u_{tt} - a^2 u_{xx} = 0, \qquad a = \sqrt{T_0/\rho}$$

տեսքով:

Եթե լարի x աբսցիս ունեցող կետում ժամանակի t պահին ազդում է $F(x,t)$ խտությամբ ուժ, ապա նրա շարժումը նկարագրվում է անհամասեռ հավասարմամբ՝

$$u_{tt} - a^2 u_{xx} = f(x,t), \qquad f(x,t) = \frac{F(x,t)}{\rho}\ :$$

Դիցուք լարը գտնվում է մի միջավայրում, որը դիմադրում է նրա շարժմանը: Կարելի է ընդունել, որ $F_դ$ դիմադրության ուժը համեմատական է լարի կետերի արագությանը ($F_դ = k u_t,\ k > 0$): Այդ դեպքում լարի շարժումը նկարագրող հավասարումը կընդունի հետևյալ տեսքը՝

$$u_{tt} + b\, u_t - a^2 u_{xx} = f(x,t), \qquad b = \frac{k}{\rho}\ :$$

Դիֆերենցիալ հավասարումներն ունեն անթիվ քանակությամբ լուծումներ: Պրոցեսը միարժեք նկարագրելու համար դիֆերենցիալ հավասարմանը պետք է կցել որոշ լրացուցիչ պայմաններ: Ժամանակի ցանկացած պահին լարի կետերի դիրքը, կամ որ նույնն է՝ $u(x,t)$ ֆունկցիան որոշելու համար անհրաժեշտ է ունենալ ամեն մի կետի դիրքը և արագությունը ժամանակի ինչ-որ t_0 պահին: Սովորաբար այդ պահը անվանում են սկզբնական և վերցնում են $t_0 = 0$: Դա նշանակում է, որ $u(x,t)$ ֆունկցիան պետք է բավարարի

$$u(x,0) = \varphi(x), \qquad u_t(x,0) = \psi(x)$$

պայմաններին, որտեղ $\varphi(x)$ և $\psi(x)$-ը տրված ֆունկցիաներ են: Այդ պայմանները կոչվում են սկզբնական կամ Կոշիի պայմաններ: Եթե φ կամ ψ ֆունկցիաներից որևէ մեկը նույնաբար զրո է, ապա համապատասխան սկզբնական պայմանը կոչվում է համասեռ, հակառակ դեպքում՝ անհամասեռ:

Անվերջ լարի դեպքում միայն սկզբնական պայմաններով լարի դիրքը միարժեք որոշվում է: Կիսաանվերջ կամ վերջավոր լարի դեպքում միայն սկզբնական պայմաները բավարար չեն: Անհրաժեշտ է տալ որոշակի պայմաններ նաև լարի ծայրերում: Դրանք կոչվում են եզրային պայմաններ: Օրինակ, վերջավոր լարի դեպքում ($0 \leqslant x \leqslant \ell$), երբ ծայրերը ամրացված են, եզրային պայմանները կունենան

$$u(0,t) = 0, \qquad u(\ell,t) = 0$$

տեսքը: Եթե լարի ծայրերը շարժվում են ինչ-որ օրենքով, ապա եզրային պայմանները կընդունեն հետևյալ տեսքը՝

$$u(0,t) = \mu(t), \qquad u(\ell,t) = \nu(t),$$

որտեղ $\mu(t)$-ն և $\nu(t)$-ն տրված ֆունկցիաներ են՝ կախված t ժամանակից (նկ. 1):



Նկ. 1 Լարի ծայրերը շարժվում են տրված օրենքով:

Հնարավոր են նաև ուրիշ տիպի եզրային պայմաններ: Օրինակ, երբ լարի $x = \ell$ ծայրը ազատ է (բացակայում է արտաքին ուժը), ապա կունենանք

$$u_x(\ell, t) = 0$$

եզրային պայմանը (նկ. 2):



Նկ. 2 Լարի ձախ ծայրը ամրացված է, իսկ աջ ծայրը՝ ազատ: Լարի աջ ծայրում սռնի է, որը շարժվում է առանց շփման:

Եթե լարի $x = 0$ ծայրը շարժվում է $\mu(t)$ օրենքով, իսկ $x = \ell$ ծայրում ազդում է $\theta(t)$ ուժը, ապա կունենանք

$$u(0, t) = \mu(t), \qquad u_x(\ell, t) = \theta(t)$$

եզրային պայմանները:

Դիցուք լարի ծայրերից մեկը, օրինակ $x = \ell$, ամրացված է առաձգական զսպանակի: Այդ դեպքում եզրային պայմանն ընդունում է հետևյալ տեսքը՝

$$u_x(\ell, t) = -hu(\ell, t),$$

որտեղ h-ը զսպանակի կոշտությունը բնութագրող հաստատուն է՝ առաձգականության գործակիցը:

Եթե լարի ծայրերը ամրացված են առաձգական զսպանակների (նկ. 3) և շարժվում են տրված օրենքով, ապա եզրային պայմանները կլինեն՝

$$u_x(0, t) = h_1(u(0, t) - \chi_1(t)), \qquad u_x(\ell, t) = -h_2(u(\ell, t) - \chi_2(t)) :$$



Նկ. 3 Առաձգական ամրացում. h_1, h_2-ը զսպանակների առաձգականության գործակիցներն են:

Այսպիսով, $x = 0$ ծայրում հիմնական եզրային պայմանները հետևյալ երեքն են՝

- առաջին տիպի՝ $u(0,t) = \mu(t)$ (տրված է շարժման օրենքը),
- երկրորդ տիպի՝ $u_x(0,t) = \theta(t)$ (տրված է ազդող ուժը),
- երրորդ տիպի՝ $u_x(0,t) = h(u(0,t) - \chi(t))$ (առաձգական ամրացում):

Նմանատիպ եզրային պայմաններ կարող են դրվել նաև $x = \ell$ ծայրում:

Եթե աջ մասում գրված $\mu(t)$, $\nu(t)$ կամ $\chi(t)$ ֆունկցիաներից որևէ մեկը զրո է, ապա համապատասխան եզրային պայմանը կոչվում է համասեռ, հակառակ դեպքում՝ անհամասեռ:

1.2 Ձողի երկայնական տատանումների հավասարումը: Ձողը հաստատուն լայնական կտրվածք ունեցող առաձգական գլանային մարմին է: $Oxyz$ կոորդինատային համակարգն ընտրենք այնպես, որ Ox աբսցիսների առանցքը ուղղվի ձողի երկայնքով: Երկայնական տատանումների դեպքում ձողի լայնական հատույթի բոլոր կետերը տեղափոխվում են Ox առանցքի ուղղությամբ և ունեն նույն աբսցիսը, որը կանվանենք հատույթի կոորդինատ: Դիցուք այն հատույթը, որը ձողի հավասարակշռության վիճակում ուներ x կոորդինատը, ժամանակի t պահին ունի $v(x,t)$ կոորդինատը: Երկայնական տատանումները նկարագրվում են $u(x,t) = v(x,t) - x$ ֆունկցիայի միջոցով: Այն բավարարում է

$$(E(x)u_x)_x - \rho(x)\, u_{tt} = F(x,t)$$

հավասարմանը, որտեղ $F(x,t)$-ն t պահին ձողի առանցքի x կոորդինատ ունեցող կետում ազդող ուժի խտությունն է, $E(x)$-ը՝ առաձգականության գործակիցը, $\rho(x)$-ը՝ խտությունը: Եթե ձողը համասեռ է ($E = \mathrm{const}$, $\rho = \mathrm{const}$), հավասարումը կգրվի

$$u_{tt} - a^2 u_{xx} = f(x,t), \qquad a = \sqrt{E/\rho}, \;\; f(x,t) = F(x,t)/\rho$$

տեսքով:

Այդ հավասարումներից յուրաքանչյուրի համար Կոշիի խնդիրը ձևակերպվում է այսպես. գտնել այն լուծումը, որը բավարարում է

$$u(x,0) = \varphi(x), \qquad u_t(x,0) = \psi(x)$$

սկզբնական պայմաններին, որտեղ $\varphi(x)$-ը ձողի կետերի սկզբնական շեղումն է, $\psi(x)$-ը՝ արագությունը:

Վերջավոր ձողի դեպքում, երբ այն զբաղեցնում է Ox առանցքի $[0,\ell]$ հատվածը, դրվում են նաև առաջին, երկրորդ կամ երրորդ տիպի եզրային պայմաններ:

1.3 Էլեկտրական տատանումների հավասարումը: Հաղորդալարով հոսող էլեկտրական հոսանքը բնութագրվում է I հոսանքի ուժով և E լարվածությամբ: Այդ մեծությունները կախված են հաղորդալարի x կետից և ժամանակի t պահից: $I(x,t)$ և $E(x,t)$ ֆունկցիաները բավարարում են

$$I_{xx} = CLI_{tt} + (CR + GL)I_t + GRI,$$

$$E_{xx} = CLE_{tt} + (CR + GL)E_t + GRE$$

հավասարումներին, որտեղ R-ը միավոր երկարության հաղորդալարի էլեկտրական դիմադրությունն է, L-ը՝ ինքնինդուկցիայի գործակիցը, C-ն՝ ունակությունը, G-ն՝ հոսքը հաղորդալարի մակերևույթից:

Եթե հաղորդալարի մակերևույթը մեկուսացված է՝ $G \approx 0$, և դիմադրությունը շատ փոքր է՝ $R \approx 0$, ապա այդ հավասարումները վեր են ածվում տատանման հավասարումների՝

$$I_{tt} - a^2 I_{xx} = 0, \qquad E_{tt} - a^2 E_{xx} = 0, \qquad a = \sqrt{\frac{1}{LC}}\,:$$

1.4 Մեմբրանի լայնական տատանումների հավասարումը: Մեմբրան է կոչվում հարթ թաղանթը, որը չի դիմադրում ծռմանը: Դիցուք մեմբրանը վերագրված է $Oxyz$ ուղղանկյուն կոորդինատական համակարգի Oxy հարթությանը: Ենթադրվում է, որ մեմբրանի կետերը տեղաշարժվում են Oz առանցքի ուղղությամբ: Եթե $u(x,y,t)$-ով նշանակենք ժամանակի t պահին մեմբրանի x աբսցիս, y օրդինատ ունեցող կետի ապլիկատը, ապա այն բավարարում է

$$\rho\, u_{tt} - T_0\,(u_{xx} + u_{yy}) = F(x,y,t)$$

հավասարմանը, որտեղ T_0-ն լարումն է, $\rho = \rho(x,y)$-ը մակերևութային խտությունը, $F(x,y,t)$-ն արտաքին ուժի խտությունը: Այն կոչվում է մեմբրանի տատանման հավասարում:

Համասեռ մեմբրանի դեպքում ($\rho = \text{const}$) հավասարումը կգրվի

$$u_{tt} - a^2\left(u_{xx} + u_{yy}\right) = f(x,y,t), \qquad a^2 = \frac{T_0}{\rho}, \quad f(x,y,t) = \frac{F(x,y,t)}{\rho},$$

տեսքով:

1.5 Հիդրոդինամիկայի և ակուստիկայի հավասարումները: Հեղուկների և գազերի շարժումը բնութագրվում է $v_1(x,y,z,t)$, $v_2(x,y,z,t)$, $v_3(x,y,z,t)$ ֆունկցիաներով, որոնք ժամանակի t պահին (x,y,z) կետում $\vec{v}$ արագության վեկտորի բաղադրիչներն են, ինչպես նաև՝ $\rho(x,y,z,t)$ խտությունով, $p(x,y,z,t)$ ճնշումով և արտաքին ուժերի $\vec{F}(x,y,z,t)$ խտությունով: Այդ մեծությունները բավարարում են հիդրոդինամիկայի հավասարումների համակարգին՝

$$\begin{cases} \dfrac{\partial \vec{v}}{\partial t} + \vec{v}\cdot\nabla\vec{v} = \vec{F} - \dfrac{1}{\rho}\nabla p & \text{իդեալական հեղուկի շարժման հավասարումը,} \\ \dfrac{\partial \rho}{\partial t} + \nabla\cdot(\rho\vec{v}) = 0 & \text{անխզելիության հավասարումը,} \\ p = f(\rho) & \text{թերմոդինամիկական վիճակի հավասարումը,} \end{cases}$$

որտեղ՝

$$\nabla = \vec{i}\,\frac{\partial}{\partial x} + \vec{j}\,\frac{\partial}{\partial y} + \vec{k}\,\frac{\partial}{\partial z},$$

հետևաբար՝

$$\vec{v}\cdot\nabla\vec{v} = v_1\,\frac{\partial \vec{v}}{\partial x} + v_2\,\frac{\partial \vec{v}}{\partial y} + v_3\,\frac{\partial \vec{v}}{\partial z}, \qquad \nabla p = \vec{i}\,\frac{\partial p}{\partial x} + \vec{j}\,\frac{\partial p}{\partial y} + \vec{k}\,\frac{\partial p}{\partial z},$$

$$\nabla\cdot(\rho\vec{v}) = \frac{\partial(\rho v_1)}{\partial x} + \frac{\partial(\rho v_2)}{\partial y} + \frac{\partial(\rho v_3)}{\partial z}:$$

Դիտարկենք գազերում ձայնի տարածման խնդիրը: Ենթադրենք՝

- արտաքին ուժերը բացակայում են՝ $\vec{F} = 0$.
- ձայնի տարածման պրոցեսը ադիաբատ է՝

$$f(\rho) = p_0\left(\frac{\rho}{\rho_0}\right)^{\gamma} \quad \text{կամ} \quad \frac{p}{p_0} = \left(\frac{\rho}{\rho_0}\right)^{\gamma} \qquad \left(\gamma = \frac{C_p}{C_V}\right),$$

  որտեղ ρ_0-ն գազի սկզբնական խտությունն է, p_0-ն սկզբնական ճնշումը, C_p-ն և C_V-ն ջերմունակություններն են հաստատուն ճնշման և ծավալի դեպքում.

- գազի տատանումները փոքր են՝ արագության և խտության փոփոխությունները կարելի է անտեսել:

Այդ դեպքում արագության $U = -\nabla \cdot \vec{v}$ պոտենցիալը բավարարում է

$$U_{tt} - a^2(U_{xx} + U_{yy} + U_{zz}) = 0$$

հավասարմանը, որտեղ $a = \sqrt{\gamma p_0/\rho_0}$ ձայնի արագությունն է:

Նման տեսքի հավասարումների են բավարարում նաև p ճնշումը և $\vec{v}$ արագությունը, որոնք կոչվում են ակուստիկայի հավասարումներ:

§ 2. Կոշիի խնդիրը

2.1 Կոշիի խնդիրը երկու անկախ փոփոխականների դեպքում: Բնութագրիչների մեթոդը: Դիտարկենք հիպերբոլական տիպի

$$a_{11}(x,y)u_{xx} + 2a_{12}(x,y)u_{xy} + a_{22}(x,y)u_{yy} + b_1(x,y)u_x + b_2(x,y)u_y + c(x,y)u = f(x,y) \quad (3.1)$$

հավասարումը, որտեղ $u = u(x,y)$ անհայտ ֆունկցիան է, իսկ a_{11}, a_{12}, a_{22}, b_1, b_2 գործակիցները և f աջ մասը տրված անընդհատ ֆունկցիաներ են,

$$D = a_{12}^2 - a_{11}a_{22} > 0 :$$

Դիցուք Oxy կոորդինատային հարթությունում ունենք S ողորկ կոր, որը տրվում է $y = g(x),\ g \in C^1(R)$ (կամ $x = h(y),\ h \in C^1(R)$) հավասարումով, և որի ոչ մի կետում շոշափողը չի համընկնում այդ կետով անցնող բնութագրիչ կորի շոշափողի հետ: Տրված է նաև S կորի վրա որոշված $l(x,y)$ վեկտորը, որը ցանկացած $(x,y) \in S$ կետում չունի շոշափողի ուղղությունը: Նշանակենք $\Omega = \{(x,y) \mid x \in \mathrm{R},\ y < g(x)$ (կամ $y > g(x)$)$\}$: Պահանջվում է գտնել $u \in C^2(\Omega) \cap C^1(\overline{\Omega})$ ֆունկցիա, որը Ω տիրույթում բավարարում է (3.1) հավասարմանը և

$$u\Big|_{y=g(x)} = \varphi(x), \qquad \frac{\partial u}{\partial l}\Big|_{y=g(x)} = \psi(x) \quad (3.2)$$

պայմաններին, որտեղ $\varphi(x)$-ը և $\psi(x)$-ը տրված ֆունկցիաներ են: Այդ պայմանները կոչվում են Կոշիի պայմաններ, իսկ (3.1)-(3.2) խնդիրը՝ Կոշիի խնդիր:

Եթե $a_{11}, a_{12}, a_{22}, b_1, b_2$ գործակիցները և f աջ մասը անընդհատ են Ω տիրույթում, $\varphi \in C^1(R),\ \psi \in C(R)$, ապա (3.1)-(3.2) խնդրն ունի միակ լուծում:

Դիցուք գտնվել է (3.1) հավասարման ընդհանուր լուծումը, որը կպարունակի մեկ փոփոխականից կախված երկու կամայական ֆունկցիա: Կոշիի խնդիրը լուծելու համար պետք է այդ ֆունկցիաներն ընտրել այնպես, որ բավարարվեն (3.2) Կոշիի պայմանները: (3.1) հավասարումը, և հետևաբար Կոշիի խնդիրը երբեմն հնարավոր է լինում լուծել բնութագրիչների մեթոդով:

Օրինակ 3.1: Լուծել Կոշիի խնդիրը. $\begin{cases} y^2 u_{xy} + u_{yy} - \dfrac{2}{y}\, u_y = 0, \quad y > 0, \\ u\big|_{y=1} = 1 - x, \qquad u_y\big|_{y=1} = 3 : \end{cases}$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Կազմենք բնութագրիչ հավասարումը՝ $-y^2 dxdy + (dx)^2 = 0,$ որի ընդհանուր ինտեգրալներն են՝ $x = c, \quad 3x - y^3 = c :$ Կատարելով $\xi = x, \;\; \eta = 3x - y^3$ փոփոխականների փոխարինումը, հավասարումը կբերվի $u_{\xi\eta} = 0$ կանոնական տեսքի, որի ընդհանուր լուծումն է՝ $u(\xi, \eta) = f(\xi) + g(\eta)$: Անցնելով (x, y) փոփոխականների, կստանանք հավասարման ընդհանուր լուծումը՝ $u(x, y) = f(x) + g(3x - y^3)$:

f և g ֆունկցիաները որոշենք սկզբնական պայմաններից՝

$$\begin{cases} f(x) + g(3x - 1) = 1 - x, \\ -3g'(3x - 1) = 3 : \end{cases}$$

Ածանցենք առաջին հավասարման աջ և ձախ մասերը՝

$$f'(x) + 3g'(3x - 1) = -1 :$$

Հաշվի առնելով երկրորդ հավասարումը՝ $g'(3x - 1) = -1$, կստանանք $f'(x) = 2$, որտեղից՝ $f(x) = 2x + c$:

Առաջին հավասարումից՝ $g(3x - 1) = 1 - x - f(x) = 1 - 3x - c$: Այստեղ x-ի փոխարեն տեղադրելով $(x + 1)/3$, կստանանք $g(x) = -x - c$: Այսպիսով, խնդրի լուծումն է՝

$$u(x, y) = f(x) + g(3x - y^3) = 2x + c - (3x - y^3) - c = y^3 - x :$$

Պատասխան՝ $u(x, y) = y^3 - x :$

Օրինակ 3.2: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} u_{xx} - 2u_{xy} + 4e^y = 0, \\ u(x, y)\big|_{x=0} = \varphi(y), \quad u_x(x, y)\big|_{x=0} = \psi(y) : \end{cases}$$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝

$$(dy)^2 + 2dxdy = 0,$$

որի ընդհանուր ինտեգրալներն են՝ $y = c, \;\; y + 2x = c$:

Կատարելով $\xi = y, \quad \eta = y + 2x$ փոփոխականների փոխարինումը՝ հավասարումը կբերվի կանոնական տեսքի՝ $u_{\xi\eta} = e^{\xi}$: Լուծելով այն՝

$$u(\xi, \eta) = \eta e^{\xi} + f(\xi) + g(\eta),$$

և անցնելով (x, y) փոփոխականների՝ կստանանք հավասարման ընդհանուր լուծումը՝

$$u(x, y) = (y + 2x)e^{y} + f(y) + g(y + 2x)) :$$

Այստեղ f-ը և g-ն կամայական ֆունկցիաներ են:

Օգտվելով սկզբնական պայմաններից այդ ֆունկցիաների որոշման համար կստացվի հետևյալ համակարգը՝

$$\begin{cases} f(y) + g(y) = \varphi(y) - ye^{y}, \\ g'(y) = \dfrac{1}{2}\psi(y) - e^{y} : \end{cases}$$

Երկրորդ հավասարումից՝

$$g(y) = \frac{1}{2}\int\limits_{0}^{y} \psi(\eta)d\eta - e^{y} + c :$$

Տեղադրելով համակարգի առաջին հավասարման մեջ՝

$$f(y) + \frac{1}{2}\int\limits_{0}^{y} \psi(\eta)d\eta - e^{y} + c = \varphi(y) - ye^{y},$$

կստանանք՝

$$f(y) = -\frac{1}{2}\int\limits_{0}^{y} \psi(\eta)d\eta + e^{y} - c + \varphi(y) - ye^{y}:$$

Ստացված f և g ֆունկցիաները տեղադրենք ընդհանուր լուծման բանաձևի մեջ՝

$$u(x, y) = (y + 2x)e^{y} + \varphi(y) - ye^{y} + e^{y} - c - \frac{1}{2}\int\limits_{0}^{y} \psi(\eta)d\eta + \frac{1}{2}\int\limits_{0}^{y+2x} \psi(\eta)d\eta - e^{y+2x} + c :$$

Օգտվելով $\int\limits_{0}^{y+2x} \psi(\eta)d\eta - \int\limits_{0}^{y} \psi(\eta)d\eta = \int\limits_{y}^{y+2x} \psi(\eta)d\eta$ նույնությունից և կատարելով նման անդամների միացում՝ կստանանք խնդրի լուծումը:

Պատասխան՝ $u(x, y) = (1 + 2x - e^{2x})e^{y} + \varphi(y) + \dfrac{1}{2}\int\limits_{y}^{2x+y} \psi(\eta)d\eta :$

Օրինակ 3.3: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} u_{xx} + 2\cos x u_{xy} - \sin^2 x u_{yy} - \sin x u_y = 0, \\ u(x,y)\big|_{y=\sin x} = x + \cos x, \quad u_y(x,y)\big|_{y=\sin x} = \sin x : \end{cases}$$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝

$$(dy)^2 - 2\cos x dx dy - \sin^2 x (dx)^2 = 0,$$

որը տրոհվում է երկու՝

$$\left[\begin{array}{l} dy = (\cos x - 1)dx, \\ dy = (\cos x + 1)dx \end{array} \right.$$

հավասարումների: Ընդհանուր ինտեգրալներն են՝

$$\left[\begin{array}{l} y - \sin x + x = c, \\ y - \sin x - x = c \end{array} \right.$$

Կատարելով

$$\begin{cases} \xi = y - \sin x + x, \\ \eta = y - \sin x - x \end{cases}$$

փոփոխականների փոխարինումը, կստանանք կանոնական տեսքը՝ $u_{\xi\eta} = 0$: Ընդհանուր լուծումն է՝ $u(\xi,\eta) = f(\xi) + g(\eta)$, իսկ (x,y) փոփոխականներով՝

$$u(x,y) = f(y - \sin x + x) + g(y - \sin x - x) :$$

Օգտվելով սկզբնական պայմաններից f և g ֆունկցիաների որոշման համար կստացվի

$$\begin{cases} f(x) + g(-x) = x + \cos x, \\ f'(x) + g'(-x) = \sin x \end{cases}$$

համակարգը:

Առաջին հավասարման աջ և ձախ մասերը ածանցենք՝

$$f'(x) - g'(-x) = 1 - \sin x,$$

այնուհետև գումարենք երկրորդ հավասարմանը, կստանանք $2f'(x) = 1$, որտեղից՝ $f(x) = x/2 + c$:

Առաջին հավասարումից՝

$$x/2 + c + g(-x) = x + \cos x$$

կամ

$$g(-x) = x - x/2 + \cos x - c = x/2 + \cos x - c,$$

որտեղից, տեղադրելով x-ի փոխարեն $-x$, կստանանք՝

$$g(x) = -x/2 + \cos x - c:$$

Տեղադրելով ստացված f և g ֆունկցիաներն ընդհանուր լուծման բանաձևի մեջ՝ ստանում ենք խնդրի լուծումը՝

$$u(x,y) = \frac{y - \sin x + x}{2} + c + \frac{-(y - \sin x - x)}{2} + \cos(y - \sin x - x) - c =$$
$$= x + \cos(y - \sin x - x):$$

Պատասխան՝ $u(x,y) = x + \cos(y - \sin x - x)$:

Օրինակ 3.4: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} 3u_{xx} - 5u_{xy} + 2u_{yy} = 0, \\ u(x,y)\big|_{y=x} = \dfrac{x}{1+x^2}, \quad u_y(x,y)\big|_{y=x} = \sin x: \end{cases}$$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝ $3(dy)^2 + 5dxdy + 2(dx)^2 = 0$: Գտնենք ընդհանուր ինտեգրալները՝

$$\left[\begin{array}{l} 3dy = \left(-\dfrac{5}{2} - \dfrac{1}{2}\right) dx, \\ 3dy = \left(-\dfrac{5}{2} + \dfrac{1}{2}\right) dx: \end{array}\right. \Rightarrow \left[\begin{array}{l} dy + dx = 0, \\ 3dy + 2dx = 0: \end{array}\right. \Rightarrow \left[\begin{array}{l} y + x = c, \\ 3y + 2x = c: \end{array}\right.$$

Կատարելով

$$\begin{cases} \xi = y + x, \\ \eta = 2x + 3y: \end{cases}$$

փոփոխականների փոխարինումը, հավասարումը կբերվի $u_{\xi\eta} = 0$ կանոնական տեսքի, որտեղից՝ $u(\xi,\eta) = f(\xi) + g(\eta)$: Անցնելով (x,y) փոփոխականների, կստանանք հավասարման ընդհանուր լուծումը՝

$$u(x,y) = f(x+y) + g(2x+3y): \tag{3.3}$$

Կոշիի պայմաններից f և g ֆունկցիաների որոշման համար կստացվի

$$\begin{cases} f(2x) + g(5x) = \dfrac{x}{1+x^2}, \\ f'(2x) + 3g'(5x) = \sin x \end{cases}$$

համակարգը: Երկրորդ հավասարումից՝

$$\frac{1}{2}f(2x) + \frac{3}{5}\,g(5x) = -\cos x + c,$$

կամ

$$f(2x) = -\frac{6}{5}\,g(5x) - 2\cos x + 2c :$$

Տեղադրենք առաջին հավասարման մեջ՝

$$g(5x) = -10\cos x - \frac{5x}{1+x^2} + 10c, \tag{3.4}$$

և x-ի փոխարեն տեղադրենք $x/5$, կստանանք՝

$$g(x) = -10\cos\frac{x}{5} - \frac{25x}{25+x^2} + 10c :$$

(3.4)-ը տեղադրենք համակարգի առաջին հավասարման մեջ՝

$$f(2x) = 10\cos x + \frac{6x}{1+x^2} - 10c,$$

որտեղից կստանանք՝

$$f(x) = 10\cos\frac{x}{2} + \frac{12x}{4+x^2} - 10c :$$

Տեղադրելով (3.3)-ի մեջ՝ կստացվի խնդրի լուծումը՝

$$u(x,y) = 10\cos\frac{x+y}{2} + \frac{12(x+y)}{4+(x+y)^2} - 10c + \\ + \left(-10\cos\frac{2x+3y}{5} - \frac{25(2x+3y)}{25+(2x+3y)^2} + 10c\right) :$$

Պատասխան՝

$$u(x,y) = \frac{12(x+y)}{4+(x+y)^2} + 10\cos\frac{x+y}{2} - \frac{25(2x+3y)}{25+(3x+3y)^2} - 10\cos\frac{2x+3y}{5} :$$

Օրինակ 3.5: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} e^y u_{xy} - u_{yy} + u_y = xe^{2y}, \\ u(x,y)\big|_{y=0} = \sin x, \quad u_y(x,y)\big|_{y=0} = \dfrac{1}{1+x^2} : \end{cases}$$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝ $-e^y dydx-(dx)^2=0$: Գտնենք ընդհանուր ինտեգրալները՝

$$\left[\begin{array}{c} dx=0, \\ e^y dy+dx=0: \end{array}\right. \quad \Rightarrow \quad \left[\begin{array}{c} x=c, \\ e^y+x=c: \end{array}\right.$$

Կատարելով

$$\begin{cases} \xi=x, \\ \eta=e^y+x \end{cases}$$

փոփոխականների փոխարինումը՝ կստանանք $u_{\xi\eta}=\xi$ կանոնական տեսքը: Ընդհանուր լուծումն է՝

$$u(\xi,\eta)=\frac{\xi^2\eta}{2}+f(\xi)+g(\eta),$$

որտեղից՝

$$u(x,y)=\frac{x^2(e^y+x)}{2}+f(x)+g(e^y+x):$$

Գտնենք f և g ֆունկցիաները օգտվելով Կոշիի պայմաններից:

$u(x,y)\big|_{y=0}=\sin x$ պայմանից՝

$$\frac{x^2(1+x)}{2}+f(x)+g(1+x)=\sin x: \tag{3.5}$$

Ընդհանուր լուծման բանաձևից՝

$$u_y=\frac{x^2e^y}{2}+e^y g'(e^y+x):$$

Տեղադրելով այստեղ $y=0$ և օգտվելով $u_y(x,y)|_{y=0}=\dfrac{1}{1+x^2}$ պայմանից, կստացվի՝

$$\frac{x^2}{2}+g'(1+x)=\frac{1}{1+x^2},$$

կամ

$$g'(1+x)=\frac{1}{1+x^2}-\frac{x^2}{2}\Rightarrow g'(x)=\frac{1}{1+(x-1)^2}-\frac{(x-1)^2}{2}:$$

Այսպիսով՝

$$g(x)=\operatorname{arctg}(x-1)-\frac{(x-1)^3}{6}+c:$$

x-ի փոխարեն տեղադրենք $(1+x)$, կստանանք՝ $g(1+x)=\operatorname{arctg}x-\dfrac{x^3}{6}+c$: Ստացվածը տեղադրենք (3.5)- մեջ՝

$$\frac{x^2(1+x)}{2}+f(x)+\operatorname{arctg}x-\frac{x^3}{6}+c=\sin x:$$

Այստեղից կորոշվի f ֆունկցիան՝

$$f(x)=\sin x-\frac{x^2(1+x)}{2}-\operatorname{arctg} x+\frac{x^3}{6}-c=\sin x-\frac{x^2(3+2x)}{6}-\operatorname{arctg} x-c:$$

Կոշիի խնդրի լուծումը կստացվի ընդհանուր լուծման բանաձևից՝

$$\begin{gathered}u(x,y)=\frac{x^2(e^y+x)}{2}+\sin x-\frac{x^2(3+2x)}{6}-\operatorname{arctg} x-c+\\ +\operatorname{arctg}(e^y+x-1)-\frac{(e^y+x-1)^3}{6}+c=\\ =\frac{x^2(e^y-1)}{2}+\sin x-\frac{x^3-(x-e^y-1)}{6}-\operatorname{arctg} x+\operatorname{arctg}(e^y+x-1):\end{gathered}$$

Պատասխան՝

$$u(x,y)=\frac{1}{2}x^2(e^y-1)+\sin x+\frac{x^3-(x-e^y-1)^3}{6}+\operatorname{arctg}(x-e^y-1)-\operatorname{arctg} x:$$

Օրինակ 3.6: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases}y^{10}u_{xx}-u_{yy}+5y^4u_x=0, \quad x>0,\ \ y>0,\\ u(x,y)\big|_{y=0}=x^2, \quad u_y(x,y)\big|_{y=0}=4:\end{cases}$$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝ $y^{10}(dy)^2-(dx)^2=0$: Ստանանք ընդհանուր ինտեգրալները՝

$$\left[\begin{array}{l}y^5dy+dx=0,\\ y^5dy-dx=0:\end{array}\right. \quad\Rightarrow\quad \left[\begin{array}{l}6x+y^6=c,\\ 6x-y^6=c:\end{array}\right.$$

Կատարելով

$$\begin{cases}\xi=6x+y^6,\\ \eta=6x-y^6\end{cases}$$

փոփոխականների փոխարինումը, հավասարումը կբերվի

$$u_{\xi\eta}+\frac{5}{6(\xi-\eta)}\,u_\eta=0$$

կանոնական տեսքի: Նշանակելով $v=u_\eta$, v-ի նկատմամբ կստացվի

$$v_\xi+\frac{5}{6(\xi-\eta)}\,v=0$$

հավասարումը, որը, եթե η-ն համարենք պարամետր, անջատվող փոփոխականներով սովորական դիֆերենցիալ հավասարում է: Լուծենլով այն, կստանանք՝

$$v(\xi,\eta)=(\xi-\eta)^{-5/6}g(\eta),$$

որտեղ g-ն կամայական ֆունկցիա է: u-ի նկատմամբ կստացվի

$$u_\eta = (\xi - \eta)^{-5/6} g(\eta)$$

հավասարումը, որտեղից՝

$$u(\xi,\eta) = \int\limits_0^\eta (\xi - s)^{-5/6} g(s)ds + f(\xi) : \tag{3.6}$$

Հավասարման ընդհանուր լուծումը ստանալու համար անցնենք (x,y) փոփոխականների՝ տեղադրելով (3.6)-ի մեջ $\xi = 6x + y^6,\ \eta = 6x - y^6$: Ստանում ենք՝

$$u(x,y) = \int\limits_0^{6x-y^6} (6x + y^6 - s)^{-5/6} g(s)ds + f(6x + y^6) : \tag{3.7}$$

Այստեղ f-ը և g-ն մինչև երկրորդ կարգի անընդհատ ածանցյալ ունեցող կամայական ֆունկցիաներ են: Գտնենք այդ ֆունկցիաները՝ օգտվելով Կոշիի պայմաններից:

$u(x,y)\big|_{y=0} = x^2$ պայմանից՝

$$\lim_{y\to 0} \int\limits_0^{6x-y^6} (6x + y^6 - s)^{-5/6} g(s)ds + f(6x) = x^2 : \tag{3.8}$$

Ունենք

$$u_y = (6x + y^6 - (6x - y^6))^{-5/6} g(6x - y^6)(-6y^5) - \frac{5}{6}\cdot 6y^5 \int\limits_0^{6x-y^6} (6x + y^6 - s)^{-11/6} g(s)ds +$$

$$+6y^5 f'(6x+y^6) = -6\cdot 2^{-5/6} g(6x-y^6) - 5y^5 \int\limits_0^{6x-y^6} (6x+y^6-s)^{-11/6} g(s)ds + 6y^5 f'(6x+y^6) :$$

$u_y(x,y)\big|_{y=0} = 4$ պայմանից՝

$$-6\cdot 2^{-5/6} g(6x) - 5\lim_{y\to 0}\left(y^5 \int\limits_0^{6x-y^6} (6x + y^6 - s)^{-11/6} g(s)ds \right) = 4 : \tag{3.9}$$

Հաշվենք սահմանը.

$$\lim_{y\to 0}\left(y^5\int_0^{6x-y^6}(6x+y^6-s)^{-11/6}g(s)ds\right)=\frac{6}{5}\lim_{y\to 0}\left(y^5\int_0^{6x-y^6}g(s)d\left(\left(6x+y^6-s\right)^{-5/6}\right)\right)=$$

$$=\frac{6}{5}\lim_{y\to 0}y^5\left(\left(6x+y^6-s\right)^{-5/6}g(s)\Big|_{s=0}^{s=6x-y^6}-\int_0^{6x-y^6}\left(6x+y^6-s\right)^{-5/6}g'(s)ds\right)=$$

$$=\frac{6}{5}\lim_{y\to 0}y^5\left(\left(2y^6\right)^{-5/6}g(6x-y^6)-(6x+y^6)^{-5/6}g(0)+6\int_0^{6x-y^6}g'(s)d\left((6x+y^6-s)^{1/6}\right)\right)=$$

$$=\frac{6}{5}\left(2^{-5/6}g(6x)-g(0)\lim_{y\to 0}\left(\frac{6x}{y^6}+1\right)^{-5/6}+\right.$$

$$\left.+6\lim_{y\to 0}\left(y^5\int_0^{6x-y^6}g'(s)d(6x+y^6-s)^{1/6}\right)\right)=$$

$$=\frac{6}{5}\cdot 2^{-5/6}g(6x)+6\lim_{y\to 0}y^5\left((6x+y^6-s)^{1/6}g'(s)\Big|_{s=0}^{s=6x-y^6}-\right.$$

$$\left.-\int_0^{6x-y^6}(6x+y^6-s)^{1/6}g''(s)ds\right)=\frac{6}{5}\cdot 2^{-5/6}g(6x):$$

Տեղադրենք (3.9)-ի մեջ, կստանանք`

$$-6\cdot 2^{-5/6}g(6x)-5\left(\frac{6}{5}\cdot 2^{-5/6}g(6x)\right)=4,$$

որտեղից`

$$g(6x)\equiv-\frac{1}{3}\cdot 2^{5/6}\quad\text{կամ}\quad g(x)\equiv-\frac{1}{3}\cdot 2^{5/6}: \tag{3.10}$$

f ֆունկցիան ստանալու համար (3.10)-ը տեղադրենք (3.8)-ի մեջ`

$$\lim_{y\to 0}\int_0^{6x-y^6}(6x+y^6-s)^{-5/6}\left(-\frac{1}{3}\cdot 2^{5/6}\right)ds+f(6x)=x^2: \tag{3.11}$$

Հաշվենք սահմանը.

$$\lim_{y\to 0}\int_0^{6x-y^6}(6x+y^6-s)^{-5/6}\left(-\frac{1}{3}\cdot 2^{5/6}\right)ds=-\frac{1}{3}\cdot 2^{5/6}\lim_{y\to 0}\left(-6(6x+y^6-s)^{1/6}\Big|_{s=0}^{s=6x-y^6}\right)=$$

$$=2\cdot 2^{5/6}\lim_{y\to 0}\left((2y)^{1/6}-(6x+y^6)^{1/6}\right)=-2^{11/6}\cdot(6x)^{1/6}:$$

Տեղադրելով (3.11)-ի մեջ, կստանանք`

$$f(6x)=x^2+2^{11/6}\cdot(6x)^{1/6}$$

կամ

$$f(x)=\left(\frac{x}{6}\right)^2+2^{11/6}\cdot x^{1/6}: \tag{3.12}$$

Տեղադրելով (3.10)-ը և (3.12)-ը ընդհանուր լուծման (3.7) բանաձևի մեջ, կստանանք խնդրի լուծումը՝

$$u(x,y)=\int\limits_0^{6x-y^6}(6x+y^6-s)^{-5/6}\left(-\frac{1}{3}\cdot 2^{5/6}\right)ds+\left(\frac{6x+y^6}{6}\right)^2+2^{11/6}\cdot(6x+y^6)^{1/6}=$$
$$=2\cdot 2^{5/6}\big((2y)^{1/6}-(6x+y^6)^{1/6}\big)+\left(x+\frac{y^6}{6}\right)^2+2^{11/6}(6x+y^6)^{1/6}=\left(x+\frac{y^6}{6}\right)^2+4y:$$

Պատասխան՝ $u(x,y)=\left(x+\dfrac{y^6}{6}\right)^2+4y:$

Օրինակ 3.7: Լուծել Կոշիի խնդիրը. $\begin{cases} u_{xx}-u_{yy}-2u_x-2u_y=4, \\ u\big|_{y=0}=-x, \qquad u_y\big|_{y=0}=x-1: \end{cases}$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝ $(dy)^2-(dx)^2=0$: Ընդհանուր ինտեգրալներն են՝

$$y+x=\ c, \qquad y-x=c:$$

Փոփոխականների $\xi=y+x,\ \ \eta=y-x$ փոխարինումով հավասարումը կբերվի $u_{\xi\eta}+u_\xi=-1$ կանոնական տեսքի: Կատարելով $v=u_\xi$ նշանակումը՝ v-ի նկատմամբ կստացվի $v_\eta+v=-1$ հավասարումը: Այն, եթե ξ-ն համարենք պարամետր, անջատվող փոփոխականներով սովորական դիֆերենցիալ հավասարում է: Լուծելով այն, կստանանք՝

$$v(\xi,\eta)=f_1(\xi)e^{-\eta}+1,$$

որտեղ $f_1(\xi)$-ն կամայական ֆունկցիա է:

u-ի նկատմամբ կստացվի $u_\xi=f_1(\xi)e^{-\eta}+1$ հավասարումը: Ինտեգրելով այն ըստ ξ-ի, կունենանք՝

$$u(\xi,\eta)=f_2(\xi)e^{-\eta}+g(\eta)-\xi,$$

որտեղ f_2-ը և g-ն կամայական դիֆերենցելի ֆունկցիաներ են:

Հավասարման ընդհանուր լուծումը ստանալու համար անցնենք (x,y) փոփոխականների, տեղադրելով՝ $\xi=y+x,\ \ \eta=y-x$.

$$u(x,y)=f_2(x+y)e^{x-y}+g(y-x)-y-x:$$

Ստացվածը կարելի է գրել հետևյալ տեսքով՝

$$u(x,y) = e^{2x} f(x+y) + g(y-x) - y - x :$$

f և g ֆունկցիաները որոշենք Կոշիի պայմաններից: $u\big|_{y=0} = -x$ պայմանից՝ $e^{2x} f(x) + g(-x) - x = -x$: Ունենք

$$u_y = e^{2x} f'(y+x) + g'(y-x) - 1 :$$

$u_y\big|_{y=0} = x - 1$ պայմանից՝ $e^{2x} f'(x) + g'(-x) - 1 = x - 1$:

Ստացվեց հետևյալ համակարգը՝

$$\begin{cases} e^{2x} f(x) + g(-x) = 0, \\ e^{2x} f'(x) + g'(-x) = x : \end{cases}$$

Առաջին հավասարման աջ և ձախ մասերը ածանցելով և գումարելով երկրորդ հավասարմանը, կստանանք հետևյալ սովորական դիֆերենցիալ հավասարումը՝

$$f'(x) + f(x) = \frac{1}{2}\, x e^{-2x},$$

որի ընդհանուր լուծումն է՝

$$f(x) = -\frac{1}{2}(x+1)e^{-2x} + c\, e^{-x}, \qquad c \in \mathrm{R} :$$

Տեղադրենք $f(x)$-ը համակարգի առաջին հավասարման մեջ՝

$$g(-x) = e^{2x}\left(\frac{1}{2}(x+1)e^{-2x} - c\, e^{-x}\right) = \frac{1}{2}(x+1) - c\, e^{x} :$$

Այստեղ տեղադրելով x-ի փոխարեն $-x$, ստանում ենք՝

$$g(x) = \frac{1}{2}(1-x) - c\, e^{-x} :$$

Կոշիի խնդրի լուծումը կստացվի հավասարման ընդհանուր լուծումից՝ f ֆունկցիայի արգումենտում տեղադրելով $x+y$, իսկ g ֆունկցիայի արգումենտում՝ $x-y$: Այսպիսով,

$$u(x,y) = e^{2x}\left(-\frac{1}{2}(y+x+1)e^{-2(y+x)} + c\, e^{-y-x}\right) + \frac{1}{2}(1-y+x) + c\, e^{x-y} - y - x =$$
$$= \frac{1}{2}(1-3y-x) - \frac{1}{2}(y+x+1)e^{-2y} :$$

Պատասխան՝ $u(x,y) = \frac{1}{2}(1-3y-x) - \frac{1}{2}(y+x+1)e^{-2y}$:

Օրինակ 3.8: Լուծել Կոշիի խնդիրը. $\begin{cases} 3u_{xx} - 4u_{xy} + u_{yy} - 3u_x + u_y = 0, \\ u(x,y)\big|_{y=0} = \varphi(x), \quad u_y(x,y)\big|_{y=0} = \psi(x) : \end{cases}$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝ $3(dy)^2 + 4dxdy + (dx)^2 = 0$, որի ընդհանուր ինտեգրալներն են՝ $x + y = c, \ \ x + 3y = c$:

Կատարելով $\xi = x + y, \ \ \eta = x + 3y$ փոփոխականների փոխարինումը՝ հավասարումը կբերվի

$$u_{\xi\eta} + \frac{1}{2}\, u_\xi = 0 \tag{3.13}$$

կանոնական տեսքի: Այն կարելի է գրել

$$\frac{\partial}{\partial \xi}\big(u_\eta + \frac{1}{2}\, u\big) = 0$$

տեսքով: Իսկ դա նշանակում է՝

$$u_\eta + \frac{1}{2} u = g_1(\eta),$$

որտեղ g_1-ը կամայական ֆունկցիա է: Լուծելով ստացված հավասարումը, կստանանք՝

$$u(\xi,\eta) = g(\eta) + f(\xi)e^{-\eta/2} :$$

Անցնենք (x,y) փոփոխականների՝

$$u(x,y) = (g(x+3y) + f(x+y))e^{-(x+3y)/2} :$$

Գտնենք f և g ֆունկցիաները՝ օգտվելով Կոշիի պայմաններից:
$u(x,y)\big|_{y=0} = \varphi(x)$ պայմանից՝ $(g(x) + f(x))e^{-x/2} = \varphi(x)$: Ունենք

$$u_y = (3g'(x+3y) + f'(x+y))e^{-(x+3y)/2} - \frac{3}{2}(g(x+3y) + f(x+y))e^{-(x+3y)/2} :$$

$u_y(x,y)\big|_{y=0} = \psi(x)$ պայմանից՝ $(3g'(x) + f(x) - \frac{3}{2}(g(x) + f(x))e^{-x/2} = \psi(x)$:

Ստացվեց հետևյալ համակարգը՝

$$\begin{cases} f(x) + g(x) = \varphi(x)e^{x/2}, \\ 3g'(x) + f'(x) - \dfrac{3}{2}(g(x) + f(x)) = \psi(x)e^{x/2} : \end{cases}$$

Առաջին հավասարումը բազմապատկենք $3/2$-ով և գումարենք երկրորդին, կստանանք՝

$$3g'(x) + f'(x) = \left(\frac{3}{2}\varphi(x) + \psi(x)\right)e^{x/2},$$

որտեղից՝

$$3g(x)+f(x)=\int\limits_0^x\left(\frac{3}{2}\varphi(\tau)+\psi(\tau)\right)e^{\tau/2}d\tau+c:$$

Ստացված հավասարումը լուծելով համակարգի առաջին հավասարման հետ, կստանանք՝

$$g(x)=-\frac{1}{2}\varphi(x)e^{x/2}+\frac{1}{2}\int\limits_0^x\left(\frac{3}{2}\varphi(\tau)+\psi(\tau)\right)e^{\tau/2}d\tau+c,$$

$$f(x)=\frac{3}{2}\varphi(x)e^{x/2}-\frac{1}{2}\int\limits_0^x\left(\frac{3}{2}\varphi(\tau)+\psi(\tau)\right)e^{\tau/2}d\tau-c:$$

Տեղադրենք ընդհանուր լուծման մեջ՝

$$u(x,y)=\Bigg(-\frac{1}{2}\varphi(x+3y)e^{\frac{x+3y}{2}}+\frac{1}{2}\int\limits_0^{x+3y}\left(\frac{3}{2}\varphi(\tau)+\psi(\tau)\right)e^{\tau/2}d\tau+c+\frac{3}{2}\varphi(x+y)e^{\frac{x+y}{2}}-$$

$$-\frac{1}{2}\int\limits_0^{x+y}\left(\frac{3}{2}\varphi(\tau)+\psi(\tau)\right)e^{\tau/2}d\tau-c\Bigg)e^{-\frac{x+3y}{2}}=\frac{3}{2}\varphi(x+y)e^{-y}-\frac{1}{2}\varphi(x+3y)+$$

$$+\frac{1}{4}e^{-\frac{x+3y}{2}}\int\limits_0^{x+3y}\Big(3\varphi(\tau)+2\psi(\tau)\Big)e^{\tau/2}d\tau-\frac{1}{4}e^{-\frac{x+3y}{2}}\int\limits_0^{x+y}\Big(3\varphi(\tau)+2\psi(\tau)\Big)e^{\tau/2}d\tau=$$

$$=\frac{3}{2}\varphi(x+y)e^{-y}-\frac{1}{2}\varphi(x+3y)+\frac{1}{4}e^{-\frac{x+3y}{2}}\int\limits_{x+y}^{x+3y}\Big(3\varphi(\tau)+2\psi(\tau)\Big)e^{\tau/2}d\tau:$$

Պատասխան՝

$$u(x,y)=\frac{3}{2}\ \varphi(x+y)e^{-y}-\frac{1}{2}\varphi(x+3y)+\frac{1}{4}\ e^{-\frac{x+3y}{2}}\int\limits_{x+y}^{x+3y}(3\varphi(\tau)+2\psi(\tau))\ e^{\tau/2}\ d\tau:$$

Օրինակ 3.9: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} x^2u_{xx}-2xyu_{xy}-3y^2u_{yy}=0,\ x>0,\ y>0,\\ u(x,y)\big|_{y=1}=\varphi(x),\ \ u_y(x,y)\big|_{y=1}=\psi(x): \end{cases}$$

Լուծում: Գտնենք հավասարման ընդհանուր լուծումը: Բնութագրիչ հավասարումն է՝ $x^2(dy)^2+2xydxdy-3y^2(dx)^2=0,$ որի ընդհանուր ինտեգրալներն են՝ $x/y=c,\ \ x^3y=c$:

Կատարելով $\xi=x/y,\ \eta=x^3y$ փոփոխականների փոխարինումը՝ հավասարումը կբերվի

$$u_{\xi\eta}-\frac{1}{4\eta}\ u_\xi=0$$

կանոնական տեսքի: Նշանակելով $u_\xi = v$, կստացվի $v_\eta - \dfrac{1}{4\eta}v = 0$ հավասարումը: Ստացվածի լուծումն է՝ $v = f_1(\xi)\eta^{1/4}$, որտեղ $f_1(\xi)$-ն կամայական ֆունկցիա է: u ֆունկցիայի համար կունենանք

$$u_\xi = f_1(\xi)\eta^{1/4},$$

որտեղից՝

$$u(\xi,\eta) = f(\xi)\eta^{1/4} + g(\eta) :$$

Այստեղ f-ը և g-ն կամայական դիֆերենցելի ֆունկցիաներ են (f-ը f_1 ֆունկցիայի նախնականն է): Անցնելով (x,y) փոփոխականների, կստանանք հավասարման ընդհանուր լուծումը՝

$$u(x,y) = x^{3/4}y^{1/4}f\left(\frac{x}{y}\right) + g(x^3y) :$$

Ածանցենք ըստ y-ի՝

$$u_y(x,y) = -x^{7/4}y^{-7/4}f'\left(\frac{x}{y}\right) + \frac{1}{4}x^{3/4}y^{-3/4}f\left(\frac{x}{y}\right) + x^3g'(x^3y) :$$

Օգտվելով Կոշիի պայմաններից՝ f և g ֆունկցիաների որոշման համար ստացվում է

$$\begin{cases} x^{3/4}f(x) + g(x^3) = \varphi(x), \\ -x^{7/4}f'(x) + \dfrac{1}{4}x^{3/4}f(x) + x^3g'(x^3) = \psi(x) \end{cases}$$

համակարգը: Առաջին հավասարման աջ և ձախ մասերը ածանցենք՝

$$x^{3/4}f'(x) + \frac{3}{4}x^{-1/4}f(x) + 3x^2g'(x^3) = \varphi'(x) :$$

Երկրորդ հավասարման աջ և ձախ մասերը բազմապատկենք $-3/x$-ով՝

$$3x^{3/4}f'(x) - \frac{3}{4}x^{-1/4}f(x) - 3x^2g'(x^3) = -\frac{3}{x}\psi(x) :$$

Գումարելով ստացված հավասարումները և բաժանելով $4x^{3/4}$-ի, կստացվի՝

$$f'(x) = \frac{1}{4}x^{-3/4}\varphi'(x) - \frac{3}{4}x^{-7/4}\psi(x),$$

որտեղից՝

$$f(x)=\frac{1}{4}\int\limits_1^x z^{-3/4}\varphi'(z)dz-\frac{3}{4}\int\limits_1^x z^{-7/4}\psi(z)dz+c=$$

$$=\frac{1}{4}\left(x^{-3/4}\varphi(x)+\frac{3}{4}\int\limits_1^x z^{-7/4}\varphi(z)dz\right)-\frac{3}{4}\int\limits_1^x z^{-7/4}\psi(z)dz+c:$$

Այսպիսով՝

$$f(x)=\frac{1}{4}x^{-3/4}\varphi(x)+\frac{3}{16}\int\limits_1^x z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}\int\limits_1^x z^{-7/4}\psi(z)dz+c:$$

Տեղադրենք համակարգի առաջին հավասարման մեջ և գտնենք $g(x)$ ֆունկցիան: Ունենք

$$g(x^3)=\varphi(x)-x^{3/4}f(x)=\frac{3}{4}\varphi(x)-\frac{3}{16}x^{3/4}\int\limits_1^x z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}x\,x^{3/4}\int\limits_1^x z^{-7/4}\psi(z)dz-c\,x^{3/4},$$

որտեղից, տեղադրելով x-ի փոխարեն $\sqrt[3]{x}$, կստանանք՝

$$g(x)=\frac{3}{4}\varphi(\sqrt[3]{x})-\frac{3}{16}x^{1/4}\int\limits_1^{\sqrt[3]{x}} z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}x^{1/4}\int\limits_1^{\sqrt[3]{x}} z^{-7/4}\psi(z)dz-c\,x^{1/4}:$$

Խնդրի լուծումը ստանանք ընդհանուր լուծման բանաձևից՝ հաշվի առնելով ստացված $f(x)$ և $g(x)$ ֆունկցիաները.

$$u(x,y)=x^{3/4}y^{1/4}\left(\frac{1}{4}x^{-3/4}\varphi\left(\frac{x}{y}\right)+\frac{3}{16}\int\limits_1^{x/y} z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}\int\limits_1^{x/y} z^{-7/4}\psi(z)dz+c\right)+$$

$$+\frac{3}{4}\varphi(x\sqrt[3]{y})-\frac{3}{16}x^{3/4}y^{1/4}\int\limits_1^{x\sqrt[3]{y}} z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}x^{3/4}y^{1/4}\int\limits_1^{x\sqrt[3]{y}} z^{-7/4}\psi(z)dz-c\,x^{3/4}y^{1/4}=$$

$$=\frac{1}{4}y\,\varphi\left(\frac{x}{y}\right)+\frac{3}{4}\varphi(x\sqrt[3]{y})+\frac{3}{16}\sqrt[4]{x^3y}\int\limits_{x\sqrt[3]{y}}^{x/y} z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}\sqrt[4]{x^3y}\int\limits_{x\sqrt[3]{y}}^{x/y} z^{-7/4}\psi(z)dz:$$

Պատասխան՝

$$u(x,y)=\frac{1}{4}y\,\varphi\left(\frac{x}{y}\right)+\frac{3}{4}\varphi(x\sqrt[3]{y})+\frac{3}{16}\sqrt[4]{x^3y}\int\limits_{x\sqrt[3]{y}}^{x/y} z^{-7/4}\varphi(z)dz-\frac{3}{4}\sqrt[4]{x^3y}\int\limits_{x\sqrt[3]{y}}^{x/y} z^{-7/4}\psi(z)dz:$$

Խնդիրներ

Լուծել Կոշիի խնդիրը՝ բնութագրիչների մեթոդով.

199. $$\begin{cases} u_{xx} + 2\,u_{xy} - 3\,u_{yy} = 0, \\ u\big|_{y=0} = 3x^2, \quad u_y\big|_{y=0} = 0 : \end{cases}$$

200. $$\begin{cases} u_{xx} + 4\,u_{xy} - 5\,u_{yy} + u_x - u_y = 0, \\ u\big|_{y=0} = \varphi(x), \quad u_y\big|_{y=0} = \psi(x) : \end{cases}$$

201. $$\begin{cases} 4y^2\,u_{xx} + 2(1-y^2)\,u_{xy} - u_{yy} - \dfrac{2y}{1+y^2}\,(2u_x - u_y) = 0, \\ u\big|_{y=0} = \varphi(x), \quad u_y\big|_{y=0} = \psi(x) : \end{cases}$$

202. $$\begin{cases} e^y\,u_{xy} - u_{yy} + u_y = 0, \\ u\big|_{y=0} = -\dfrac{x^2}{2}, \quad u_y\big|_{y=0} = -\sin x : \end{cases}$$

203. $$\begin{cases} u_{xx} - 2\sin x\,u_{xy} - (3+\cos^2 x)\,u_{yy} - \cos x\,u_y = 0, \\ u\big|_{y=\cos x} = \sin x, \quad u_y\big|_{y=\cos x} = \dfrac{1}{2}e^x : \end{cases}$$

204. $$\begin{cases} u_{xx} - 2\sin x\,u_{xy} - (3+\cos^2 x)\,u_{yy} + u_x + (2-\sin x-\cos x)\,u_y = 0, \\ u\big|_{y=\cos x} = 0, \quad u_y\big|_{y=\cos x} = e^{-x/2}\cos x : \end{cases}$$

205. $$\begin{cases} u_{xx} - 6\,u_{xy} + 5\,u_{yy} = 0, \\ u\big|_{y=x} = \sin x, \quad u_y\big|_{y=x} = \cos x : \end{cases}$$

206. $$\begin{cases} u_{xx} + 2\sin x\,u_{xy} - \cos^2 x\,u_{yy} + u_x + (\sin x + \cos x + 1)\,u_y = 0, \\ u\big|_{y=-\cos x} = 1 + 2\sin x, \quad u_y\big|_{y=-\cos x} = \sin x : \end{cases}$$

207. $$\begin{cases} u_{xx} + 2\cos x\,u_{xy} - \sin^2 x\,u_{yy} + u_x + (1-\sin x+\cos x)\,u_y = 0, \\ u\big|_{y=\sin x} = \cos x, \quad u_y\big|_{y=\sin x} = \sin x : \end{cases}$$

208. $$\begin{cases} u_{xx} - u_{yy} + 5\,u_x + 3\,u_y + 4u = 0, \\ u\big|_{y=0} = xe^{-\frac{5}{2}x - x^2}, \quad u_y\big|_{y=0} = e^{-\frac{5}{2}x} : \end{cases}$$

2.2 Կոշիի խնդիրը ալիքային հավասարման համար: Ալիքային հավասարում է կոչվում $u(x_1, x_2, \cdots, x_n, t)$ ֆունկցիայի նկատմամբ

$$u_{tt} - a^2(u_{x_1x_1} + u_{x_2x_2} + \cdots + u_{x_nx_n}) = f(x_1, x_2, \cdots, x_n, t) \tag{3.14}$$

հավասարումը: Սա մաթեմատիկական ֆիզիկայի հիմնական հավասարումներից է, որը նկարագրում է տատանողական կամ ալիքային պրոցեսներ մեխանիկայում (լարի, մեմբրանի լայնական տատանումներ), ակուստիկայում (ձայնի տարածում տարբեր միջավայրերում), էլեկտրադինամիկայում (էլեկտրոմագնիսական ալիքների տարածում) և այլն: Այս բոլոր դեպքերում t անկախ փոփոխականն ունի ժամանակի իմաստ, իսկ $x_1, x_2, \cdots, x_n$ անկախ փոփոխականները անվանում են տարածական փոփոխականներ: a-ն դրական հաստատուն է, որը բնորոշում է միջավայրում ալիքի տարածման արագությունը:

$n = 1$ դեպքում ալիքային հավասարումը կոչվում է լարի տատանման հավասարում, իսկ $n = 2$ դեպքում՝ մեմբրանի տատանման հավասարում:

Ալիքային հավասարումը գրվում է նաև

$$u_{tt} - a^2 \Delta u = f(x, t)$$

տեսքով, որտեղ՝ $x = (x_1, x_2, \cdots, x_n)$, իսկ Δ-ն Լապլասի օպերատորն է՝

$$\Delta = \frac{\partial^2}{\partial x_1^2} + \frac{\partial^2}{\partial x_2^2} + \cdots + \frac{\partial^2}{\partial x_n^2}:$$

Քանի որ $\tau = at$ փոփոխականի փոխարինումով ալիքային հավասարումը բերվում է

$$u_{\tau\tau} - \Delta u = f(x, \tau/a)$$

տեսքի, ապա կարելի է դիտարկել միայն $a = 1$ դեպքը:

Դիցուք $\mathrm{R}_+^{n+1} = \mathrm{R}^n \times (0, +\infty) = \{(x, t) \mid x \in \mathrm{R}^n,\ t \in (0, +\infty)\}$: Կոշիի խնդիրը ալիքային հավասարման համար ձևակերպվում է այսպես. պահանջվում է գտնել $u(x_1, x_2, \cdots x_n, t)$ ֆունկցիա, որը R_+^{n+1}-ում (3.14) հավասարման լուծում է և բավարարում է

$$u\Big|_{t=0} = \varphi(x_1, x_2, \cdots, x_n), \qquad u_t\Big|_{t=0} = \psi(x_1, x_2, \cdots, x_n), \qquad (x_1, x_2, \cdots, x_n) \in \mathrm{R}^n$$

Կոշիի պայմաններին, որտեղ f-ը, φ-ն և ψ-ն տրված ֆունկցիաներ են: Հայտնի է, որ եթե $f \in C(\mathrm{R}_+^{n+1}),\quad \varphi \in C^2(\mathrm{R}^n),\quad \psi \in C^1(\mathrm{R}^n)$, ապա Կոշիի խնդիրն ունի միակ լուծում:

2.2.1 Կոշիի խնդիրը լարի տատանման հավասարման համար: Դալամբերի բանաձևը: Լարի տատանման հավասարման համար Կոշիի խնդիրն է՝

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = f(x,t), \quad -\infty < x < +\infty, \ t > 0, \\ u\big|_{t=0} = \varphi(x), \quad u_t\big|_{t=0} = \psi(x), \quad -\infty < x < +\infty, \end{cases} \tag{3.15}$$

որի լուծումը տրվում է Դալամբերի բանաձևով՝

$$u(x,t) = \frac{\varphi(x+at)+\varphi(x-at)}{2} + \frac{1}{2a}\int\limits_{x-at}^{x+at} \psi(\xi)\, d\xi + \frac{1}{2a}\int\limits_0^t \int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(\xi,\tau)\, d\xi\, d\tau : \tag{3.16}$$

Օրինակ 3.10: Լուծել Կոշիի խնդիրը. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = 6t, \ x \in \mathrm{R}, \ t > 0, \\ u\big|_{t=0} = \sin x, \qquad u_t\big|_{t=0} = x : \end{cases}$

Լուծում: Գտնենք խնդրի լուծումը՝ օգտվելով (3.16) Դալամբերի բանաձևից.

$$u(x,t) = \frac{1}{2}(\sin(x+t) + \sin(x-t)) + \frac{1}{2}\int\limits_{x-t}^{x+t} \xi\, d\xi + 3\int\limits_0^t \int\limits_{x-(t-\tau)}^{x+(t-\tau)} \tau\ \, d\xi\, d\tau =$$

$$= \sin x \cos t + xt + 6\int\limits_0^t \tau(t-\tau)\, d\tau = \sin x \cos t + xt + t^3 :$$

Պատասխան՝ $u(x,t) = \sin x \cos t + xt + t^3 :$

Խնդիրներ

Լուծել Կոշիի խնդիրը ($-\infty < x < +\infty$).

209. $\begin{cases} u_{tt} - a^2\, u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = 0, \quad u_t\big|_{t=0} = \cos x : \end{cases}$

210. $\begin{cases} u_{tt} - a^2\, u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = x^2, \quad u_t\big|_{t=0} = 1 : \end{cases}$

211. $\begin{cases} u_{tt} - a^2\, u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = x, \quad u_t\big|_{t=0} = -x : \end{cases}$

212. $\begin{cases} u_{tt} - a^2\, u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = \dfrac{x}{a}, \quad u_t\big|_{t=0} = \dfrac{1}{x^2} : \end{cases}$

213. $\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = x, \quad u_t\big|_{t=0} = \cos^2 x : \end{cases}$

214. $\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = \dfrac{\cos x}{a}, \quad u_t\big|_{t=0} = x \cos x : \end{cases}$

215. $\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = \sin(a - 2x), \\ u_t\big|_{t=0} = 2a \cos(a - 2x) : \end{cases}$

216. $\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = \dfrac{1}{8} \cos 4x, \\ u_t\big|_{t=0} = a \sin 5x \cos x : \end{cases}$

217. $\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = \cos 5x, \quad u_t\big|_{t=0} = e^{-3x} : \end{cases}$

218. $\begin{cases} u_{tt} - 81\, u_{xx} = 0, \\ u\big|_{t=0} = \sin \pi x, \quad u_t\big|_{t=0} = 27\pi \sin 3\pi x : \end{cases}$

219. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = 6, \\ u\big|_{t=0} = x^2, \quad u_t\big|_{t=0} = 4x : \end{cases}$

220. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = bx^2, \\ u\big|_{t=0} = e^{-x}, \quad u_t\big|_{t=0} = a : \end{cases}$

221. $\begin{cases} u_{tt} - 4\, u_{xx} = xt, \\ u\big|_{t=0} = x^2, \quad u_t\big|_{t=0} = x : \end{cases}$

222. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = axt, \\ u\big|_{t=0} = x, \quad u_t\big|_{t=0} = \sin x : \end{cases}$

223. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = ae^{-t}, \\ u\big|_{t=0} = b \sin x, \quad u_t\big|_{t=0} = c \cos x : \end{cases}$

224. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = \sin x, \\ u\big|_{t=0} = \sin x, \quad u_t\big|_{t=0} = 0 : \end{cases}$

225. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = e^x, \\ u\big|_{t=0} = \sin x, \quad u_t\big|_{t=0} = x + \cos x : \end{cases}$

226. $\begin{cases} u_{tt} - 9\, u_{xx} = \sin x, \\ u\big|_{t=0} = 1, \quad u_t\big|_{t=0} = 1 : \end{cases}$

227. $\begin{cases} u_{tt} - a^2\, u_{xx} = \sin \omega x, \\ u\big|_{t=0} = 0, \quad u_t\big|_{t=0} = 0 : \end{cases}$

228. $\begin{cases} u_{tt} - a^2\, u_{xx} = \sin \omega t, \\ u\big|_{t=0} = 0, \quad u_t\big|_{t=0} = 0 : \end{cases}$

229. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = x \sin t, \\ u\big|_{t=0} = \sin x, \quad u_t\big|_{t=0} = \cos x : \end{cases}$

230. $\begin{cases} u_{tt} - u_{xx} = a \sin bt, \\ u\big|_{t=0} = \cos x, \quad u_t\big|_{t=0} = \sin x : \end{cases}$

231. Ցույց տալ, որ եթե (3.15) խնդրում φ և ψ ֆունկցիաները կենտ են, իսկ f ֆունկցիան կենտ է ըստ x-ի, ապա $u(0,t) = 0$:

232. Ցույց տալ, որ եթե (3.15) խնդրում φ և ψ ֆունկցիաները զույգ են, իսկ f ֆունկցիան զույգ է ըստ x-ի, ապա $u_x(0,t) = 0$:

2.2.2 Երկու տարածական փոփոխականների դեպքը: Ալիքային հավասարումը երկու տարածական փոփոխականների դեպքում կոչվում է մեմբրանի տատանման հավասարում: Կոշիի խնդիրն է՝

$$\begin{cases} u_{tt} - a^2(u_{xx} + u_{yy}) = f(x,y,t), \quad (x,y) \in \mathrm{R}^2, \ \ t > 0, \\ u\big|_{t=0} = \varphi(x,y), \qquad u_t\,\big|_{t=0} = \psi(x,y), \end{cases}$$

որի լուծումը տրվում է Պուասոնի բանաձևով՝

$$u(x,y,t) = \frac{1}{2\pi a} \cdot \frac{\partial}{\partial t}\left(\iint\limits_{C_{at}} \frac{\varphi(\xi,\eta)\, d\xi\, d\eta}{\sqrt{a^2t^2 - (\xi - x)^2 - (\eta - y)^2}} \right) + \\ + \frac{1}{2\pi a} \iint\limits_{C_{at}} \frac{\psi(\xi,\eta)\, d\xi\, d\eta}{\sqrt{a^2t^2 - (\xi - x)^2 - (\eta - y)^2}} + \\ + \frac{1}{2\pi a} \int\limits_0^t \iint\limits_{C_{a(t-\tau)}} \frac{f(\xi,\eta,\tau)\, d\xi\, d\eta\, d\tau}{\sqrt{a^2t^2 - (\xi - x)^2 - (\eta - y)^2}} : \quad (3.17)$$

Այստեղ C_r-ը (x,y) կենտրոնով r շառավղով շրջանն է՝

$$C_r = \{(\xi,\eta) \mid (\xi-x)^2+(\eta-y)^2<r^2\}$$

:

Օրինակ 3.11: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} u_{tt}-u_{xx}-u_{yy}=6yt, \quad (x,y)\in \mathrm{R}^2, \ \ t>0. \\ u\big|_{t=0}=x, \qquad u_t\big|_{t=0}=1: \end{cases}$$

Լուծում: Գտնենք խնդրի լուծումը՝ օգտվելով (3.17) Պուասոնի բանաձևից: Ունենք

$$u(x,y,t)=\frac{1}{2\pi}\cdot\frac{\partial}{\partial t}\Bigg(\iint\limits_{C_t}\frac{\xi\,d\xi\,d\eta}{\sqrt{t^2-(\xi-x)^2-(\eta-y)^2}}\Bigg)+ \\ +\frac{1}{2\pi}\iint\limits_{C_t}\frac{d\xi\,d\eta}{\sqrt{t^2-(\xi-x)^2-(\eta-y)^2}}+ \\ +\frac{1}{2\pi}\int\limits_0^t\iint\limits_{C_{(t-\tau)}}\frac{6\eta\tau\,d\xi\,d\eta\,d\tau}{\sqrt{t^2-(\xi-x)^2-(\eta-y)^2}}:$$

Հաշվենք ինտեգրալները՝ անցնելով բևեռային կոորդինատական համակարգին՝ $\xi-x=\rho\cos\phi,\ \eta-y=\rho\sin\phi,\ 0\leqslant\phi\leqslant 2\pi$, առաջին և երկրորդ ինտեգրալներում՝ $0\leqslant\rho\leqslant t$, իսկ երրորդ ինտեգրալում՝ $0\leqslant\rho\leqslant t-\tau$:

$$\iint\limits_{C_t}\frac{\xi\,d\xi\,d\eta}{\sqrt{t^2-(\xi-x)^2-(\eta-y)^2}}=\int\limits_0^t\int\limits_0^{2\pi}\frac{x+\rho\cos\phi}{\sqrt{t^2-\rho^2}}\,\rho\,d\phi\,d\rho= \\ =-\pi x\int\limits_0^t\frac{d(t^2-\rho^2)}{\sqrt{t^2-\rho^2}}=-2\pi x\sqrt{t^2-\rho^2}\,\Bigg|_{\rho=0}^{\rho=t}=2\pi xt:$$

$$\iint\limits_{C_t}\frac{d\xi\,d\eta}{\sqrt{t^2-(\xi-x)^2-(\eta-y)^2}}=\int\limits_0^t\int\limits_0^{2\pi}\frac{\rho}{\sqrt{t^2-\rho^2}}\,d\phi\,d\rho=2\pi\int\limits_0^t\frac{\rho\,d\rho}{\sqrt{t^2-\rho^2}}=2\pi t:$$

$$\int\limits_0^t\iint\limits_{C_{(t-\tau)}}\frac{6\eta\tau\,d\xi\,d\eta\,d\tau}{\sqrt{t^2-(\xi-x)^2-(\eta-y)^2}}=6\int\limits_0^t\tau\Bigg(\int\limits_0^{t-\tau}\int\limits_0^{2\pi}\frac{y+\rho\sin\phi}{\sqrt{(t-\tau)^2-\rho^2}}\,\rho\,d\phi\,d\rho\Bigg)d\tau= \\ =-12\pi y\int\limits_0^t\Bigg(\tau\sqrt{(t-\tau)^2-\rho^2}\,\Bigg|_{\rho=0}^{\rho=t-\tau}\Bigg)d\tau=12\pi y\int\limits_0^t\tau(t-\tau)d\tau=2\pi yt^3:$$

Այսպիսով՝

$$u(x,y,t) = \frac{1}{2\pi}\cdot\frac{\partial}{\partial t}(2\pi x t) + \frac{1}{2\pi}\cdot 2\pi t + \frac{1}{2\pi}\cdot 2\pi y t^3 = x + t + yt^3 :$$

Պատասխան՝ $u(x,y,t) = x + t + yt^3$:

2.2.3 Երեք տարածական փոփոխականների դեպքը: Կոշիի խնդիրն է՝

$$\begin{cases} u_{tt} - a^2(u_{xx}+u_{yy}+u_{zz}) = f(x,y,z,t), \quad (x,y,z)\in \mathrm{R}^3, \ \ t>0, \\ u\big|_{t=0} = \varphi(x,y,z), \qquad u_t\big|_{t=0} = \psi(x,y,z), \end{cases}$$

որի լուծումը տրվում է Կիրխհոֆի բանաձևով՝

$$u(x,y,z,t) = \frac{1}{4\pi a^2}\cdot\frac{\partial}{\partial t}\left(\frac{1}{t}\iint\limits_{S_{at}}\varphi(\xi,\eta,\zeta)\,ds\right) + \frac{1}{4\pi a^2 t}\iint\limits_{S_{at}}\psi(\xi,\eta,\zeta)\,ds +$$

$$+\frac{1}{4\pi a^2}\iiint\limits_{K_{at}}\frac{f\big(\xi,\eta,\zeta,t-\frac{1}{a}\sqrt{(\xi-x)^2+(\eta-y)^2+(\zeta-z)^2}\big)}{\sqrt{(\xi-x)^2+(\eta-y)^2+(\zeta-z)^2}}\,d\xi\,d\eta\,d\zeta : \quad (3.18)$$

Այստեղ S_{at}-ն (x,y,z) կենտրոնով at շառավղով գնդային մակերևույթն է՝

$$S_{at} = \{(\xi,\eta,\zeta)\ \big|\ (\xi-x)^2+(\eta-y)^2+(\zeta-z)^2 = a^2t^2\},$$

իսկ K_{at}-ն՝ (x,y,z) կենտրոնով at շառավղով գունդը՝

$$K_{at} = \{(\xi,\eta,\zeta)\ \big|\ (\xi-x)^2+(\eta-y)^2+(\zeta-z)^2 < a^2t^2\} :$$

Օրինակ 3.12: Լուծել Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} u_{tt} - (u_{xx}+u_{yy}+u_{zz}) = 12t^2, \ \ (x,y,z)\in \mathrm{R}^3, \ \ t>0, \\ u\big|_{t=0} = z^2, \qquad u_t\big|_{t=0} = y : \end{cases}$$

Լուծում: Օգտվենք (3.18) Կիրխհոֆի բանաձևից՝

$$u(x,y,z,t) = \frac{1}{4\pi}\cdot\frac{\partial}{\partial t}\left(\frac{1}{t}\iint\limits_{S_t}\zeta^2\,ds\right) + \frac{1}{4\pi t}\iint\limits_{S_t}\eta\,ds +$$

$$+\frac{1}{4\pi}\iiint\limits_{K_t}\frac{12\big(t-\sqrt{(\xi-x)^2+(\eta-y)^2+(\zeta-z)^2}\big)^2}{\sqrt{(\xi-x)^2+(\eta-y)^2+(\zeta-z)^2}}\,d\xi\,d\eta\,d\zeta :$$

Հաշվենք ինտեգրալները՝ անցնելով սֆերիկ կոորդինատական համակարգին՝

$$\xi - x = \rho\cos\phi\sin\theta, \quad \eta - y = \rho\sin\phi\sin\theta, \quad \zeta - z = \rho\cos\theta :$$

Այստեղ $0 \leqslant \theta \leqslant \pi,\ 0 \leqslant \phi \leqslant 2\pi$: Առաջին և երկրորդ ինտեգրալներում՝ $\rho = t$, իսկ երրորդ ինտեգրալում՝ $0 \leqslant \rho \leqslant t$:

$$\iint\limits_{S_t} \zeta^2\, ds = \int\limits_0^{2\pi}\int\limits_0^{\pi}(z + t\cos\theta)^2 t^2 \sin\theta\, d\theta\, d\phi =$$

$$= z^2t^2 \int\limits_0^{2\pi}\int\limits_0^{\pi} \sin\theta d\theta phi + t^4 \int\limits_0^{2\pi}\int\limits_0^{\pi} \cos^2\theta \sin\theta d\theta d\phi =$$

$$= 2\pi z^2t^2 \int\limits_0^{\pi} \sin\theta d\theta - 2\pi t^4 \int\limits_0^{\pi} \cos^2\theta d(\cos\theta) = 4\pi z^2t^2 + \frac{4}{3}\pi t^4 :$$

$$\iint\limits_{S_t} \eta\, ds = \int\limits_0^{2\pi}\int\limits_0^{\pi}(y + t\sin\phi\sin\theta)t^2 \sin\theta\, d\theta\, d\phi = yt^2 \int\limits_0^{2\pi}\int\limits_0^{\pi} \sin\theta\, d\theta\, d\phi = 4\pi yt^2 :$$

$$\iiint\limits_{K_t} \frac{12\big(t - \sqrt{(\xi - x)^2 + (\eta - y)^2 + (\zeta - z)^2}\big)^2}{\sqrt{(\xi - x)^2 + (\eta - y)^2 + (\zeta - z)^2}}\, d\xi\, d\eta\, d\zeta =$$

$$= 12 \int\limits_0^{t}\int\limits_0^{2\pi}\int\limits_0^{\pi} \frac{1}{\rho} \cdot (t - \rho)^2 \rho^2 \sin\theta\, d\theta\, d\phi\, d\rho =$$

$$= 48\pi \left(t^2 \cdot \frac{\rho^2}{2} - 2t \cdot \frac{\rho^3}{3} + \frac{\rho^4}{4}\right)\Bigg|_{\rho=0}^{\rho=t} = 4\pi t^4 :$$

Կիրխհոֆի բանաձևից՝

$$u(x, y, z, t) = \frac{1}{4\pi} \cdot \frac{\partial}{\partial t}\left(\frac{1}{t}\big(4\pi z^2t^2 + \frac{4}{3}\pi t^4\big)\right) + \frac{1}{4\pi} \cdot \frac{1}{t} \cdot 4\pi yt^2 + \frac{1}{4\pi} \cdot 4\pi t^4 = z^2 + t^2 + yt + t^4 :$$

Պատասխան՝ $u(x, y, z, t) = z^2 + t^2 + yt + t^4$:

2.3 Կոշիի խնդրի լուծումը շարքերի միջոցով: Դիտարկենք համասեռ ալիքային հավասարման համար

$$\begin{cases} u_{tt} - a^2\Delta\, u = 0, \qquad x = (x_1, x_2, \cdots, x_n) \in \mathrm{R}^n, \quad t > 0, \\ u\big|_{t=0} = \varphi(x_1, x_2, \cdots, x_n), \\ u_t\big|_{t=0} = \psi(x_1, x_2, \cdots, x_n) : \end{cases} \tag{3.19}$$

Կոշիի խնդիրը: Անմիջական տեղադրումով կարելի է ստուգել, որ եթե φ և ψ ֆունկցիաները անվերջ դիֆերենցելի են, ապա

$$u(x, t) = \sum_{k=0}^{\infty} a^{2k}\left(\frac{t^{2k}}{(2k)!}\,\Delta^k\varphi(x_1, x_2, \cdots, x_n) + \frac{t^{2k+1}}{(2k+1)!}\,\Delta^k\psi(x_1, x_2, \cdots, x_n)\right) \tag{3.20}$$

ֆունկցիան (3.19) խնդրի լուծումն է[4], եթե միայն աջ մասում գրված շարքը և այն շարքերը, որոնք ստացվում են մինչև երկու անգամ անդամ առ անդամ ածանցելիս, հավասարաչափ զուգամետ են:

Եթե φ-ն և ψ -ն բազմանդամներ են, ապա (3.20) շարքը վեր է ածվում վերջավոր գումարի, և հետևաբար (3.19) խնդրի լուծումը նույնպես կլինի բազմանդամ:

Ակնհայտ է, որ τ պարամետրից կախված

$$\begin{cases} u_{tt} - \ a^2 \Delta \, u = 0, \\ u\big|_{t=\tau} = \varphi(x_1, x_2, \cdots, x_n, \tau), \\ u_t \,\big|_{t=\tau} = \psi(x_1, x_2, \cdots, x_n, \tau) \end{cases} \tag{3.21}$$

խնդրի լուծումը կստացվի (3.20) բանաձևից՝ t-ի փոխարեն տեղադրելով $(t-\tau)$.

$$u(x,t,\tau) = \sum_{k=0}^{\infty} a^{2k} \left(\frac{(t-\tau)^{2k}}{(2k)!} \, \Delta^k \varphi(x_1, x_2, \cdots, x_n, \tau) + \frac{(t-\tau)^{2k+1}}{(2k+1)!} \, \Delta^k \psi(x_1, x_2, \cdots, x_n, \tau) \right) : \tag{3.22}$$

Դիտարկենք անհամասեռ ալիքային հավասարման համար համասեռ սկզբնական պայմաններով խնդիրը.

$$\begin{cases} w_{tt} - a^2 \Delta \, w = f(x_1, x_2, \cdots, x_n, t), \\ w\big|_{t=0} = 0, \\ w_t \,\big|_{t=0} = 0 : \end{cases} \tag{3.23}$$

Այս խնդիրը համապատասխանեցնենք (3.21) տիպի

$$\begin{cases} H_{tt} - a^2 \Delta \, H = 0, \\ H\big|_{t=\tau} = 0, \\ H_t \,\big|_{t=\tau} = f(x_1, x_2, \cdots, x_n, t, \tau) \end{cases} \tag{3.24}$$

օժանդակ խնդրին, որի լուծումը կարելի է ստանալ (3.22)-ից, վերցնելով $\varphi = 0, \ \ \psi = f$.

$$H(x,t,\tau) = \sum_{k=0}^{\infty} a^{2k} \frac{(t-\tau)^{2k+1}}{(2k+1)!} \, \Delta^k f(x_1, x_2, \cdots, x_n, \tau) : \tag{3.25}$$

Հայտնի է Դյուամելի սկզբունքը. եթե $H(x,t,\tau)$ ֆունկցիան (3.24) խնդրի լուծումն է, ապա

$$w(x,t) = \int_0^t H(x,t,\tau) d\tau \tag{3.26}$$

ֆունկցիան (3.23) խնդրի լուծումն է:

[4] $\Delta^0 \varphi = \varphi, \quad \Delta^k \varphi = \Delta\big(\Delta^{k-1} \varphi\big), \quad k = 1, 2, \ldots,$ Δ-ն Լապլասի օպերատորն է:

Դյուամելի սկզբունքը թույլ է տալիս անհամասեռ հավասարումով խնդիրը բերել համասեռ հավասարումով խնդրի:

Օրինակ 3.13: Լուծել Կոշիի խնդիրը $(-\infty < x, y, z < +\infty,\ \Delta u = u_{xx} + u_{yy} + u_{zz})$.

$$\begin{cases} u_{tt} - \Delta\, u = \dfrac{xt}{1+t^2}, \\ u(x,y,z,0) = x\sin y, \\ u_t(x,y,z,0) = y\cos z : \end{cases} \tag{3.27}$$

Լուծում: Դիցուք $v(x,y,z,t)$ ֆունկցիան

$$\begin{cases} v_{tt} - \Delta\, v = 0, \\ v(x,y,z,0) = x\sin y \\ v_t(x,y,z,0) = y\cos z \end{cases} \tag{3.28}$$

խնդրի լուծումն է, իսկ $w(x,y,z,t)$ ֆունկցիան՝

$$\begin{cases} w_{tt} - \Delta\, w = \dfrac{xt}{1+t^2}, \\ w(x,y,z,0) = 0, \\ w_t(x,y,z,0) = 0 : \end{cases} \tag{3.29}$$

խնդրի: Ակնհայտ է, որ (3.27) խնդրի լուծումը կստացվի այդ երկու լուծումները գումարելով՝ $u(x,y,z,t) = v(x,y,z,t) + w(x,y,z,t)$:

(3.28) խնդրի լուծումը կստացվի (3.20)-ից, վերցնելով $a = 1,\ \varphi = x\sin y$, $\psi = y\cos z$.

$$\begin{aligned} v(x,y,z,t) &= \sum_{k=0}^{\infty}\left(\frac{t^{2k}}{(2k)!}\,\Delta^k(x\sin y) + \frac{t^{2k+1}}{(2k+1)!}\,\Delta^k(y\cos z)\right) = \\ &= \sum_{k=0}^{\infty}\left(\frac{t^{2k}}{(2k)!}\,(-1)^k x\sin y + \frac{t^{2k+1}}{(2k+1)!}\,(-1)^k y\cos z\right) = \\ &= x\sin y\sum_{k=0}^{\infty}\frac{(-1)^k t^{2k}}{(2k)!} + y\cos z\sum_{k=0}^{\infty}\frac{(-1)^k t^{2k+1}}{(2k+1)!} = x\sin y\cos t + y\cos z\sin t : \end{aligned}$$

(3.29) խնդրի լուծումը գտնելու համար կազմենք $H(x,y,z,t,\tau)$ ֆունկցիայի նկատմամբ հետևյալ օժանդակ խնդիրը՝

$$\begin{cases} H_{tt} - \Delta\, H = 0, \\ H(x,y,z,\tau,\tau) = 0, \\ H_t(x,y,z,\tau,\tau) = \dfrac{x\tau}{1+\tau^2} : \end{cases}$$

Համաձայն (3.25)-ի՝

$$H(x,y,z,t,\tau)=\sum_{k=0}^{\infty}\frac{(t-\tau)^{2k+1}}{(2k+1)!}\,\Delta^k\left(\frac{x\tau}{1+\tau^2}\right)=\frac{x\tau(t-\tau)}{1+\tau^2}:$$

Ստանանք (3.29) խնդրի լուծումը՝ օգտվելով Դյուամելի սկզբունքից.

$$w(x,y,z,t)=\int_0^t H(x,y,z,t,\tau)d\tau=\int_0^t\frac{x\tau(t-\tau)d\tau}{1+\tau^2}=xt\int_0^t\frac{\tau d\tau}{1+\tau^2}-x\int_0^t\frac{\tau^2d\tau}{1+\tau^2}=$$

$$=\frac{1}{2}xt\ \ln(1+t^2)-xt+x\,\mathrm{arctg}\ t:$$

Այսպիսով՝

$$u(x,y,z,t)=v(x,y,z,t)+w(x,y,z,t)=$$

$$=x\sin y\cos t+y\cos z\sin t+\frac{1}{2}xt\ \ln(1+t^2)-xt+x\,\mathrm{arctg}\ t:$$

Պատասխան՝

$$u(x,y,z,t)=x\sin y\cos t+y\cos z\sin t+\frac{1}{2}xt\ \ln(1+t^2)-xt+x\,\mathrm{arctg}\ t:$$

Խնդիրներ

Լուծել Կոշիի խնդիրը ($-\infty<x,y<+\infty,\ \Delta u=u_{xx}+u_{yy}$).

233. $$\begin{cases}u_{tt}-2\,\Delta u=0,\\ u\big|_{t=0}=2x^2-y^2,\quad u_t\big|_{t=0}=2x^2+y^2:\end{cases}$$

234. $$\begin{cases}u_{tt}-a^2\,\Delta u=0,\\ u\big|_{t=0}=(x^2+y^2)^2,\quad u_t\big|_{t=0}=(x^2+y^2)^2:\end{cases}$$

235. $$\begin{cases}u_{tt}-a^2\,\Delta u=0,\\ u\big|_{t=0}=\cos(bx+cy),\quad u_t\big|_{t=0}=\sin(bx+cy):\end{cases}$$

236. $$\begin{cases}u_{tt}-\Delta u=2,\\ u\big|_{t=0}=x,\quad u_t\big|_{t=0}=y:\end{cases}$$

237. $$\begin{cases}u_{tt}-\Delta u=6xyt,\\ u\big|_{t=0}=x^2-y^2,\quad u_t\big|_{t=0}=xy:\end{cases}$$

238. $\begin{cases} u_{tt} - \Delta u = x^3 - 3xy^2, \\ u\big|_{t=0} = e^x \cos y, \quad u_t\big|_{t=0} = e^y \sin x : \end{cases}$

239. $\begin{cases} u_{tt} - \Delta u = t \sin y, \\ u\big|_{t=0} = x^2, \quad u_t\big|_{t=0} = \sin y : \end{cases}$

240. $\begin{cases} u_{tt} - 3\,\Delta u = x^3 + y^3, \\ u\big|_{t=0} = x^2, \quad u_t\big|_{t=0} = y^2 : \end{cases}$

241. $\begin{cases} u_{tt} - \Delta u = e^{3x+4y}, \\ u\big|_{t=0} = e^{3x+4y}, \quad u_t\big|_{t=0} = e^{3x+4y} : \end{cases}$

242. $\begin{cases} u_{tt} - a^2\,\Delta u = (x^2 + y^2)e^t, \\ u\big|_{t=0} = 0, \quad u_t\big|_{t=0} = 0 : \end{cases}$

243. $\begin{cases} u_{tt} - \Delta u = -xyt, \\ u\big|_{t=0} = 0, \quad u_t\big|_{t=0} = xy : \end{cases}$

Լուծել Կոշիի խնդիրը ($-\infty < x, y, z < +\infty,\ \Delta u = u_{xx} + u_{yy} + u_{zz}$).

244. $\begin{cases} u_{tt} - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = xyz, \quad u_t\big|_{t=0} = x^2y^2z^2 : \end{cases}$

245. $\begin{cases} u_{tt} - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = x^2 + y^2 + z^2, \quad u_t\big|_{t=0} = xy : \end{cases}$

246. $\begin{cases} u_{tt} - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = e^x \cos y, \quad u_t\big|_{t=0} = x^2 - y^2 : \end{cases}$

247. $\begin{cases} u_{tt} - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = x^2 + y^2, \quad u_t\big|_{t=0} = 1 : \end{cases}$

248. $\begin{cases} u_{tt} - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = e^x, \quad u_t\big|_{t=0} = e^{-x} : \end{cases}$

249. $\begin{cases} u_{tt} - \Delta u = ax + bt, \\ u\big|_{t=0} = xyz, \quad u_t\big|_{t=0} = xy + z : \end{cases}$

250. $\begin{cases} u_{tt} - \Delta u = \dfrac{ayzt^3}{1 + t^2}, \\ u\big|_{t=0} = xe^y, \quad u_t\big|_{t=0} = ye^x : \end{cases}$

251. $\begin{cases} u_{tt} - \Delta u = 2xyz, \\ u\big|_{t=0} = x^2 + y^2 - 2z^2, \quad u_t\big|_{t=0} = 1 : \end{cases}$

252. $\begin{cases} u_{tt} - 8\,\Delta u = t^2 x^2, \\ u\big|_{t=0} = y^2, \quad u_t\big|_{t=0} = z^2 : \end{cases}$

253. $\begin{cases} u_{tt} - 3\,\Delta u = 6(x^2 + y^2 + z^2), \\ u\big|_{t=0} = x^2 y^2 z^2, \quad u_t\big|_{t=0} = xyz : \end{cases}$

254. $\begin{cases} u_{tt} - a^2\,\Delta u = 0, \\ u\big|_{t=0} = (x^2 + y^2 + z^2)^2, \quad u_t\big|_{t=0} = (x^2 + y^2 + z^2)^2 : \end{cases}$

255. $\begin{cases} u_{tt} - a^2\,\Delta u = (x^2 + y^2 + z^2)e^t, \\ u\big|_{t=0} = 0, \quad u_t\big|_{t=0} = 0 : \end{cases}$

§3. Խառը խնդիրներ լարի տատանման հավասարման համար

3.1 Խառը խնդիրներ կիսաառանցքում: Դիտարկենք կիսաանվերջ լար, որը վերագրված է $x \in [0, +\infty)$ դրական կիսաառանցքին: Այս դեպքում լարի դիրքը նկարագրող $u(x,t)$ ֆունկցիան, բացի սկզբնական պայմաններից, պետք է բավարարի նաև որևէ պայմանի լարի ձախ՝ $x = 0$ ծայրակետում (եզրային պայման): Այսպիսով, կունենանք հետևյալ խնդիրը՝

$$\begin{cases} u_{tt} - a^2\,u_{xx} = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = \mu(t) \quad (\text{կամ } \ u_x(0,t) = \nu(t)), \quad t \geqslant 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad u_t(x,0) = \psi(x), \quad 0 \leqslant x < +\infty : \end{cases}$$

Այս խնդրի լուծելիության համար անհրաժեշտ է, որ տեղի ունենան

$$\mu(0) = \varphi(0), \quad \mu'(0) = \psi(0) \quad (\text{կամ } \varphi'(0) = \nu(0), \quad \psi'(0) = \nu'(0))$$

պայմանները (համաձայնեցվածության պայմաններ):

Դիտարկենք համասեռ հավասարման համար հետևյալ խնդիրը՝

$$\begin{cases} u_{tt} - a^2\,u_{xx} = 0, \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad t \geqslant 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad u_t(x,0) = \psi(x), \quad 0 \leqslant x < +\infty \end{cases} \tag{3.30}$$

որտեղ՝ $\varphi \in C^2[0,+\infty], \ \psi \in C^1[0,+\infty], \ \varphi(0) = \varphi''(0) = 0, \ \psi(0) = 0$:

Նշանակենք $\Phi(x)$-ով և $\Psi(x)$-ով համապատասխանաբար $\varphi(x)$ և $\psi(x)$

ֆունկցիաների կենտ շարունակությունները՝

$$\Phi(x)=\begin{cases}\varphi(x) & \text{երբ } x\geqslant 0,\\ -\varphi(-x), & \text{երբ } x<0,\end{cases}\qquad \Psi(x)=\begin{cases}\psi(x), & \text{երբ } x\geqslant 0,\\ -\psi(-x) & \text{երբ } x<0:\end{cases}$$

Դիցուք $U(x,t)$ ֆունկցիան

$$\begin{cases}U_{tt}-a^2U_{xx}=0, \quad -\infty<x<+\infty, \;\; t>0,\\ U(x,0)=\Phi(x), \quad U_t(x,0)=\Psi(x)\end{cases}$$

Կոշիի խնդրի լուծումն է: Այն տրվում է Դալամբերի բանաձևով՝

$$U(x,t)=\frac{\Phi(x+at)+\Phi(x-at)}{2}+\frac{1}{2a}\int\limits_{x-at}^{x+at}\Psi(\xi)\,d\xi: \tag{3.31}$$

Ակնհայտ է, որ երբ $x\in[0,+\infty)$, այդ լուծումը կհամընկնի (3.30) խնդրի լուծման հետ: Վերադառնալով $\varphi(x)$ և $\psi(x)$ ֆունկցիաներին՝ լուծումը կստացվի

$$u(x,t)=\begin{cases}\dfrac{\varphi(x+at)+\varphi(x-at)}{2}+\dfrac{1}{2a}\displaystyle\int\limits_{x-at}^{x+at}\psi(\xi)d\xi, & \text{երբ } x\geqslant 0,\; 0\leqslant t<\dfrac{x}{a},\\[2ex] \dfrac{\varphi(x+at)-\varphi(at-x)}{2}+\dfrac{1}{2a}\displaystyle\int\limits_{at-x}^{x+at}\psi(\xi)d\xi, & \text{երբ } x\geqslant 0,\; t\geqslant\dfrac{x}{a}\end{cases} \tag{3.32}$$

տեսքով:

Եթե պետք է լուծել

$$\begin{cases}u_{tt}-a^2\,u_{xx}=0, \quad 0<x<+\infty, \quad t>0,\\ u_x(0,t)=0, \quad t\geqslant 0,\\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad 0\leqslant x<+\infty\end{cases} \tag{3.33}$$

խնդիրը, ապա (3.31)-ում $\Phi(x)$-ը և $\Psi(x)$-ը պետք է վերցնել $\varphi(x)$ և $\psi(x)$ ֆունկցիաների զույգ շարունակությունները՝

$$\Phi(x)=\begin{cases}\varphi(x), & \text{երբ } x\geqslant 0,\\ \varphi(-x), & \text{երբ } x<0,\end{cases}\qquad \Psi(x)=\begin{cases}\psi(x), & \text{երբ } x\geqslant 0,\\ \psi(-x), & \text{երբ } x<0:\end{cases}$$

Այդ դեպքում (3.33) խնդրի լուծումը կգրվի հետևյալ տեսքով՝

$$u(x,t)=\begin{cases}\dfrac{\varphi(x+at)+\varphi(x-at)}{2}+\dfrac{1}{2a}\int\limits_{x-at}^{x+at}\psi(\xi)d\xi, & \text{երբ } x\geqslant 0,\ 0\leqslant t<\dfrac{x}{a},\\ \dfrac{\varphi(x+at)+\varphi(at-x)}{2}+\dfrac{1}{2a}\left(\int\limits_{0}^{x+at}\psi(\xi)d\xi+\int\limits_{0}^{at-x}\psi(\xi)d\xi\right), & \text{երբ } x\geqslant 0,\ t\geqslant\dfrac{x}{a}:\end{cases}$$

Օրինակ 3.14: Լուծել խնդիրը.

$$\begin{cases}u_{tt}-a^2u_{xx}=0, \quad 0<x<+\infty, \quad t>0,\\ u(0,t)=\mu(t), \quad t\geqslant 0,\\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad 0\leqslant x<+\infty:\end{cases}$$

Լուծում: Նախ լուծենք համասեռ սկզբնական պայմաններով

$$\begin{cases}u_{tt}-a^2u_{xx}=0, \quad 0<x<+\infty, \quad t>0,\\ u(0,t)=\mu(t), \quad t\geqslant 0,\\ u(x,0)=0, \quad u_t(x,0)=0, \quad 0\leqslant x<+\infty\end{cases} \tag{3.34}$$

խնդիրը: Լուծումը փնտրենք $u(x,t)=g(x-at)$ տեսքով: Եզրային պայմանից՝

$$u(0,t)=g(-at)=\mu(t),$$

որտեղից՝

$$g(z)=\mu\Big(-\frac{z}{a}\Big),$$

այնպես որ

$$u(x,t)=\mu\Big(-\frac{x-at}{a}\Big)=\mu\Big(t-\frac{x}{a}\Big):$$

Բայց քանի որ $\mu(t)$ ֆունկցիան որոշված է միայն երբ $t\geqslant 0$, ապա ստացված ֆունկցիան որոշված կլինի, երբ $at-x\geqslant 0$: Որպեսզի այն որոշված լինի ցանկացած $x\geqslant 0,\ t\geqslant 0$ արժեքների դեպքում, շարունակենք այն՝ ընդունելով $u(x,t)=0$, երբ $0\leqslant t<\dfrac{x}{a}$: Այսպիսով (3.34) խնդրի լուծումն է՝

$$u(x,t)=\begin{cases}0, & \text{երբ } 0\leqslant t<\dfrac{x}{a},\\ \mu\Big(t-\dfrac{x}{a}\Big), & \text{երբ } t\geqslant\dfrac{x}{a}:\end{cases}$$

Սա գումարելով (3.32) բանաձևով որոշվող (3.30) խնդրի լուծմանը՝ կստանանք մեր խնդրի լուծումը:

Պատասխան՝

$$u(x,t)=\begin{cases}\dfrac{\varphi(x+at)+\varphi(x-at)}{2}+\dfrac{1}{2a}\displaystyle\int_{x-at}^{x+at}\psi(\xi)d\xi, & \text{երբ } x\geqslant 0,\ 0\leqslant t<\dfrac{x}{a},\\[2ex] \mu\Big(t-\dfrac{x}{a}\Big)+\dfrac{\varphi(x+at)-\varphi(at-x)}{2}+\dfrac{1}{2a}\displaystyle\int_{at-x}^{x+at}\psi(\xi)d\xi, & \text{երբ } x\geqslant 0,\ t\geqslant\dfrac{x}{a}:\end{cases}$$

Օրինակ 3.15: Լուծել խնդիրը.

$$\begin{cases}u_{tt}-a^2u_{xx}=f(x,t), \quad 0<x<+\infty, \quad t>0,\\ u(0,t)=0, \quad t\geqslant 0,\\ u(x,0)=0, \quad u_t(x,0)=0, \quad 0\leqslant x<+\infty,\end{cases}$$

որտեղ՝ $f\in C\big([0,+\infty)\times(0,\infty)\big),\ f(0,t)=0:$

Լուծում: Դիցուք $F(x,t)$ ֆունկցիան $f(x,t)$ ֆունկցիայի ըստ x-ի կենտ շարունակությունն է՝

$$F(x,t)=\begin{cases}f(x,t), & x\geqslant 0,\\ -f(-x,t), & x<0:\end{cases}$$

Դիտարկենք

$$\begin{cases}U_{tt}-a^2U_{xx}=F(x,t), \quad -\infty<x<\infty,\ \ t>0,\\ U(x,0)=U_t(x,0)=0, \quad -\infty<x<\infty\end{cases}$$

Կոշիի խնդիրը, որի լուծումը կարելի է ստանալ (3.16) բանաձևից՝

$$U(x,t)=\frac{1}{2a}\int_0^t\int_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)}F(z,\tau)dzd\tau: \tag{3.35}$$

Քանի որ $F(x,t)$ ֆունկցիան կենտ է ըստ x-ի, ապա $U(0,t)=0$: Ունենք նաև

$$U(x,0)=U_t(x,0)=0:$$

Այստեղից հետևում է, որ $U(x,t)$ ֆունկցիան համընկնում է մեր խնդրի լուծման հետ, երբ $x\geqslant 0,\ \ t\geqslant 0$:

Ձևափոխենք (3.35) բանաձևն այնպես, որ այնտեղ բացահայտ ձևով մասնակցի $f(x,t)$ ֆունկցիան: Դիտարկենք երկու դեպք:

1) $x>0,\ x-at>0$ ($t<x/a$): Այդ դեպքում՝ $x-a(t-\tau)=x-at+a\tau>0$,

ուրեմն՝

$$u(x,t)=U(x,t)=\frac{1}{2a}\int\limits_0^t\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau :$$

2) $x>0,\ x-at<0\ (t>x/a)$: Այդ դեպքում՝

$$x-a(t-\tau)=x-at+a\tau\begin{cases}<0, & 0<\tau<t-x/a,\\ \geqslant 0, & \tau>t-x/a,\end{cases}$$

հետևաբար՝

$$u(x,t)=U(x,t)=\frac{1}{2a}\int\limits_0^{t-x/a}\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} F(z,\tau)dzd\tau+\frac{1}{2a}\int\limits_{t-x/a}^{t}\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau=$$

$$=\frac{1}{2a}\int\limits_0^{t-x/a}\int\limits_{x-a(t-\tau)}^{0}(-f(-z,\tau))dzd\tau+\frac{1}{2a}\int\limits_0^{t-x/a}\int\limits_{0}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau+$$

$$+\frac{1}{2a}\int\limits_{t-x/a}^{t}\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau=$$

$$=\frac{1}{2a}\int\limits_0^{t-x/a}\int\limits_{a(t-\tau)-x}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau+\frac{1}{2a}\int\limits_{t-x/a}^{t}\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau :$$

Պատասխան՝

$$u(x,t)=\begin{cases}\dfrac{1}{2a}\int\limits_0^t\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau, & x\geqslant 0,\ 0\leqslant t<\dfrac{x}{a},\\[2ex] \dfrac{1}{2a}\int\limits_0^{t-x/a}\int\limits_{a(t-\tau)-x}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau+\dfrac{1}{2a}\int\limits_{t-x/a}^{t}\int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} f(z,\tau)dzd\tau, & x\geqslant 0,\ t\geqslant\dfrac{x}{a} :\end{cases}$$

Խնդիրներ

Լուծել խառը խնդիրը.

256. $$\begin{cases}u_{tt}-a^2u_{xx}=0, & 0<x<+\infty, \quad t>0,\\ u_x(0,t)=\nu(t), & t\geqslant 0,\\ u(x,0)=0, \quad u_t(x,0)=0, & 0\leqslant x<+\infty :\end{cases}$$

257. $$\begin{cases} u_{tt}-a^2\,u_{xx}=f(x,t), \quad 0<x<+\infty, \quad t>0, \\ u_x(0,t)=0, \quad t\geqslant 0, \\ u(x,0)=0, \quad u_t(x,0)=0, \quad 0\leqslant x<+\infty: \end{cases}$$

258. $$\begin{cases} u_{tt}-a^2\,u_{xx}=f(x,t), \quad 0<x<+\infty, \quad t>0, \\ u(0,t)=0, \quad t\geqslant 0, \\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad 0\leqslant x<+\infty: \end{cases}$$

259. $$\begin{cases} u_{tt}-a^2\,u_{xx}=f(x,t), \quad 0<x<+\infty, \quad t>0, \\ u_x(0,t)=0, \quad t\geqslant 0, \\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad 0\leqslant x<+\infty: \end{cases}$$

260. $$\begin{cases} u_{tt}-a^2\,u_{xx}=f(x,t), \quad 0<x<+\infty, \quad t>0, \\ u(0,t)=\mu(t), \quad t\geqslant 0, \\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad 0\leqslant x<+\infty: \end{cases}$$

261. $$\begin{cases} u_{tt}-a^2\,u_{xx}=f(x,t), \quad 0<x<+\infty, \quad t>0, \\ u_x(0,t)=\nu(t), \quad t\geqslant 0, \\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad 0\leqslant x<+\infty: \end{cases}$$

262. $$\begin{cases} u_{tt}-a^2\,u_{xx}=0, \quad 0<x<+\infty, \quad t>0, \\ u_x(0,t)-hu(0,t)=\chi(t), \quad h>0,\ \ t\geqslant 0, \\ u(x,0)=0, \quad u_t(x,0)=0, \quad 0\leqslant x<+\infty: \end{cases}$$

3.2 Խառը խնդիրներ հատվածում: Դիցուք ℓ երկարության լարի կետերը հավասարակշռության դիրքում զբաղեցնում են Ox առանցքի $[0,\ell]$ հատվածը: Այս դեպքում լարի դիրքը նկարագրող $u(x,t)$ ֆունկցիան, բացի սկզբնական պայմաններից, պետք է բավարարի նաև որոշակի եզրային պայմանների լարի $x=0$ և $x=\ell$ ծայրերում: Այդպիսի խնդիրները կոչվում են խառը կամ եզրային խնդիրներ:

Դիտարկենք համասեռ եզրային պայմաններով խառը խնդիրը՝

$$\begin{cases} u_{tt}-a^2u_{xx}=f(x,t), \qquad 0<x<\ell,\ \ t>0, \\ u(0,t)=0, \quad u(\ell,t)=0, \quad t\geqslant 0, \\ u(x,0)=\varphi(x), \quad u_t(x,0)=\psi(x), \quad x\in[0,\ell], \end{cases}$$

որտեղ՝

$$f\in C\{0\leqslant x\leqslant \ell,\ t>0\}, \qquad f(0,t)=f(\ell,t)=0,$$

$$\varphi\in C^2[0,\ell],\ \psi\in C^1[0,\ell],\ \varphi(0)=\varphi(\ell)=\varphi''(0)=\varphi''(\ell)=0,\ \psi(0)=\psi(\ell)=0:$$

Դիցուք $F(x,t)$, $\Phi(x)$ և $\Psi(x)$ ֆունկցիաները համապատասխանաբար $f(x,t)$, $\varphi(x)$ և $\psi(x)$ ֆունկցիաների կենտ և 2ℓ-պարբերական շարունակություններն են: Այսինքն՝ $F(x,t)$-ն $\{-\infty \leqslant x \leqslant +\infty,\ \ t \geqslant 0\}$ կիսատարածությունում որոշված այն ֆունկցիան է, որը ըստ x-ի 2ℓ-պարբերական է և կամայական $t \geqslant 0$ համար

$$F(x,t) = \begin{cases} f(x,t), & 0 \leqslant x \leqslant \ell, \\ -f(-x,t), & -\ell \leqslant x \leqslant 0, \end{cases}$$

իսկ $\Phi(x)$ և $\Psi(x)$ ֆունկցիաները $(-\infty,+\infty)$-ում որոշված 2ℓ-պարբերական այն ֆունկցիաներն են, որ

$$\Phi(x) = \begin{cases} \varphi(x), & 0 \leqslant x \leqslant \ell, \\ -\varphi(-x), & -\ell \leqslant x \leqslant 0, \end{cases} \qquad \Psi(x) = \begin{cases} \psi(x) & 0 \leqslant x \leqslant \ell, \\ -\psi(-x), & -\ell \leqslant x \leqslant 0 : \end{cases}$$

Դիցուք $U(x,t)$ ֆունկցիան հետևյալ խնդրի լուծումն է՝

$$\begin{cases} U_{tt} - a^2 U_{xx} = F(x,x), \quad -\infty < x < +\infty, \ \ t > 0, \\ U(x,0) = \Phi(x), \quad U_t(x,0) = \Psi(x) : \end{cases}$$

Համաձայն Դալամբերի բանաձևի՝

$$U(x,t) = \frac{\Phi(x+at)+\Phi(x-at)}{2} + \frac{1}{2a}\int\limits_{x-at}^{x+at} \Psi(\xi)\, d\xi + \frac{1}{2a}\int\limits_0^t \int\limits_{x-a(t-\tau)}^{x+a(t-\tau)} F(\xi,\tau)\, d\xi\, d\tau :$$

Ակնհայտ է, որ $\{0 \leqslant x \leqslant \ell,\ \ t \geqslant 0\}$ բազմությունում $U(x,t)$ ֆունկցիան կհամընկնի մեր խնդրի լուծման հետ:

Անհամասեռ եզրային պայմաններով

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = f(x,t), & 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u(0,t) = \mu(t), & u(\ell,t) = \nu(t), \quad t \geqslant 0, \\ u(x,0) = \varphi(x), & x \in [0,\ell], \\ u_t(x,0) = \psi(x), & x \in [0,\ell], \end{cases}$$

խառը խնդրի լուծումը կարելի է փնտրել

$$u(x,t) = v(x,t) + \mu(t) + \frac{x}{\ell}\left(\nu(t) - \mu(t)\right)$$

տեսքով: Այդ դեպքում $v(x,t)$ ֆունկցիայի որոշման համար կստանանք համասեռ եզրային պայմաններով խնդիր:

Խառը խնդրի լուծման վերը շարադրված մեթոդը կոչվում է շարունակման եղանակ:

Խնդիրներ

Լուծել խառը խնդիրը՝ շարունակման եղանակով.

263. $$\begin{cases} u_{tt} - a^2\,u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad u(\ell,t) = 0, \quad t \geqslant 0, \\ u(x,0) = \sin\dfrac{\pi}{\ell}x, \quad u_t(x,0) = 0, \quad 0 \leqslant x <\leqslant \ell\,: \end{cases}$$

264. $$\begin{cases} u_{tt} - a^2\,u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad u_x(\ell,t) = 0, \quad t \geqslant 0, \\ u(x,0) = Ax, \quad u_t(x,0) = 0, \quad 0 \leqslant x <\leqslant \ell\,: \end{cases}$$

265. $$\begin{cases} u_{tt} - a^2\,u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \quad t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad u_x(\ell,t) = 0, \quad t \geqslant 0, \\ u(x,0) = \cos\dfrac{\pi}{\ell}x, \quad u_t(x,0) = 0, \quad 0 \leqslant x <\leqslant \ell\,: \end{cases}$$

§ 4. Փոփոխականների անջատման մեթոդը

Փոփոխականների անջատման կամ Ֆուրյեի մեթոդը լայն կիրառություն ունեցող մեթոդներից է, որով լուծվում են խառը և եզրային խնդիրներ հիպերբոլական, պարաբոլական և էլիպտական տիպի հավասարումների համար:

4.1 Շտուրմ-Լիուվիլի խնդիրը: Դիտարկենք ինքնահամալուծ տեսքով գրված երկրորդ կարգի գծային համասեռ

$$(p(x)y')' - q(x)y + \lambda\rho(x)y = 0, \quad x \in (a,b) \tag{3.36}$$

սովորական դիֆերենցիալ հավասարումը, որտեղ $p(x)$, $p'(x)$, $q(x)$ և $\rho(x)$ ֆունկցիաներն անընդհատ են (a,b) միջակայքում, $p(x) > 0$, $q(x) \geqslant 0$, $\rho(x) > 0$, $\rho(x)$-ը սահմանափակ է, λ -ն՝ պարամետր:

Ձևակերպենք հետևյալ խնդիրը՝ փնտրվում է (3.36) հավասարման այն $y(x)$ լուծումը, որը $C^2(a,b) \cap C^1[a,b]$ դասից է, և որը բավարարում է

$$\begin{cases} \alpha_1\, y'(a) + \beta_1\, y(a) = 0, & (3.37) \\ \alpha_2\, y'(b) + \beta_2\, y(b) = 0 & (3.38) \end{cases}$$

եզրային պայմաններին: Այստեղ α_1, β_1, α_2, β_2 գործակիցները տրված հաստատուններ են, ընդ որում՝ $\alpha_i^2 + \beta_i^2 \neq 0$, $i = 1, 2\,:$

(3.36) հավասարմանը և (3.37), (3.38) եզրային պայմաններին միշտ բավարարում է $y(x) \equiv 0$ ֆունկցիան, որը կոչվում է տրիվիալ լուծում: Այն λ թիվը, որի դեպքում (3.36) հավասարումն ունի (3.37) և (3.38) եզրային պայմաններին բավարարող ոչ տրիվիալ լուծում, կոչվում է այդ խնդրի սեփական արժեք, իսկ նրան համապատասխանող ոչ տրիվիալ լուծումը՝ սեփական ֆունկցիա: (3.36)-(3.38) խնդրի բոլոր սեփական արժեքների և նրանց համապատասխանող սեփական ֆունկցիաների որոնման խնդիրը կոչվում է Շտուրմ-Լիուվիլի խնդիր:

Հայտնի է, որ.

1. Գոյություն ունեն հաշվելի թվով սեփական արժեքներ, որոնք կարելի է համարակալել աճման կարգով՝
$$\lambda_1 < \lambda_2 < \lambda_2 < \ldots < \lambda_k < \ldots,$$
ընդ որում՝
$$\lim_{k\to\infty} \lambda_k = +\infty :$$

2. Բոլոր սեփական արժեքները ոչ բացասական են՝ $\lambda_k \geqslant 0, \quad k = 1, 2, \ldots$, ընդ որում՝ $\lambda_0 = 0$ թիվը սեփական արժեք է այն և միայն այն դեպքում, երբ $q(x) \equiv 0$, $\beta_1 = \beta_2 = 0$:

3. Ամեն մի λ_k սեփական արժեքի համապատասխանում է միակ (հաստատուն արտադրիչի ճշտությամբ) $y_k(x)$ սեփական ֆունկցիա, և ամեն մի սեփական ֆունկցիայի համապատասխանում է միակ սեփական արժեք:

4. Սեփական ֆունկցիաները կազմում են օրթոգոնալ համակարգ $\rho(x)$ կշռով՝
$$\int_a^b \rho(x) y_n(x) y_m(x) dx = \begin{cases} 0, & n \neq m, \\ \neq 0, & n = m : \end{cases}$$

5. **Ստեկլովի թեորեմ:** $C^2[a;b]$ դասի ցանկացած $f(x)$ ֆունկցիա, որը բավարարում է (3.37) և (3.38) պայմաններին, ըստ սեփական ֆունկցիաների վերլուծվում է հավասարաչափ զուգամետ Ֆուրյեի շարքի՝
$$f(x) = \sum_{k=1}^{\infty} a_k \, y_k(x), \qquad a \leqslant x \leqslant b,$$
որտեղ՝
$$a_k = \frac{1}{\|y_k\|^2} \int_a^b \rho(x) \, f(x) \, y_k(x) \, dx, \qquad \|y_k\|^2 = \int_a^b \rho(x) \, \big(y_k(x)\big)^2 \, dx, \qquad k = 1, 2, \cdots :$$

Օրինակ 3.16: Լուծել Շտուրմ-Լիուվիլի խնդիրը.

$$\begin{cases} y'' + \lambda y = 0, \quad x \in (0, \ell), \\ y'(0) = 0, \\ y'(\ell) = 0 : \end{cases}$$

Լուծում: Դիտարկենք երկու դեպք:

1. $\lambda = 0$: Այս դեպքում հավասարումն ընդունում է $y'' = 0$ տեսքը, որի ընդհանուր լուծումն է՝ $y(x) = c_1 x + c_2$: $y'(0) = 0$ պայմանից ստանում ենք $c_1 = 0$, ուրեմն՝ $y(x) \equiv c_2$: $y'(\ell) = 0$ պայմանը բավարարված է ցանկացած c_2 թվի դեպքում: Այսպիսով, $\lambda_0 = 0$ թիվը սեփական արժեք է, իսկ նրան համապատասխանող $y_0(x)$ սեփական ֆունկցիան՝ զրոյից տարբեր ցանկացած հաստատուն: Պարզության համար վերցնենք $y_0(x) \equiv 1$:

2. $\lambda > 0$: Այս դեպքում հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$y(x) = c_1 \cos \sqrt{\lambda}\, x + c_2 \sin \sqrt{\lambda}\, x :$$

$y'(0) = 0$ պայմանից՝ $\sqrt{\lambda}\, c_2 = 0$ կամ $c_2 = 0$, որտեղից՝ $y(x) = c_1 \cos \sqrt{\lambda} x$:
$y'(\ell) = 0$ պայմանից՝ $-\sqrt{\lambda}\, c_1 \sin \sqrt{\lambda}\ell = 0$ կամ $\sin \sqrt{\lambda}\ell = 0$, որտեղից՝

$$\lambda_k = \left(\frac{\pi k}{\ell}\right)^2, \quad y_k(x) = \cos \frac{\pi k}{\ell}\, x, \quad k = 1, 2, \ldots :$$

Պատասխան՝ $\lambda_k = \left(\frac{\pi k}{\ell}\right)^2, \qquad y_k(x) = \cos \frac{\pi k}{\ell}\, x, \quad k = 0, 1, 2, \ldots :$

4.2 Լարի տատանման հավասարման համար խառը խնդրի լուծումը փոփոխականների անջատման մեթոդով: Դիտարկենք հետևյալ խառը խնդիրը՝

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \qquad 0 < x < \ell, \;\; t > 0, & (3.39) \\ \alpha\, u_x(0,t) - \beta\, u(0,t) = 0, \qquad t \geqslant 0, & (3.40) \\ \gamma\, u_x(\ell,t) + \delta\, u(\ell,t) = 0, \qquad t \geqslant 0, & (3.41) \\ u(x,0) = \varphi(x), \qquad x \in [0,\ell], & (3.42) \\ u_t(x,0) = \psi(x), \qquad x \in [0,\ell], & (3.43) \end{cases}$$

որտեղ $\varphi(x)$, $\psi(x)$ ֆունկցիաներն անընդհատ են $[0;l]$-ում, իսկ α, β, γ, δ հաստատունները ոչ բացասական են և $\alpha + \beta > 0$, $\gamma + \delta > 0$:

Փնտրենք նույնաբար զրոյից տարբեր

$$u(x,t) = X(x)T(t) \tag{3.44}$$

տեսքի ֆունկցիա, որը բավարարում է (3.39) հավասարմանը և (3.40), (3.41) եզրային պայմաններին: Տեղադրելով (3.39) հավասարման մեջ՝

$$T''(t)\,X(x) - a^2\,T(t)\,X''(x) = 0$$

և անջատելով փոփոխականները, կստանանք՝

$$\frac{X''(x)}{X(x)} = \frac{T''(t)}{a^2\,T(t)}: \tag{3.45}$$

$u(x,t)$ ֆունկցիան կլինի (3.39) հավասարման լուծում, եթե (3.45)-ը լինի նույնություն: Իսկ դա հնարավոր է այն և միայն այն դեպքում, երբ աջ և ձախ մասերը հավասար լինեն նույն հաստատունին: Նշանակելով այդ հաստատունը μ-ով՝

$$\frac{X''(x)}{X(x)} \equiv \frac{T''(t)}{a^2\,T(t)} \equiv \mu,$$

$T(t)$ ֆունկցիայի որոշման համար կստանանք

$$T''(t) - \mu\,a^2\,T(t) = 0 \tag{3.46}$$

հավասարումը, իսկ $X(x)$ ֆունկցիայի որոշման համար՝

$$X''(x) - \mu X(x) = 0 \tag{3.47}$$

հավասարումը:

Որպեսզի (3.44) ֆունկցիան բավարարի (3.40) և (3.41) եզրային պայմաններին, $X(x)$ ֆունկցիան պետք է բավարարի

$$\begin{cases} \alpha\,X'(0) - \beta\,X(0) = 0, & (3.48)\\ \gamma\,X'(\ell) + \delta\,X(\ell) = 0 & (3.49)\end{cases}$$

պայմաններին:

(3.47) հավասարումը ունի (3.48) և (3.49) պայմաններին բավարարող ոչ տրիվիալ լուծում, երբ $\mu \leqslant 0$: Հարմարության համար վերցնենք $\mu = -\lambda^2$:

Այսպիսով, X(x) ֆունկցիայի որոշման համար ստացվեց հետևյալ խնդիրը՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0,\\ \alpha\,X'(0) - \beta\,X(0) = 0,\\ \gamma\,X'(\ell) + \delta\,X(\ell) = 0,\end{cases}$$

որը կանվանենք (3.39)-(3.43) խնդրին համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիր:

Դիցուք գտնվել են այդ խնդրի բոլոր λ_k սեփական արժեքները և $X_k(x)$ սեփական ֆունկցիաները: Դիտարկենք երկու դեպք:

ա) $\beta^2+\delta^2\neq 0$: Այդ դեպքում զրոն սեփական արժեք չէ՝ $\lambda_k>0$: Տեղադրելով (3.46) հավասարման մեջ $\mu=-\lambda_k^2$ և լուծելով այն, կստանանք՝

$$T_k(t)=a_k\cos a\lambda_k t+b_k\sin a\lambda_k t,\qquad k=1,2,\cdots,$$

որտեղ a_k-ն և b_k-ն ցանկացած թվեր են:

Այսպիսով, ստացանք հաշվելի քանակով

$$u_k(x,t)=T_k(t)X_k(x)=\big(a_k\cos a\lambda_k t+b_k\sin a\lambda_k t\big)X_k(x)$$

ֆունկցիաներ, որոնք բավարարում են (3.39) հավասարմանը և (3.40), (3.41) եզրային պայմաններին: Ակնհայտ է, որ (3.39) հավասարմանը և (3.40), (3.41) եզրային պայմաններին կբավարարի նաև

$$u(x,t)=\sum_{k=1}^{\infty}\big(a_k\cos a\lambda_k t+b_k\sin a\lambda_k t\big)X_k(x)\tag{3.50}$$

ֆունկցիան, եթե միայն աջ մասում գրված շարքը և այն շարքերը, որոնք ստացվում են մինչև երկու անգամ անդամ առ անդամ ածանցելիս, հավասարաչափ զուգամետ են:

Պահանջելով, որ (3.50)-ով որոշվող $u(x,t)$ ֆունկցիան բավարարի նաև (3.42) և (3.43) սկզբնական պայմաններին, ստանում ենք

$$\sum_{k=1}^{\infty}a_kX_k(x)=\varphi(x),\qquad \sum_{k=1}^{\infty}b_ka\lambda_kX_k(x)=\psi(x)$$

հավասարությունները, որոնք տեղի կունենան, եթե a_k և $b_k\,a\,\lambda_k$ թվերը լինեն համապատասխանաբար $\varphi(x)$ և $\psi(x)$ ֆունկցիաների Ֆուրյեի գործակիցները՝

$$a_k=\frac{1}{\|X_k\|^2}\int_0^\ell\varphi(x)X_k(x)dx,\qquad b_k=\frac{1}{a\lambda_k\|X_k\|^2}\int_0^\ell\psi(x)X_k(x)dx,\qquad \|X_k\|^2=\int_0^\ell\left(X_k(x)\right)^2dx:\tag{3.51}$$

բ) $\beta=\delta=0$: Այդ դեպքում զրոն սեփական արժեք է՝ $\lambda_0=0$, $\lambda_k>0$, $k\geqslant 1$: $\lambda_0=0$ սեփական արժեքին համապատասխանող $X_0(x)$ սեփական ֆունկցիան զրոյից տարբեր ցանկացած հաստատուն է: Պարզության համար վերցնենք $X_0(x)\equiv 1$:

Երբ $\mu=\lambda_0=0$, (3.46) հավասարման ընդհանուր լուծումն է՝ $T_0(t)=a_0+b_0t$: Այդ դեպքում (3.50) շարքի փոխարեն կվերցնենք

$$u(x,t)=\sum_{k=0}^{\infty}T_k(t)X_k(x)=a_0+b_0t+\sum_{k=1}^{\infty}\big(a_k\cos a\lambda_k t+b_k\sin a\lambda_k t\big)X_k(x)\tag{3.52}$$

շարքը, որտեղ

$$a_0 = \frac{1}{\ell}\int\limits_0^{\ell} \varphi(x)dx, \qquad b_0 = \frac{1}{\ell}\int\limits_0^{\ell} \psi(x)dx,$$

իսկ մյուս՝ $a_k,\ b_k,\ k = 1, 2, \cdots$ գործակիցները որոշվում են (3.51) բանաձևերից:

Այսպիսով, (3.39)-(3.43) խնդիրը լուծելու համար պետք է՝

1. Կազմել խնդրին համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրը:
2. Գտնել ստացված Շտուրմ-Լիուվիլի խնդրի λ_k սեփական արժեքներն ու $X_k(x)$ սեփական ֆունկցիաները:
3. Գտնել a_k և b_k գործակիցները:
4. Տեղադրել (3.50) շարքի կամ, եթե զրոն սեփական արժեք է, (3.52) շարքի մեջ:

Օրինակ 3.17: Լուծել խառը խնդիրը.

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \qquad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad u(\ell, t) = 0, \\ u(x,0) = \cos\dfrac{\pi}{2\ell}x, \ \ u_t(x,0) = \cos\dfrac{3\pi}{2\ell}x + \cos\dfrac{5\pi}{2\ell}x : \end{cases}$$

Լուծում: Համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X'(0) = 0, \\ X(\ell) = 0, \end{cases}$$

որի սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են՝

$$\lambda_k = \frac{\pi(2k-1)}{2\ell}, \qquad X_k(x) = \cos\frac{\pi(2k-1)}{2\ell}x, \qquad k = 1, 2. \cdots :$$

Լուծումը, համաձայն (3.50)-ի, կունենա

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty}\left(a_k\cos\frac{a\pi(2k-1)}{2\ell}t + b_k\sin\frac{a\pi(2k-1)}{2\ell}t\right)\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}x \tag{3.53}$$

տեսքը: Ընտրենք a_k և b_k գործակիցները այնպես, որ $u(x,t)$-ն բավարարի սկզբնական պայմաններին: Տեղադրելով (3.53)-ի մեջ $t = 0$ և օգտվելով

$$u(x,0) = \cos\frac{\pi}{2\ell}x$$

պայմանից, կստանանք՝

$$\sum_{k=1}^{\infty} a_k \cos\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x = \cos\frac{\pi}{2\ell}\,x,$$

որտեղից՝ $a_1 = 1, \;\; a_2 = a_3 = \ldots = 0$ ։

(3.53)-ից՝

$$u_t(x,t) = \\ = \sum_{k=1}^{\infty} \frac{a\pi(2k-1)}{2\ell}\left(-a_k \sin\frac{a\pi(2k-1)}{2\ell}t + b_k \cos\frac{a\pi(2k-1)}{2\ell}t\right)\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}x \;։$$

Տեղադրելով $t = 0$ և օգտվելով

$$u_t(x,0) = \cos\frac{3\pi}{2\ell}x + \cos\frac{5\pi}{2\ell}x$$

պայմանից, կունենանք՝

$$\sum_{k=1}^{\infty} \frac{a\pi(2k-1)}{2\ell}\, b_k \cos\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x = \cos\frac{3\pi}{2\ell}\,x + \cos\frac{5\pi}{2\ell}\,x$$

Այս հավասարությունը տեղի կունենա, եթե վերցնենք

$$b_1 = 0, \quad b_2 = \frac{2\ell}{3a\pi}, \quad b_3 = \frac{2\ell}{5a\pi}, \qquad b_4 = b_5 = \ldots = 0 \;։$$

Ստացված a_k և b_k թվերը տեղադրելով (3.53) շարքի մեջ՝ կստանանք խնդրի լուծումը։

Պատասխան՝

$$u(x,t) = \cos\frac{a\pi}{2\ell}\,t\cos\frac{\pi}{2\ell}\,x + \frac{2\ell}{3a\pi}\cos\frac{3a\pi}{2\ell}\,t\cos\frac{3\pi}{2\ell}\,x + \frac{2\ell}{5a\pi}\cos\frac{5a\pi}{2\ell}\,t\cos\frac{5\pi}{2\ell}\,x \;։$$

Օրինակ 3.18: Լարի $x = 0$ և $x = 5$ ծայրերը ամրացված են։ Սկզբնական $t = 0$ պահին լարը ունի $\varphi(x) = x(x - 5)$ տեսքը, իսկ x աբսցիս ունեցող կետին հաղորդվում է $\psi(x) = x$ արագություն։ Գտնել ժամանակի t պահին $u_{tt} - 25u_{xx} = 0$ հավասարումով որոշվող լարի x աբսցիս ունեցող կետի $u(x,t)$ օրդինատը։

Լուծում: $u(x,t)$ ֆունկցիան

$$\begin{cases} u_{tt} - 25u_{xx} = 0, \quad 0 < x < 5, \;\; t > 0, \\ u(0,t) = 0, \quad u(5,t) = 0, \\ u(x,0) = \varphi(x) = x(x-5), \\ u_t(x,0) = \psi(x) = x \end{cases}$$

խնդրի լուծումն է: Հավասարման լուծումը, որը բավարարում է եզրային պայմաններին, փնտրենք $u(x,t) = X(x)T(t)$ տեսքով: $T(t)$ ֆունկցիայի որոշման համար կստանանք

$$T''(t) + 25\,\lambda^2\,T(t) = 0 \tag{3.54}$$

հավասարումը, իսկ $X(x)$ ֆունկցիայի որոշման համար՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X(0) = 0, \\ X(5) = 0 \end{cases}$$

Շտուրմ-Լիուվիլի խնդիրը: Սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են՝

$$\lambda_k = \frac{\pi k}{5}, \qquad X_k(x) = \sin\frac{\pi k}{5}\,x, \qquad k = 1, 2, \ldots,$$

ընդ որում՝

$$\|X_k(x)\|^2 = \left\|\sin\frac{\pi k}{5}\,x\right\|^2 = \int\limits_0^5 \sin^2\frac{\pi k}{5}\,x dx = \frac{5}{2} :$$

Լուծելով (3.54) հավասարումը, երբ $\lambda = \lambda_k = \dfrac{\pi k}{5}$, կստանանք՝

$$T(t) = T_k(t) = a_k \cos\pi k\,t + b_k \sin\pi k\,t :$$

Խնդրի լուծումը փնտրենք

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty} T_k(t)X_k(x) = \sum_{k=1}^{\infty}\Big(a_k\cos\pi k\,t + b_k\sin\pi k\,t\Big)\sin\frac{\pi k}{5}\,x \tag{3.55}$$

շարքի տեսքով: Որոշենք a_k և b_k գործակիցներն այնպես, որ բավարարվեն սկզբնական պայմանները.

$$a_k = \frac{1}{\|X_k(x)\|^2}\int\limits_0^5 \varphi(x)X_k(x)\,dx = \frac{2}{5}\int\limits_0^5 x(x-5)\sin\frac{\pi kx}{5}\,dx =$$

$$= \frac{2}{5}\left(-\frac{5x(x-5)}{\pi k}\cos\frac{\pi kx}{5}\,\Big|_0^5 + \frac{5}{\pi k}\int\limits_0^5 (2x-5)\cos\frac{\pi kx}{5}\,dx\right) =$$

$$= \frac{2}{\pi k}\left(\frac{(2x-5)\cdot 5}{\pi k}\sin\frac{\pi kx}{5}\Big|_0^5 - \frac{10}{\pi k}\int\limits_0^5 \sin\frac{\pi kx}{5}\,xdx\right) =$$

$$= \frac{2}{\pi k}\left(\frac{25}{\pi k}\sin\pi k + \frac{25}{\pi k}\sin 0 + \frac{50}{\pi^2k^2}\cos\frac{\pi kx}{5}\Big|_0^5\right) =$$

$$= \frac{100}{\pi^3k^3}\big(\cos\pi k - \cos 0\big) = \frac{100}{\pi^3k^3}\big((-1)^k - 1\big),$$

$$b_k = \frac{1}{5\lambda_k\|X_k(x)\|^2}\int\limits_0^5 \psi(x)X_k(x)dx = \frac{2}{5\pi k}\int\limits_0^5 x\sin\frac{\pi kx}{5}dx =$$

$$= \frac{2}{5\pi k}\left(-\frac{5x}{\pi k}\cos\frac{\pi kx}{5}\Big|_0^5 + \frac{5}{\pi k}\int\limits_0^5 \cos\frac{\pi kx}{5}\,dx\right) =$$

$$= \frac{2}{5\pi k}\left(-\frac{25}{\pi k}\cos\pi k + 0\cdot\cos 0 + \frac{5}{\pi k}\int\limits_0^5 \cos\frac{\pi kx}{5}\,dx\right) =$$

$$= \frac{2}{5\pi k}\left(-\frac{25}{\pi k}(-1)^k + \frac{25}{\pi^2k^2}\sin\frac{\pi kx}{5}\Big|_0^5\right) =$$

$$= \frac{10}{\pi^2k^2}(-1)^{k+1} + \frac{10}{\pi^3k^3}\big(\sin\pi k - \sin 0\big) = \frac{10}{\pi^2k^2}(-1)^{k+1}:$$

Տեղադրելով (3.55) շարքի մեջ՝ կստանանք խնդրի լուծումը:

Պատասխան՝

$$u(x,t) = \frac{10}{\pi^2}\sum_{k=1}^{\infty}\left(\frac{10}{\pi k^3}\big((-1)^k - 1\big)\cos\pi kt + \frac{(-1)^{k+1}}{k^2}\sin\pi kt\right)\sin\frac{\pi kx}{5}:$$

Օրինակ 3.19: Ձողի մի ծայրը ամրացված է, իսկ մյուս ծայրում ազդում է Q ուժը: Գտնել ձողի երկայնական տատանումները, եթե $t=0$ պահից այդ ուժը դադարել է գործել:

Լուծում: Դիցուք ձողը ունի ℓ երկարություն, E Յունգի մոդուլ, ρ խտություն, σ լայնական կտրվածքի մակերես: Ձողի ազատ երկայնական տատանումների հավասարումն է՝

$$u_{tt} - a^2u_{xx} = 0, \qquad a^2 = E/\rho: \tag{3.56}$$

Ենթադրենք ամրացված է ձողի $x = 0$ ծայրը՝

$$u(0,t) = 0, \quad t \geqslant 0, \tag{3.57}$$

իսկ $x = \ell$ ծայրը, երբ ուժը դադարում է գործել, ազատ է՝

$$u_x(\ell,t) = 0, \quad t \geqslant 0: \tag{3.58}$$

Խնդրի դրվածքից պարզ է, որ ուղղահայաց հատույթների սկզբնական արագությունները զրո են՝

$$u_t(x,0) = 0, \qquad 0 \leqslant x \leqslant 0: \tag{3.59}$$

Գտնենք հատույթների սկզբնական շեղումները: Ձողի բոլոր կետերում T լարման ուժը ժամանակի $t = 0$ պահին հավասար է Q-ի: Մյուս կողմից, Հուկի օրենքի համաձայն՝

$$T = E\sigma \, \frac{\partial u}{\partial x} \Big|_{t=0},$$

որտեղից՝

$$\frac{\partial u}{\partial x} \Big|_{t=0} = \frac{Q}{E\sigma}:$$

Ինտեգրելով կստանանք՝

$$u(x,0) = \frac{Q}{E\sigma} \, x + C:$$

C հաստատունը որոշենք օգտվելով (3.57)-ից: Երբ $t = 0$ և $x = 0$, ունենք $u(0,0) = C = 0$: Ուրեմն՝

$$u(x,0) = \frac{Q}{E\sigma} \, x \qquad 0 \leqslant x \leqslant \ell: \tag{3.60}$$

Այսպիսով, պետք է գտնել (3.56) հավասարման այն լուծումը, որը բավարարում է (3.57), (3.58) եզրային և (3.59), (3.60) սկզբնական պայմաններին:

Ստացված խնդրին համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X(0) = 0, \\ X'(\ell) = 0, \end{cases}$$

որի սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են՝

$$\lambda_k = \frac{\pi(2k-1)}{2\ell}, \qquad X_k(x) = \sin\lambda_k\, x, = \sin\frac{\pi(2k-1)}{2\ell}x, \qquad k = 1, 2, \cdots :$$

Խնդրի լուծումը, համաձայն (3.50)-ի, ունի

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty}\left(a_k \cos\frac{a\pi(2k-1)}{2\ell}t + b_k \sin\frac{a\pi(2k-1)}{2\ell}t\right)\sin\frac{\pi(2k-1)}{2\ell}x$$

տեսքը: Գտնենք a_k և b_k գործակիցները՝ օգտվելով (3.59) և (3.60) սկզբնական պայմաններից:

(3.59) պայմանից ստացվում է $b_k = 0$: (3.60)-ից՝

$$u(x,0) = \sum_{r=1}^{\infty} a_k \sin\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x = \frac{Q}{E\sigma}\,x,$$

որտեղից՝

$$a_k = \frac{1}{\|\sin\lambda_k\, x\|^2}\int_0^{\ell}\frac{Q}{E\sigma}\,x\sin\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x\,dx :$$

Ունենք

$$\|\sin\lambda_k\, x\|^2 = \int_0^{\ell}\sin^2\lambda_k\, x\,dx = \int_0^{\ell}\sin^2\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x\,dx = \frac{2}{\ell},$$

հետևաբար՝

$$a_k = \frac{Ql}{2E\sigma}\int_0^{\ell} x\sin\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x\,dx =$$

$$= -\frac{4Q}{E\sigma\pi(2k-1)}\left(x\sin\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x\,\Bigg|_0^{\ell} - -\int_0^{\ell}\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x\,dx\right) =$$

$$= \frac{8Ql}{E\sigma\pi^2(2k-1)^2}\sin\frac{\pi(2k-1)}{2\ell}\,x\,\Bigg|_0^{\ell} = \frac{(-1)^{k-1}\,8Ql}{E\sigma\pi^2(2k-1)^2} :$$

Ստացված գործակիցները տեղադրելով շարքի մեջ՝ կստանանք խնդրի լուծումը:

Պատասխան՝

$$u(x,t) = \frac{8Ql}{E\sigma\pi^2}\sum_{k=1}^{\infty}\frac{(-1)^{k-1}}{(2k-1)^2}\cos\frac{a\pi(2k-1)}{2\ell}\,t\sin\frac{a\pi(2k-1)}{2\ell}\,x :$$

Օրինակ 3.20: Լուծել խառը խնդիրը.

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \qquad 0 < x < \ell, \;\; t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad u_x(\ell,t) = 0, \\ u(x,0) = x, \;\; u_t(x,0) = 1 : \end{cases}$$

Լուծում: Համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X'(0) = 0, \\ X'(\ell) = 0, \end{cases}$$

որի սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են՝

$$\lambda_k = \frac{\pi k}{\ell}, \qquad X_k(x) = \cos\frac{\pi k}{\ell}x, \quad k = 0, 1, 2, \ldots :$$

Համաձայն (3.52)-ի՝

$$u(x,t) = a_0 + b_0 t + \sum_{k=1}^{\infty}\left(a_k \cos\frac{a\pi k}{\ell}t + b_k \sin\frac{a\pi k}{\ell}t\right)\cos\frac{\pi k}{\ell}x : \tag{3.61}$$

Ընտրենք a_k և b_k գործակիցները այնպես, որ $u(x,t)$-ն բավարարի սկզբնական պայմաններին:

$u(x,0) = x$ պայմանից՝

$$a_0 + \sum_{k=0}^{\infty} a_k \cos\frac{\pi k}{\ell}x = x,$$

որտեղից՝

$$a_0 = \frac{1}{\ell}\int_0^{\ell} x dx = \frac{\ell}{2},$$

$$a_k = \frac{2}{\ell}\int_0^{\ell} x\cos\frac{\pi k}{\ell}x\,dx = \frac{2}{\pi k}\int_0^{\ell} x\,d\left(\sin\frac{\pi k}{\ell}x\right) =$$

$$= \frac{2}{\pi k}\left(x\sin\frac{\pi k}{\ell}x\Big|_0^{\ell} - \int_0^{\ell}\sin\frac{\pi k}{\ell}x dx\right) = \frac{2}{\pi k}\left(0 + \frac{\ell}{\pi k}\cos\frac{\pi k}{\ell}x\Big|_0^{\ell}\right) =$$

$$= \frac{2}{\pi k}\left(\frac{\ell}{\pi k}\cos\pi k - \frac{\ell}{\pi k}\right) = \frac{2\ell}{\pi^2 k^2}((-1)^k - 1), \quad k = 1, 2, \ldots :$$

Ածանցելով (3.61)-ը ըստ t-ի, կստանանք՝

$$u_t(x,t) = b_0 + \sum_{k=1}^{\infty} \frac{a\pi k}{\ell}\left(-a_k \sin\frac{a\pi k}{\ell}t + b_k \cos\frac{a\pi k}{\ell}t\right)\cos\frac{\pi k}{\ell}x :$$

$u_t(x,0) = 1$ պայմանից՝

$$b_0 + \sum_{k=1}^{\infty} \frac{a\pi k}{\ell}\, b_k \cos\frac{\pi k}{\ell}x = 1,$$

որտեղից՝

$$b_0 = 1, \qquad b_1 = b_2 = \cdots = 0 :$$

Ստացված a_k և b_k թվերը տեղադրելով (3.61) շարքի մեջ, կստանանք՝

$$u(x,t) = t + \frac{\ell}{2} + \sum_{k=1}^{\infty} \frac{2\ell}{\pi^2 k^2}((-1)^k - 1)\cos\frac{a\pi k}{\ell}t \cos\frac{\pi k}{\ell}x :$$

Պատասխան՝

$$u(x,t) = t + \frac{\ell}{2} - \frac{4\ell}{\pi^2}\sum_{n=0}^{\infty} \frac{1}{(2n+1)^2}\cos\frac{a\pi(2n+1)}{\ell}t \cos\frac{\pi(2n+1)}{\ell}x :$$

Օրինակ 3.21: Լուծել խառը խնդիրը.

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = 0, \qquad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u_x(0,t) - hu(0,t) = 0, \quad u_x(\ell,t) = 0, \\ u(x,0) = \varphi(x), \ \ u_t(x,0) = \psi(x) : \end{cases}$$

Լուծում: Համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X`(0) - hX(0) = 0, \\ X'(\ell) = 0 : \end{cases}$$

Զրոն սեփական արժեք չէ $(\lambda \neq 0)$, հետևաբար՝

$$X(x) = c_1 \cos\lambda x + c_2 \sin\lambda x : \tag{3.62}$$

Եզրային պայմաններից՝

$$\begin{cases} \lambda c_2 - hc_1 = 0, \\ \lambda(-c_1 \sin\lambda\ell + c_2\cos\lambda\ell) = 0 : \end{cases}$$

Առաջին հավասարումից՝

$$c_1 = \frac{\lambda}{h}\, c_2 \, : \tag{3.63}$$

Տեղադրենք երկրորդ հավասարման մեջ՝

$$c_2\left(\frac{\lambda}{h}\ \sin\lambda\ell + \cos\lambda\ell\right) = 0,$$

որտեղից λ-ների որոշման համար կստանանք

$$\lambda\sin\lambda\ell + h\cos\lambda\ell = 0$$

հավասարումը: Այն կարելի է գրել

$$h\,\mathrm{ctg}\,\lambda\ell = \lambda$$

տեսքով: Շտուրմ-Լիուվիլի խնդրի λ_k սեփական արժեքները այդ հավասարման դրական արմատներն են՝

$$\mathrm{ctg}\,\lambda_k\ell = \frac{\lambda_k}{h}, \qquad k = 1, 2, \cdots : \tag{3.64}$$

(3.62)-ում տեղադրելով λ-ի փոխարեն λ_k և հաշվի առնելով (3.63)-ը՝ կստանանք սեփական ֆունկցիաները c_2 հաստատուն արտադրիչի ճշտությամբ՝

$$X_k(x) = c_2\left(\frac{\lambda_k}{h}\cos\lambda_k x + \sin\lambda_k x\right) \qquad k = 1, 2, \cdots :$$

Պարզության համար վերցնենք $c_2 = h$: Այսպիսով,

$$X_k(x) = \lambda_k\cos\lambda_k x + h\ \sin\lambda_k x, \qquad k = 1, 2, \cdots :$$

(3.50)-ից՝

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty}(a_k\cos a\lambda_k t + b_k\sin a\lambda_k t)(\lambda_k\cos\lambda_k x + h\ \sin\lambda_k x) \, : \tag{3.65}$$

a_k և b_k գործակիցները որոշվում են (3.51)-ից.

$$\|X_k(x)\|^2 = \int_0^\ell (\lambda_k \cos\lambda_k x + h\sin\lambda_k x)^2 dx =$$

$$= \lambda_k^2 \int_0^\ell \cos^2\lambda_k x dx + 2\lambda_k h \int_0^\ell \sin\lambda_k x \cos\lambda_k x dx + h^2 \int_0^\ell \sin^2\lambda_k x dx =$$

$$= \lambda_k^2 \int_0^\ell \left(\frac{1}{2} + \frac{1}{2}\cos 2\lambda_k x\right) dx + \lambda_k h \int_0^\ell \sin 2\lambda_k x dx + h^2 \int_0^\ell \left(\frac{1}{2} - \frac{1}{2}\cos 2\lambda_k x\right) dx =$$

$$= \lambda_k^2 \left(\frac{l}{2} + \frac{1}{4\lambda_k}\sin 2\lambda_k \ell\right) - \frac{h}{2}\left(\cos 2\lambda_k - 1\right) + h^2\left(\frac{\ell}{2} - \frac{1}{4\lambda_k}\sin 2\lambda_k \ell\right) =$$

$$= \frac{\lambda_k^2\ell + h^2\ell + h}{2} + \frac{\lambda_k^2 - h^2}{4\lambda_k}\sin 2\lambda_k\ell - \frac{h}{2}\cos 2\lambda_k \ell =$$

$$= \frac{\lambda_k^2\ell + h^2\ell + h}{2} + \frac{\lambda_k^2 - h^2}{4\lambda_k} \cdot \frac{2\,\mathrm{ctg}\,\lambda_k\ell}{\mathrm{ctg}^2\,\lambda_k\ell + 1} - \frac{h}{2} \cdot \frac{\mathrm{ctg}^2\,\lambda_k\ell - 1}{\mathrm{ctg}^2\,\lambda_k\ell + 1} :$$

Հաշվի առնելով (3.64)-ը՝

$$\|X_k(x)\|^2 = \frac{\lambda_k^2\ell + h^2\ell + h}{2} + \frac{\lambda_k^2 - h^2}{4\lambda_k} \cdot \frac{2\lambda_k h}{\lambda_k^2 + h^2} - \frac{h}{2} \cdot \frac{\lambda_k^2 - h^2}{\lambda_k^2 + h^2} = \frac{\ell(h^2 + \lambda_k^2) + h}{2} :$$

Պատասխան՝

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty} (a_k \cos a\lambda_k t + b_k \sin a\lambda_k t)(\lambda_k \cos\lambda_k x + h\ \sin\lambda_k x),$$

$$a_k = \frac{2}{\ell(h^2 + \lambda_k^2) + h} \int_0^\ell \varphi(x) X_k(x) dx, \quad b_k = \frac{2}{a\lambda_k(\ell(h^2 + \lambda_k^2) + h)} \int_0^\ell \psi(x) X_k(x) dx,$$

λ_k թվերը $h\,\mathrm{ctg}\,\lambda\ell = \lambda$ հավասարման դրական արմատներն են:

Խնդիրներ

$0 < x < \ell$, $t > 0$ տիրույթում գտնել $u_{tt} - a^2 u_{xx} = 0$ հավասարման այն $u(x,t)$ լուծումը, որը բավարարում է նշված եզրային և սկզբնական պայմաններին.

266. $u(0,t) = 0$, $u(\ell,t) = 0$, $u(x,0) = 0$, $u_t(x,0) = \sin\dfrac{2\pi}{\ell}x$:

267. $u(0,t) = 0$, $u_x(\ell,t) = 0$, $u(x,0) = \sin\dfrac{5\pi}{2\ell}x$, $u_t(x,0) = \sin\dfrac{\pi}{2\ell}x$:

268. $u(0,t)=0,\ \ u_x(\ell,t)=0,\ \ u(x,0)=x,\ \ u_t(x,0)=\sin\dfrac{\pi}{2\ell}x+\sin\dfrac{3\pi}{2\ell}x$:

269. $u_x(0,t)=0,\ \ u_x(\ell,t)=0,\ \ u(x,0)=\cos\dfrac{\pi}{\ell}x,\ \ u_t(x,0)=\cos\dfrac{5\pi}{\ell}x$:

270. $u_x(0,t)=0,\ \ u(\ell,t)=0,\ \ u(x,0)=\varphi(x),\ \ u_t(x,0)=\psi(x)$:

271. $u_x(0,t)=0,\ \ u_x(\ell,t)=0,\ \ u(x,0)=\varphi(x),\ \ u_t(x,0)=\psi(x)$:

272. $u(0,t)=0,\ \ u(\ell,t)=0,\ \ u(x,0)=hx(\ell-x),\ \ u_t(x,0)=0$:

273. $u(0,t)=0,\ \ u(\ell,t)=0,\ \ u(x,0)=0,\ \ u_t(x,0)=hx(\ell-x)$:

274. $u(0,t)=0,\ \ u_x(\ell,t)=0,\ \ u(x,0)=Ax,\ \ u_t(x,0)=0$:

275. $u(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+hu(\ell,t)=0,\ \ h>0,\ \ u(x,0)=\varphi(x),\ \ u_t(x,0)=\psi(x)$:

276. $u(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+hu(\ell,t)=0,\ \ h>0,\ \ u(x,0)=0,\ \ u_t(x,0)=x$:

277. $u_x(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+hu(\ell,t)=0,\ \ h>0,;\ u(x,0)=\varphi(x),\ \ u_t(x,0)=\psi(x)$:

278. $u_x(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+hu(\ell,t)=0,\ \ h>0,\ \ u(x,0)=0,\ \ u_t(x,0)=1$:

279. $u_x(0,t)-hu(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+hu(\ell,t)=0,\ \ h>0,\ \ u(x,0)=\varphi(x),\ \ u_t(x,0)=\psi(x)$:

280. $u_x(0,t)-hu(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+hu(\ell,t)=0,\ \ h>0,\ \ u(x,0)=1,\ \ u_t(x,0)=0$:

281. $u_x(0,t)-h_1u(0,t)=0,\ \ u_x(\ell,t)+h_2u(\ell,t)=0,\ \ h_1>0,\ h_2>0,$
$u(x,0)=\varphi(x),\ \ u_t(x,0)=\psi(x)$:

Լուծել $u_{tt}-a^2u_{xx}=0$ հավասարումով որոշվող լարի տատանման խնդիրը, եթե ծայրերը ամրացված են, սկզբնական շեղումը $\varphi(x)$ է, իսկ սկզբնական արագությունը՝ $\psi(x),\ 0\leqslant x\leqslant\ell$.

282. $\varphi(x)$-ը սինուսոիդ է՝ $\varphi(x)=A\sin\dfrac{\pi nx}{\ell},\quad n\in N,\quad \psi(x)\equiv 0$:

283. $\varphi(x)$-ը OAB բեկյալն է, որտեղ $O(0,0),\ \ A(c,h),\ \ B(\ell,0),\ \ 0<c<\ell,\ \ \psi(x)\equiv 0$: Դիտարկել $c=\ell/2$ դեպքը:

284. $\varphi(x)\equiv 0,\ \ \psi(x)=v_0=\text{const.}$:

285. $\varphi(x)\equiv 0,\ \ \psi(x)=\begin{cases}0, & 0\leqslant x<\alpha,\\ v_0, & \alpha\leqslant x\leqslant\beta,\\ 0, & \beta<x\leqslant\ell\ :\end{cases}$

286. $\varphi(x)\equiv 0,\ \ \psi(x)=\begin{cases}A\cos\dfrac{\pi(x-x_0)}{2\alpha}x, & |x-x_0|\leqslant\alpha,\\ 0, & |x-x_0|>\alpha,\end{cases}\qquad 0\leqslant x_0-\alpha<x_0+\alpha\leqslant\ell$:

4.3 Անհամասեռ հավասարում, համասեռ եզրային պայմաններ: Փոփոխականների անջատման մեթոդը թույլ է տալիս կառուցել խառը խնդիրների լուծումը նաև այն դեպքում, երբ հավասարումն անհամասեռ է: Դիտարկենք լարի տատանման անհամասեռ հավասարման համար խառը խնդիրը`

$$\begin{cases} u_{tt} - a^2 u_{xx} = f(x,t), \qquad 0 < x < \ell, \;\; t > 0, & (3.66) \\ \alpha\, u_x(0,t) - \beta\, u(0,t) = 0, \qquad t \geqslant 0, & (3.67) \\ \gamma\, u_x(\ell,t) + \delta\, u(\ell,t) = 0, \qquad t \geqslant 0, & (3.68) \\ u(x,0) = \varphi(x), & (3.69) \\ u_t(x,0) = \psi(x) : & (3.70) \end{cases}$$

Դիցուք $X_k(x), \;\; k = 1, 2, \cdots$ ֆունկցիաները

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, & (3.71) \\ \alpha\, X'(0)) - \beta\, X(0) = 0, & (3.72) \\ \gamma\, X'(\ell) + \delta\, X(\ell) = 0 & (3.73) \end{cases}$$

Շտուրմ-Լիուվիլի խնդրի λ_k սեփական արժեքներին համապատասխանող սեփական ֆունկցիաներն են:

(3.66)-(3.70) խնդրի լուծումը փնտրենք

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty} u_k(t) X_k(x) \tag{3.74}$$

շարքի տեսքով: Քանի որ $X_k(x)$ ֆունկցիաները բավարարում են (3.72) և (3.73) պայմաններին, ապա (3.74) շարքի $u(t,x)$ գումարը կբավարարի (3.67) և (3.68) եզրային պայմաններին: $u_k(t)$ ֆունկցիաներն ընտրենք այնպես, որ այն բավարարի նաև (3.66) հավասարմանն ու (3.69), (3.70) սկզբնական պայմաններին:

$f(x,t)$ ֆունկցիան x-ի նկատմամբ վերլուծենք Ֆուրյեի շարքի` ըստ $X_k(x)$ սեփական ֆունկցիաների`

$$f(x,t) = \sum_{k=1}^{\infty} f_k(t) X_k(x)\,, \tag{3.75}$$

որտեղ`

$$f_k(t) = \frac{1}{\|X_k\|^2} \int_0^{\ell} f(x,t) X_k(x) dx, \qquad k = 1, 2, \cdots :$$

(3.74)-ը և (3.75)-ը տեղադրելով (3.66) հավասարման մեջ, կստանանք՝

$$u(x,y,t) = I_1(x,y,t) + \int\limits_0^t I_2(x,y,t,\tau)d\tau = bx\sin ye^{-a^2t} + xy\int\limits_0^t e^{-\tau}d\tau =$$
$$= bx\sin ye^{-a^2t} + xy\big(1-e^{-t}\big)\ :$$

Պատասխան՝ $u(x,y,t) = bx\sin y\, e^{-a^2t} + xy\big(1-e^{-t}\big)\ :$

2.3 Կոշիի խնդրի լուծումը շարքերի միջոցով: Դիտարկենք համասեռ ջերմահաղորդականության հավասարման համար Կոշիի խնդիրը.

$$\begin{cases} u_t - a^2\Delta\, u = 0, \qquad x = (x_1, x_2, \cdots, x_n) \in \mathrm{R}^n, \quad t > 0, \\ u\big|_{t=0} = \varphi(x_1, x_2, \cdots, x_n)\ : \end{cases} \tag{4.8}$$

Անմիջական տեղադրումով կարելի է ստուգել, որ եթե φ ֆունկցիան անվերջ դիֆերենցելի է, ապա

$$u(x,t) = \sum_{k=0}^{\infty} \frac{a^{2k}t^k}{k!}\,\Delta^k\varphi(x_1, x_2, \cdots, x_n) \tag{4.9}$$

ֆունկցիան (4.8) խնդրի լուծումն է, եթե միայն աջ մասում գրված շարքը և այն շարքերը, որոնք ստացվում են մինչև երկու անգամ անդամ առ անդամ ածանցելիս, հավասարաչափ զուգամետ են:

Ակնհայտ է, որ τ պարամետրից կախված

$$\begin{cases} u_t -\ a^2\Delta\, u = 0, \\ u\big|_{t=\tau} = \varphi(x_1, x_2, \cdots, x_n, \tau), \end{cases} \tag{4.10}$$

խնդրի լուծումը կստացվի (4.9)-ից՝ t-ի փոխարեն տեղադրելով $(t-\tau)$.

$$u(x,t,\tau) = \sum_{k=0}^{\infty} \frac{a^{2k}(t-\tau)^k}{k!}\,\Delta^k\varphi(x_1, x_2, \cdots, x_n, \tau)\ : \tag{4.11}$$

Անհամասեռ հավասարման համար

$$\begin{cases} w_t - a^2\Delta\, w = f(x_1, x_2, \cdots, x_n, t), \\ w\big|_{t=0} = 0 \end{cases} \tag{4.12}$$

խնդրի $w(x,t)$ լուծումը, համաձայն Դյուամելի սկզբունքի, կստացվի

$$\begin{cases} H_t - a^2\Delta\, H = 0, \\ H\big|_{t=\tau} = f(x_1, x_2, \cdots, x_n, t, \tau) \end{cases} \tag{4.13}$$

խնդրի $H(x,t,\tau)$ լուծումից՝

$$w(x,t) = \int\limits_0^t H(x,t,\tau)d\tau : \tag{4.14}$$

Օրինակ 4.4: Լուծել խնդիրը.

$$\begin{cases} u_t - a^2\Delta\, u = t\sin(x+y), \\ u(x,y,0) = \cos(x+y) : \end{cases} \tag{4.15}$$

Լուծում: Եթե v ֆունկցիան

$$\begin{cases} v_t - \Delta\, v = 0, \\ v(x,y,0) = \cos(x+y) \end{cases} \tag{4.16}$$

խնդրի լուծումն է, իսկ w ֆունկցիան՝

$$\begin{cases} w_t - \Delta\, w = t\sin(x+y), \\ w(x,y,0) = 0 \end{cases} \tag{4.17}$$

խնդրի, ապա (4.15) խնդրի լուծումը կստացվի այդ ֆունկցիաները գումարելով՝ $u = v + w$:

Գտնենք (4.16) խնդրի լուծումը՝ օգտվելով (4.9)-ից.

$$v(x,y,t) = \sum_{k=0}^{\infty} \frac{a^{2k}t^k}{k!}\,\Delta^k(\cos(x+y)) = \sum_{k=0}^{\infty} \frac{a^{2k}t^k}{k!}\,(-2)^k\cos(x+y) =$$
$$= \cos(x+y)\sum_{k=0}^{\infty}\frac{(-2a^2t)^k}{k!} = e^{-2a^2t}\cos(x+y) :$$

(4.17) խնդիրը լուծելու համար կազմենք $H(x,y,t,\tau)$ ֆունկցիայի նկատմամբ հետևյալ օժանդակ խնդիրը՝

$$\begin{cases} H_t - \Delta\, H = 0, \\ H\big|_{t=\tau} = \tau\sin(x+y), \end{cases}$$

որի լուծումը կարելի է գտնել՝ օգտվելով (4.11)-ից.

$$H(x,y,t,\tau)=\sum_{k=0}^{\infty}\frac{a^{2k}(t-\tau)^k}{k!}\,\Delta^k\big(\tau\sin(x+y)\big)=\sum_{k=0}^{\infty}\frac{a^{2k}(t-\tau)^k}{k!}\,\tau(-2)^k\sin(x+y)=$$

$$=\tau\sin(x+y)\sum_{k=0}^{\infty}\frac{(-2a^2(t-\tau))^k}{k!}=\tau\sin(x+y)\,e^{-2a^2(t-\tau)}\ :$$

Այժմ, օգտվելով (4.14) Դյուամելի սկզբունքից, գտնենք (4.17) խնդրի լուծումը՝

$$w(x,y,t)=\int_0^t H(x,y,t,\tau)d\tau=\int_0^t\ \tau\sin(x+y)\,e^{-2a^2(t-\tau)}d\tau=$$

$$=\sin(x+y)e^{-2a^2t}\int_0^t\tau\,e^{2a^2\tau}d\tau=\sin(x+y)\Big(\frac{t}{2a^4}-\frac{1}{4a^4}\Big(1-e^{-2t}\Big)\Big)\ :$$

(4.15) խնդրի լուծումը կստացվի գումարելով $v(x,y,t)$ և $w(x,y,t)$ ֆունկցիաները:

Պատասխան՝ $u(x,y,t)=e^{-2a^2t}\cos(x+y)+\sin(x+y)\Big(\frac{t}{2a^2}-\frac{1}{4a^4}\Big(1-e^{-2a^2t}\Big)\Big)\ :$

Խնդիրներ

Լուծել Կոշիի խնդիրը $(-\infty<x<+\infty)$.

321. $$\begin{cases}u_t-a^2u_{xx}=0,\\ u(x,0)=\varphi(x)=\begin{cases}1, & 0\leqslant x\leqslant\ell,\\ 0, & x<0,\ \ x>\ell\ :\end{cases}\end{cases}$$

322. $$\begin{cases}u_t-a^2u_{xx}=0,\\ u(x,0)=\varphi(x)=\begin{cases}u_0, & x_1\leqslant x\leqslant x_2,\\ 0, & x<x_1,\ \ x>x_2\ :\end{cases}\end{cases}$$

323. $$\begin{cases}u_t-a^2u_{xx}=0,\\ u(x,0)=\varphi(x)=\begin{cases}\frac{1}{\ell}, & -\ell\leqslant x<0,\\ 1, & 0\leqslant x\leqslant\ell,\\ 0 & x<-\ell,\ \ x>\ell,\quad \ell>0\ :\end{cases}\end{cases}$$

324. $\begin{cases} 4u_t - u_{xx} = 0, \\ u(x,0) = e^{2x-x^2} : \end{cases}$

325. $\begin{cases} u_t - u_{xx} = 0, \\ u(x,0) = xe^{-x^2} : \end{cases}$

326. $\begin{cases} 4u_t - u_{xx} = 0, \\ u(x,0) = \sin x \, e^{-x^2} : \end{cases}$

327. $\begin{cases} u_t - 4u_{xx} = t + e^t, \\ u(x,0) = 2 : \end{cases}$

328. $\begin{cases} u_t - u_{xx} = 3t^2, \\ u(x,0) = \sin x : \end{cases}$

329. $\begin{cases} u_t - u_{xx} = \cos x \, e^{-t}, \\ u(x,0) = \cos x : \end{cases}$

330. $\begin{cases} u_t - u_{xx} = \sin x \, e^t, \\ u(x,0) = \sin x : \end{cases}$

331. $\begin{cases} u_t - u_{xx} = \sin t, \\ u(x,0) = e^{-x^2} : \end{cases}$

332. $\begin{cases} u_t - u_{xx} - u = e^t, \\ u(x,0) = \cos x : \end{cases}$

333. $\begin{cases} u_t - 4u_{xx} - 2u = e^t, \\ u(x,0) = \cos x : \end{cases}$

334. $\begin{cases} u_t - u_{xx} - u = t \sin x, \\ u(x,0) = 1 : \end{cases}$

335. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} - bu_x - cu = 0, \\ u(x,0) = e^{-x^2} : \end{cases}$

Լուծել Կոշիի խնդիրը $(-\infty < x, y < +\infty,\ \Delta u = u_{xx} + u_{yy})$.

336. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = x^2 y + xy^2 + xy : \end{cases}$

337. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = (x+y)^5 : \end{cases}$

338. $\begin{cases} 2u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = \cos xy : \end{cases}$

339. $\begin{cases} u_t - \Delta u = e^t, \\ u\big|_{t=0} = \cos x \sin y : \end{cases}$

340. $\begin{cases} u_t - \Delta u = \sin t \sin x \sin y, \\ u\big|_{t=0} = 1 : \end{cases}$

341. $\begin{cases} u_t - \Delta u = \cos t, \\ u\big|_{t=0} = xye^{-x^2-y^2} : \end{cases}$

342. $\begin{cases} 8u_t - \Delta u = 1, \\ u\big|_{t=0} = e^{-(x-y)^2} : \end{cases}$

Լուծել Կոշիի խնդիրը $(-\infty < x, y, z < +\infty,\ \Delta u = u_{xx} + u_{yy} + u_{zz})$.

343. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = (x^2 + y^2 + z^2)^2 : \end{cases}$

344. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = (xyz)^2 : \end{cases}$

345. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = (xyz)^3 : \end{cases}$

346. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = x^2 y^2 + x^2 z^2 + y^2 z^2 : \end{cases}$

347. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = x^3 + y^3 + z^3 : \end{cases}$

348. $\begin{cases} u_t - \Delta u = 0, \\ u\big|_{t=0} = \cos(xy)\sin z : \end{cases}$

349. $\begin{cases} u_t - 2\Delta u = t\cos x, \\ u\big|_{t=0} = \cos y \cos z : \end{cases}$

350. $\begin{cases} u_t - 3\Delta u = e^t, \\ u\big|_{t=0} = \sin(x - y - z) : \end{cases}$

351. $\begin{cases} 4u_t - \Delta u = \sin 2z, \\ u\big|_{t=0} = \cos 2y e^{-x^2} : \end{cases}$

352. $\begin{cases} u_t - \Delta u = \cos(x - y + z), \\ u\big|_{t=0} = e^{-(x+y-z)^2} : \end{cases}$

§ 3. Խառը խնդիրներ կիսաառանցքում

Դիցուք ունենք կիսաանվերջ ձող, որի առանցքն ընկած է $[0, +\infty)$ դրական կիսաառանցքի վրա: Այս դեպքում ձողի $u(x,t)$ ջերմաստիճանը, բացի սկզբնական պայմանից, պետք է բավարարի նաև որևէ եզրային պայմանի ձողի ձախ՝ $x = 0$ ծայրում: Այդպիսի խնդիրը կոչվում է խառը խնդիր: Կախված եզրային պայմանից այն կարելի է բերել Կոշիի խնդրի՝ կենտ կամ զույգ ձևով շարունակելով սկզբնական ֆունկցիան:

Օրինակ 4.5: Լուծել խառը խնդիրը, որտեղ $\varphi(x)$-ը տրված սահմանափակ ֆունկցիա է.

$$\begin{cases} u_t - a^2\, u_{xx} = 0, \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty : \end{cases}$$

Լուծում: Կազմենք

$$\begin{cases} U_{tt} - a^2\, U_{xx} = 0, \quad -\infty < x < +\infty, \quad t > 0, \\ U(x,0) = \Phi(x), \quad -\infty < x < +\infty \end{cases}$$

Կոշիի խնդիրը, որտեղ $\Phi(x)$-ը $\varphi(x)$-ի կենտ շարունակությունն է՝

$$\Phi(x) = \begin{cases} \varphi(x) & \text{երբ } x > 0, \\ -\varphi(-x) & \text{երբ } x < 0 : \end{cases} \tag{4.18}$$

Այդ խնդրի լուծումը տրվում է

$$U(x,t) = \frac{1}{2a\sqrt{\pi t}} \int\limits_{-\infty}^{+\infty} \Phi(\xi)\, e^{-\frac{(x-\xi)^2}{4a^2 t}}\, d\xi \tag{4.19}$$

Պուասոնի ինտեգրալով, ընդ որում՝ $U(x,0)=\varphi(x),$ երբ $0\leqslant x<+\infty$:

Օգտվելով (4.18)-ից՝ (4.19)-ը կգրվի

$$U(x,t)=\frac{1}{2a\sqrt{\pi t}}\int\limits_0^{+\infty}\varphi(\xi)\;e^{-\frac{(x-\xi)^2}{4a^2t}}\;d\xi-\frac{1}{2a\sqrt{\pi t}}\int\limits_0^{+\infty}\varphi(\xi)\;e^{-\frac{(x+\xi)^2}{4a^2t}}\;d\xi$$

տեսքով, որտեղից՝ $U(x,0)=0$: Այսպիսով՝ $u(x,t)=U(x,t),$ երբ $x\geqslant 0$:

Պատասխան՝

$$u(x,t)=\frac{1}{2a\sqrt{\pi t}}\int\limits_0^{+\infty}\varphi(\xi)\;\left(e^{-\frac{(x-\xi)^2}{4a^2t}}\;-\;e^{-\frac{(x+\xi)^2}{4a^2t}}\right)d\xi\;:$$

Օրինակ 4.6: Լուծել խառը խնդիրը.

$$\begin{cases} u_t-a^2\left(u_{xx}+u_{yy}+u_{zz}\right)=0, & -\infty<x<+\infty,\;\;0<y<+\infty,\;\;0<z<+\infty,\;\;t>0,\\ u(x,0,z,t)=0, & -\infty<x<+\infty,\;\;0<z<+\infty,\;t>0\\ u(x,y,0,t)=0, & -\infty<x<+\infty,\;\;0<y<+\infty,\;t>0,\\ u(x,y,z,0)=\varphi(x,y.z), & -\infty<x<+\infty,\;\;0<y<+\infty,\;\;0<z<+\infty\;: \end{cases}$$

Լուծում: Շարունակենք $\varphi(x,y,z)$ ֆունկցիան ամբողջ տարածության վրա սկզբում կենտ ձևով ըստ y-ի՝

$$\varphi_1(x,y,z)=\begin{cases}\varphi(x,y,z), & y>0,\\ -\varphi(x,-y,z), & y<0,\end{cases}$$

այնուհետև կենտ ձևով ըստ z-ի՝

$$\varphi_2(x,y,z)=\begin{cases}\varphi_1(x,y,z), & z>0,\\ -\varphi_1(x,y,-z), & z<0\;:\end{cases}$$

Դիտարկենք հետևյալ Կոշիի խնդիրը՝

$$\begin{cases} U_t-a^2(U_{xx}+U_{yy}+U_{zz})=0, & -\infty<x,y,z<+\infty,\;\;t>0,\\ U(x,y,z)=\varphi_2(x,y,z), & -\infty<x,y,z<+\infty\;: \end{cases}$$

Այս խնդրի լուծումը կարելի է ստանալ (4.3) Պուասոնի բանաձևից $(n=3,\;f\equiv 0)$, այն է՝

$$U(x,y,z,t)=\frac{1}{(2a\sqrt{\pi t})^3}\int\limits_{-\infty}^{+\infty}\int\limits_{-\infty}^{+\infty}\int\limits_{-\infty}^{+\infty}\varphi_2(\xi,\eta,\zeta)\;e^{-\frac{(x-\xi)^2+(y-\eta)^2+(z-\zeta)^2}{4a^2t}}d\zeta d\eta d\xi\;:$$

Ակնհայտ է, որ երբ $y>0,\;\;z>0$, ապա U ֆունկցիան կբավարարի մեր խնդրի հավասարմանը և սկզբնական պայմանին: Ձևափոխենք $U(x,y,z)$ լուծումն այնպես, որ ինտեգրալում բացահայտ տեսքով մասնակցի $\varphi(x,y,z)$ ֆունկցիան: Քանի որ $\varphi_2(x,y,z)$ ֆունկցիան կենտ է ըստ z-ի, կունենանք՝

$$\int\limits_{-\infty}^{+\infty}\varphi_2(\xi,\eta,\zeta)\,e^{-\frac{(z-\zeta)^2}{4a^2t}}d\zeta=\int\limits_{0}^{+\infty}\varphi_1(\xi,\eta,\zeta)\,\left(e^{-\frac{(z-\zeta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(z+\zeta)^2}{4a^2t}}\right)d\zeta,$$

հետևաբար՝

$$U(x,y,z,t)=\frac{1}{(2a\sqrt{\pi t})^3}\int\limits_{-\infty}^{+\infty}\int\limits_{-\infty}^{+\infty}e^{-\frac{(x-\xi)^2+(y-\eta)^2}{4a^2t}}\int\limits_{0}^{+\infty}\varphi_1(\xi,\eta,\zeta)\,\left(e^{-\frac{(z-\zeta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(z+\zeta)^2}{4a^2t}}\right)d\zeta d\eta d\xi:$$

Նման ձևով, քանի որ $\varphi_1(x,y,z)$ ֆունկցիան կենտ է ըստ y-ի՝

$$\int\limits_{-\infty}^{+\infty}\varphi_1(\xi,\eta,\zeta)\,e^{-\frac{(y-\eta)^2}{4a^2t}}d\eta=\int\limits_{0}^{+\infty}\varphi(\xi,\eta,\zeta)\,\left(e^{-\frac{(y-\eta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(y+\eta)^2}{4a^2t}}\right)d\eta:$$

Տեղադրելով, կստանանք՝

$$U(x,y,z,t)=$$
$$=\frac{1}{(2a\sqrt{\pi t})^3}\int\limits_{-\infty}^{+\infty}e^{-\frac{(x-\xi)^2}{4a^2t}}\int\limits_{0}^{+\infty}\left(e^{-\frac{(y-\eta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(y+\eta)^2}{4a^2t}}\right)\int\limits_{0}^{+\infty}\left(e^{-\frac{(z-\zeta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(z+\zeta)^2}{4a^2t}}\right)\varphi(\xi,\eta,\zeta)d\zeta d\eta d\xi:$$

Այս բանաձևից հետևում է, որ $U(x,0,z,t)=0,\ \ U(x,y,0,t)=0$, ուրեմն՝

$$u(x,y.z,t)=U(x,y.z,t),\quad \text{երբ}\ \ -\infty<x<+\infty,\ 0<y,z<+\infty:$$

Պատասխան՝

$$u(x,y,z,t)=$$
$$=\frac{1}{(2a\sqrt{\pi t})^3}\int\limits_{-\infty}^{+\infty}e^{-\frac{(x-\xi)^2}{4a^2t}}\int\limits_{0}^{+\infty}\left(e^{-\frac{(y-\eta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(y+\eta)^2}{4a^2t}}\right)\int\limits_{0}^{+\infty}\left(e^{-\frac{(z-\zeta)^2}{4a^2t}}-e^{-\frac{(z+\zeta)^2}{4a^2t}}\right)\varphi(\xi,\eta,\zeta)d\zeta d\eta d\xi:$$

Խնդիրներ

Լուծել խառը խնդիրը.

353. $$\begin{cases}u_t-a^2\,u_{xx}=0,\quad 0<x<+\infty,\quad t>0,\\ u_x(0,t)=0,\quad t>0,\\ u(x,0)=\varphi(x),\quad 0<x<+\infty:\end{cases}$$

354. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} + hu = 0, \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty : \end{cases}$

355. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} + hu = 0, \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty : \end{cases}$

356. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = 0, \quad 0 < x < +\infty : \end{cases}$

357. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = 0, \quad 0 < x < +\infty : \end{cases}$

358. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} + hu = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = 0, \quad 0 < x < +\infty : \end{cases}$

359. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} + hu = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = 0, \quad 0 < x < +\infty : \end{cases}$

360. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} + hu = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty : \end{cases}$

361. $\begin{cases} u_t - a^2\, u_{xx} + hu = f(x,t), \quad 0 < x < +\infty, \quad t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad t > 0, \\ u(x,0) = \varphi(x), \quad 0 < x < +\infty : \end{cases}$

362. $\begin{cases} u_t - a^2\,(u_{xx} + u_{yy}) = 0, & -\infty < x < +\infty,\ \ 0 < y < +\infty,\ \ t > 0, \\ u(x,0,t) = 0, & -\infty < x < +\infty, \quad t > 0 \\ u(x,y,0) = \varphi(x,y), & -\infty < x < +\infty,\ \ 0 < y < +\infty : \end{cases}$

363. $\begin{cases} u_t - a^2\,(u_{xx} + u_{yy} + u_{zz}) = 0, & -\infty < x, y < +\infty,\ \ 0 < z < +\infty,\ \ t > 0, \\ u(x,y,0,t) = 0, & -\infty < x, y < +\infty,\ \ t > 0 \\ u(x,y,z,0) = \varphi(x,y.z), & -\infty < x, y < +\infty,\ \ 0 < z < +\infty : \end{cases}$

364. $$\begin{cases} u_t - a^2\left(u_{xx}+u_{yy}+u_{zz}\right)=0, & -\infty<y<+\infty,\ \ 0<x,z<+\infty,\ \ t>0, \\ u_x(0,y,z,t)=0, & -\infty<y<+\infty\ \ 0<z<+\infty,\ t>0 \\ u(x,y,0,t)=0, & -\infty<y<+\infty,\ \ 0<x<+\infty,\ t>0, \\ u(x,y,z,0)=\varphi(x,y.z), & 0<x<+\infty,\ \ =\infty<y<+\infty,\ \ 0<z<+\infty : \end{cases}$$

§ 4. Փոփոխականների անջատման մեթոդը

Փոփոխականների անջատման մեթոդով ջերմահաղորդականության հավասարման համար խառը խնդիրները լուծվում են այնպես, ինչպես լուծվում են խառը խնդիրները լարի տատանման հավասարման համար, այն տարբերությամբ, որ t-ից կախված ֆունկցիաների նկատմամբ ստացվում են առաջին կարգի սովորական դիֆերենցիալ հավասարումներ:

4.1 Համասեռ հավասարում, համասեռ եզրային պայմաններ: Դիտարկենք

$$\begin{cases} u_t - a^2u_{xx}=0, & 0<x<\ell,\ \ t>0, \\ \alpha\, u_x(0,t)-\beta\, u(0,t)=0, & t\geqslant 0, \\ \gamma\, u_x(\ell,t)+\delta\, u(\ell,t)=0, & t\geqslant 0, \\ u(x,0)=\varphi(x), & x\in[0,\ell] : \end{cases}$$

խառը խնդիրը, որտեղ $\varphi(x)$ ֆունկցիան անընդհատ է $[0;\ell]$-ում, իսկ $\alpha,\ \beta,\ \gamma,\ \delta$ հաստատունները ոչ բացասական են և $\alpha+\beta>0,\ \gamma+\delta>0$:

Փնտրելով խնդրի լուծումը $u(x,t)=X(x)T(t)\not\equiv 0$ տեսքով, $X(x)$ ֆունկցիայի նկատմամբ կստանանք

$$\begin{cases} X''(x)+\lambda^2X(x)=0, \\ \alpha X'(0)-\beta X(0)=0, \\ \gamma X'(\ell)+\delta X(\ell)=0 \end{cases}$$

Շտուրմ-Լիուվիլի խնդիրը, իսկ $T(t)$ ֆունկցիայի նկատմամբ՝

$$T'(t)+a^2\lambda^2T(t)=0 \tag{4.20}$$

հավասարումը:

Դիցուք λ_k-ն և $X_k(x)$-ը Շտուրմ-Լիուվիլի խնդրի սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են, իսկ $T_k(t)$-ն՝ (4.20) հավասարման ընդհանուր լուծումը, երբ $\lambda=\lambda_k\neq 0$՝

$$T_k(t)=a_k\, e^{-a^2\lambda_k^2t} :$$

Այդ դեպքում

$$u(x,t)=\sum_{k=1}^{\infty}T_k(t)X_k(x)=\sum_{k=1}^{\infty}a_k\, e^{-a^2\lambda_k^2t}X_k(x) \tag{4.21}$$

շարքի գումարը կլինի մեր խնդրի լուծումը, որտեղ

$$a_k = \frac{1}{\|X_k\|^2}\int\limits_0^\ell \varphi(x)X_k(x)dx, \qquad \|X_k\|^2 = \int\limits_0^\ell (X_k(x))^2\,dx :$$

Դիտողություն: Եթե $\beta=\delta=0$, ապա սեփական արժեք է նաև $\lambda=0$ թիվը: Երբ $\lambda=\lambda_0=0$, Շտուրմ-Լիուվիլի խնդրի սեփական ֆունկցիան զրոյից տարբեր ցանկացած հաստատուն է, օրինակ $X_0(x)\equiv 1$, իսկ (4.20) հավասարման լուծումը՝ $T_0(t)\equiv a_0$: Այդ դեպքում, (4.21)-ի փոխարեն, խնդրի լուծումը կլինի՝

$$u(x,t)=\sum_{k=0}^{\infty} a_k\, e^{-a^2\lambda_k^2 t}X_k(x) = a_0 + \sum_{k=1}^{\infty} a_k\, e^{-a^2\lambda_k^2 t}X_k(x) :$$

Օրինակ 4.7: Լուծել խնդիրը.
$$\begin{cases} u_t - a^2u_{xx}=0, & 0<x<\ell,\ \ t>0,\\ u_x(0,t)=0, & t\geqslant 0,\\ u(\ell,t)=0, & t\geqslant 0,\\ u(x,0)=A(\ell-x), & x\in[0,\ell] : \end{cases}$$

Լուծում: Համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x)+\lambda^2X(x)=0,\\ X'(0)=0,\\ X(\ell)=0, \end{cases}$$

որի սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են՝

$$\lambda_k=\frac{\pi(2k-1)}{2\ell}, \qquad X_k(x)=\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}x, \qquad k=1,2,\cdots :$$

(4.21)-ից՝
$$u(x,t)=\sum_{k=1}^{\infty} a_k e^{-\left(\frac{a\pi(2k-1)}{2\ell}\right)^2 t}\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}x : \tag{4.22}$$

Սկզբնական պայմանից՝ $A(\ell-x)=\sum\limits_{k=1}^{\infty} a_k\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}x,$ որտեղից՝

$$a_k=\frac{2}{\ell}\int\limits_0^\ell A(\ell-x)\cos\frac{\pi(2k-1)}{2\ell}\,xdx=\frac{8A\ell}{(2k-1)^2\pi^2}, \quad k=1,2,\cdots :$$

Տեղադրելով (4.22) շարքի մեջ՝ կստանանք խնդրի լուծումը:

Պատասխան՝ $u(x,t)=\dfrac{8Al}{\pi^2}\sum\limits_{k=1}^{\infty}\dfrac{1}{(2k-1)^2}e^{-\left(\frac{a\pi(2k-1)}{2l}\right)^2 t}\cos\dfrac{\pi(2k-1)}{2l}x$:

Օրինակ 4.8: Լուծել խնդիրը.

$$\begin{cases} u_t - a^2 u_{xx} = 0, \qquad 0 < x < \ell, \;\; t > 0, \\ u_x(0,t) = 0, \quad u_x(\ell,t) + hu(\ell,t) = 0 \quad (h > 0), \\ u(x,0) = \varphi(x) : \end{cases}$$

Լուծում: Համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X'(0) = 0, \\ X`(\ell) + hX(\ell) = 0 : \end{cases}$$

$\lambda = 0$ սեփական արժեք չէ, հետևաբար՝

$$X(x) = c_1 \cos \lambda x + c_2 \sin \lambda x :$$

$X'(0) = 0$ եզրային պայմանից՝ $\lambda c_2 = 0$ կամ $c_2 = 0$: Ուրեմն՝

$$X(x) = c_1 \cos \lambda x : \tag{4.23}$$

$X'(\ell) + hX(\ell) = 0$ եզրային պայմանից՝ $c_1(-\lambda \sin \lambda\ell + h \cos \lambda\ell) = 0$, որտեղից λ_k սեփական արժեքների որոշման համար կստանանք

$$-\lambda \sin \lambda\ell + h \cos \lambda\ell = 0 \qquad \text{կամ} \qquad \lambda \operatorname{tg} \lambda\ell = h \tag{4.24}$$

հավասարումը: Սեփական ֆունկցիաները կստացվեն (4.23)-ից՝

$$X_k(x) = \cos \lambda_k x, \qquad k = 1, 2, \cdots :$$

Խնդրի լուծումը, համաձայն (4.21)-ի, ներկայացվում է

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty} a_k e^{-a^2 \lambda_k^2 t} \cos \lambda_k x \tag{4.25}$$

տեսքով, որտեղ

$$a_k = \frac{1}{\|X_k(x)\|^2} \int_0^l \varphi(x) \cos \lambda_k x dx, \quad k = 1, 2, \cdots :$$

Այստեղ

$$\|X_k(x)\|^2 = \|\cos\lambda_k x\|^2 = \int\limits_0^\ell \cos^2\lambda_k x dx = \int\limits_0^\ell \left(\frac{1}{2}+\frac{1}{2}\cos 2\lambda_k x\right)dx =$$
$$= \frac{\ell}{2} + \frac{1}{4\lambda_k}\sin 2\lambda_k x\Big|_0^\ell = \frac{l}{2} + \frac{1}{4\lambda_k}\sin 2\lambda_k\ell = \frac{\ell}{2} + \frac{1}{4\lambda_k}\frac{2\,\mathrm{tg}\,\lambda_k\ell}{1+\mathrm{tg}^2\,\lambda_k\ell}:$$

Հաշվի առնելով, որ λ_k-ն (4.24) հավասարման արմատ է՝ $\mathrm{tg}\,\lambda_k\ell = h/\lambda_k$, կարող ենք գրել՝

$$\|X_k(x)\|^2 = \frac{\ell}{2} + \frac{1}{4\lambda_k}\frac{\dfrac{2h}{\lambda_k}}{1+\dfrac{h^2}{\lambda_k^2}} = \frac{\ell(h^2+\lambda_k^2)+h}{2(h^2+\lambda_k^2)}:$$

Այսպիսով՝

$$a_k = \frac{2(h^2+\lambda_k^2)}{\ell(h^2+\lambda_k^2)+h}\int\limits_0^\ell \varphi(x)\cos\lambda_k x dx, \quad k=1,2,\cdots:$$

Տեղադրելով (4.25) շարքի մեջ, կստանանք լուծումը:

Պատասխան՝ $u(x,t) = 2\sum\limits_{k=1}^\infty \left(\dfrac{(h^2+\lambda_k^2)}{\ell(h^2+\lambda_k^2)+h}\int\limits_0^\ell \varphi(x)\cos\lambda_k x dx\right)e^{-a^2\lambda_k^2 t}\cos\lambda_k x,$

որտեղ λ_k թվերը $\lambda\,\mathrm{tg}\,\lambda\ell = h$ հավասարման դրական արմատներն են:

4.2 Անհամասեռ հավասարում, համասեռ եզրային պայմաններ: Այն դեպքում, երբ խառը խնդրիրը դրված է ջերմահաղորդականության անհամասեռ հավասարման համար՝

$$\begin{cases} u_t - a^2 u_{xx} = f(x,t), \qquad 0<x<\ell,\ \ t>0,\\ \alpha\, u_x(0,t) - \beta\, u(0,t) = 0, \qquad t\geqslant 0,\\ \gamma\, u_(\ell,t) + \delta\, u(\ell,t) = 0, \qquad t\geqslant 0,\\ u(x,0) = \varphi(x), \qquad x\in[0,\ell], \end{cases}$$

լուծումը փնտրվում է

$$u(x,t) = \sum_{k=1}^\infty u_k(t)X_k(x) \tag{4.26}$$

շարքի տեսքով: Այդ դեպքում $u_k(t)$ ֆունկցիայի որոշման համար ստացվում է

$$\begin{cases} u_k'(t) + (a\lambda_k)^2 u_k(t) = f_k(t),\\ u_k(0) = \varphi_k, \end{cases} \tag{4.27}$$

Կոշիի խնդիրը, որտեղ $f_k(t)$-ն և φ_k-ն համապատասխանաբար $f(x,t)$ և $\varphi(x)$ ֆունկցիաների՝ ըստ $X_k(x)$ սեփական ֆունկցիաների վերլուծության Ֆուրյեի գործակիցներն են՝

$$f_k(t) = \frac{1}{\|X_k\|^2}\int_0^\ell f(x,t)X_k(x)dx, \qquad \varphi_k = \frac{1}{\|X_k\|^2}\int_0^\ell \varphi(x)X_k(x)dx, \qquad k = 1,2,\cdots: \tag{4.28}$$

4.3 Անհամասեռ եզրային պայմաններ: Ջերմահաղորդականության հավասարման համար անհամասեռ եզրային պայմաններով

$$\begin{cases} u_t - a^2 u_{xx} = f(x,t), \qquad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ \alpha\, u_x(0,t) - \beta\, u(0,t) = \mu(t), \qquad t \geqslant 0, \\ \gamma\, u_x(\ell,t) + \delta\, u(\ell,t) = \nu(t), \qquad t \geqslant 0, \\ u(x,0) = \varphi(x) \end{cases}$$

խառը խնդիրը բերվում է համասեռ եզրային պայմաններով խնդրի հետևյալ կերպ. լուծումը փնտրվում է $u(x,t) = v(x,t) + w(x,t)$ տեսքով, և $w(x,t)$ ֆունկցիան ընտրվում է այնպես, որ $v(x,t)$ ֆունկցիայի որոշման համար ստացվի համասեռ եզրային պայմաններով խնդիր: Սովորաբար փնտրվում է

$$w(x,t) = (\gamma_1 x^2 + \gamma_2 x + \gamma_3)\mu(t) + (\delta_1 x^2 + \delta_2 x + \delta_3)\nu(t)$$

տեսքով, որտեղ γ_1, γ_2, γ_3, δ_1, δ_2, δ_3 թվերը ենթակա են որոշման:

Հարկ է նշել, որ ջերմահաղորդականության հավասարման համար խառը խնդիրների դեպքում նույնպես գործում են 3-րդ գլխի 4.4 կետի դիտողությունները:

Օրինակ 4.9: Լուծել խնդիրը.

$$\begin{cases} u_t - a^2 u_{xx} + \beta u = 0, \qquad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u(0,t) = 0, \\ u(\ell,t) = 0, \\ u(x,0) = \varphi(x) : \end{cases}$$

Փնտրենք հավասարմանը և եզրային պայմաններին բավարարող $u(x,t)$ ֆունկցիա

$$u(x,t) = X(x)T(t), \quad X \not\equiv 0, \ T \not\equiv 0$$

տեսքով: Տեղադրելով հավասարման մեջ՝

$$X(x)T'(t) - a^2 X''(x)T(t) + \beta X(x)T(t) = 0,$$

և անջատելով փոփոխականները՝ ստանում ենք

$$\frac{T'(t)}{a^2T(t)} + \frac{\beta}{a^2} = \frac{X''(x)}{X(x)}$$

հավասարությունը: Այն կլինի նույնություն, եթե աջ և ձախ մասերը հավասար լինեն նույն հաստատունին: Նշանակենք այդ հաստատունը $-\lambda^2$-ով (եթե այդ հաստատունը դրական է, ապա ստացվող Շտուրմ-Լիուվիլի խնդիրը կունենա միայն տրիվիալ լուծում): Այդ դեպքում $T(t)$ ֆունկցիայի որոշման համար կստանանք

$$T'(t) + (\beta + a^2\lambda^2)T(t) = 0 \tag{4.29}$$

հավասարումը, իսկ $X(x)$ ֆունկցիայի որոշման համար՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X(0) = 0, \\ X(\ell) = 0 \end{cases}$$

Շտուրմ-Լիուվիլի խնդրը, որի սեփական արժեքներն ու սեփական ֆունկցիաներն են՝

$$\lambda_k = \frac{\pi k}{\ell}, \qquad X_k(x) = \sin\frac{\pi k}{\ell}x, \quad k = 1, 2, \cdots :$$

Տեղադրենք λ_k-ն (4.29) հավասարման մեջ, կստանանք

$$T'(t) + \left(\beta + \left(\frac{a\pi k}{l}\right)^2\right)T(t) = 0$$

հավասարումը, որի ընդհանուր լուծումն է՝

$$T_k(t) = a_k e^{-\left(\beta + \left(\frac{a\pi k}{\ell}\right)^2\right)t}, \quad k = 1, 2, \cdots :$$

Կազմենք շարք.

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty} T_k(t)\, X_k(x) = \sum_{k=1}^{\infty} a_k e^{-\left(\beta + \left(\frac{a\pi k}{\ell}\right)^2\right)t} \sin\frac{\pi k}{\ell}x :$$

Եթե այդ շարքը և այն շարքերը, որոնք ստացվում են մեկ անգամ ըստ t-ի և երկու անգամ ըստ x-ի անդամ առ անդամ ածանցելիս հավասարաչափ զուգամետ են, ապա նրա գումարը նույնպես կբավարարի հավասարմանն ու եզրային պայմաններին:

$u(x,0)=\varphi(x)$ սկզբնական պայմանից՝ $\sum\limits_{k=1}^{\infty} a_k \sin\frac{\pi k}{\ell}x = \varphi(x),$ որտեղից՝

$$a_k = \frac{2}{\ell}\int\limits_0^{\ell} \varphi(x)\sin\frac{\pi k}{\ell}x dx :$$

Պատասխան՝

$$u(x,t) = \sum_{k=1}^{\infty} a_k e^{-\left(\beta+\left(\frac{a\pi k}{\ell}\right)^2\right)t}\sin\frac{\pi k}{\ell}x, \qquad a_k = \frac{2}{\ell}\int\limits_0^{\ell}\varphi(x)\sin\frac{\pi k}{\ell}x dx :$$

Օրինակ 4.10: Լուծել խնդիրը.

$$\begin{cases} u_t - a^2 u_{xx} = 0, \qquad 0 < x < \ell, \;\; t > 0, \\ u(0,t) = T, \\ u_x(\ell,t) + hu(\ell,t) = U, \\ u(x,0) = 0 : \end{cases}$$

Լուծում: Փնտրելով լուծումը $u(x,t) = v(x,t) + w(x,t)$ տեսքով՝ $v(x,t)$ ֆունկցիայի նկատմամբ կստանանք

$$\begin{cases} v_t - a^2 v_{xx} = -w_t + a^2 w_{xx}, \\ v(0,t) = T - w(0,t), \\ v_x(\ell,t) + hv(\ell,t) = U - w_x(\ell,t) - hw(\ell,t), \\ v(x,0) = -w(x,0) \end{cases}$$

խնդիրը: Ընտրենք $w(x,t)$ ֆունկցիան այնպես, որ տեղի ունենան

$$\begin{cases} T - w(0,t) = 0, \\ U - w_x(\ell,t) - hw(\ell,t) = 0 \end{cases}$$

պայմանները: Այն կարելի է փնտրել

$$w(x,t) = (\gamma_1 x + \gamma_2)T + (\delta_1 x + \delta_2)U$$

տեսքով: $T - w(0,t) = 0$ պայմանից՝ $\gamma_2 = 1, \; \delta_2 = 0$, իսկ $U - w_x(\ell,t) - hw(\ell,t) = 0$ պայմանից՝ $\gamma_1 = -\dfrac{h}{1+h\ell}, \; \delta_1 = \dfrac{1}{1+h\ell}$: Այսպիսով, եթե վերցնենք

$$w(x,t) = \frac{U - hT}{1+h\ell}x + T,$$

$v(x,t)$ ֆունկցիայի նկատմամբ կստացվի

$$\begin{cases} v_t - a^2 v_{xx} = 0, \\ v(0,t) = 0, \\ v_x(\ell,t) + hv(\ell,t) = 0, \\ v(x,0) = \dfrac{hT-U}{1+h\ell}x - T \end{cases}$$

խնդիրը: Համապատասխան Շտուրմ-Լիուվիլի խնդիրն է՝

$$\begin{cases} X''(x) + \lambda^2 X(x) = 0, \\ X(0) = 0, \\ X'(\ell) + hX(\ell) = 0 : \end{cases}$$

Զրոն սեփական արժեք չէ՝ $\lambda^2 > 0$, հետևաբար՝

$$X(x) = c_1 \cos \lambda x + c_2 \sin \lambda x :$$

$X(0) = 0$ պայմանից՝ $c_1 = 0$, ուրեմն՝

$$X(x) = c_2 \sin \lambda x :$$

$X'(\ell) + hX(\ell) = 0$ պայմանից՝ $\lambda c_2 \cos \lambda\ell + hc_2 \sin \lambda\ell = 0$, որտեղից կստանանք

$$\lambda \cos \lambda\ell + h \sin \lambda\ell = 0$$

հավասարումը, որը կարելի է գրել

$$h \operatorname{tg} \lambda\ell = -\lambda$$

տեսքով: Շտուրմ-Լիուվիլի խնդրի λ_k սեփական արժեքներն այդ հավասարման դրական արմատներն են, իսկ սեփական ֆունկցիաները՝

$$X_k(x) = \sin \lambda_k x :$$

Օգտվելով (4.21)-ից՝

$$v(x,t) = \sum_{k=1}^{\infty} a_k e^{-(a\lambda_k)^2 t} \sin \lambda_k x : \tag{4.30}$$

Գտնենք a_k գործակիցները, օգտվելով $v(x,0) = \dfrac{hT-U}{1+h\ell}x - T$ սկզբնական պայմանից: Տեղադրելով (4.30) շարքի մեջ $t=0$, կունենանք՝

$$\sum_{k=1}^{\infty} a_k \sin\lambda_k x = \frac{hT-U}{1+h\ell}x - T,$$

որտեղից՝

$$a_k = \frac{1}{\|\sin\lambda_k x\|^2}\int_0^{\ell}\left(\frac{hT-U}{1+h\ell}x - T\right)\sin\lambda_k x dx :$$

Հաշվենք ինտեգրալը.

$$\begin{aligned}\int_0^{\ell}\left(\frac{hT-U}{1+h\ell}x - T\right)\sin\lambda_k x dx &= \frac{hT-U}{1+h\ell}\int_0^{\ell} x\sin\lambda_k x dx - T\int_0^{\ell}\sin\lambda_k x dx = \\ &= \frac{U\ell+T}{\lambda_k(1+h\ell)}\cos\lambda_k\ell + \frac{hT-U}{\lambda_k^2(1+h\ell)}\sin\lambda_k\ell - \frac{T}{\lambda_k} = \\ &= \frac{U\ell+T}{\lambda_k(1+h\ell)}\cdot\frac{1-\operatorname{tg}^2\lambda_k\ell}{1+\operatorname{tg}^2\lambda_k\ell} + \frac{hT-U}{\lambda_k^2(1+h\ell)}\cdot\frac{2\operatorname{tg}\lambda_k\ell}{\operatorname{tg}^2\lambda_k\ell+1} - \frac{T}{\lambda_k} = \\ &= \frac{U\ell+T}{\lambda_k(1+h\ell)}\cdot\frac{1-\left(-\frac{\lambda_k}{h}\right)^2}{1+\left(-\frac{\lambda_k}{h}\right)^2} + \frac{hT-U}{\lambda_k^2(1+h\ell)}\cdot\frac{2\left(-\frac{\lambda_k}{h}\right)}{\left(-\frac{\lambda_k}{h}\right)^2+1} - \frac{T}{\lambda_k} = \\ &= \frac{1}{\lambda_k}\left(\frac{(-1)^k U}{\sqrt{h^2+\lambda_k^2}} - T\right) :\end{aligned}$$

Բացի դրանից՝

$$\begin{aligned}\|\sin\lambda_k x\|^2 &= \int_0^{\ell}\sin^2\lambda_k x dx = \int_0^{\ell}\left(\frac{1}{2}-\frac{1}{2}\cos 2\lambda_k x\right)dx = \frac{\ell}{2} - \frac{1}{4\lambda_k}\sin 2\lambda_k x\Big|_0^{\ell} = \\ &= \frac{\ell}{2} - \frac{1}{4\lambda_k}\sin 2\lambda_k\ell = \frac{\ell}{2} - \frac{1}{4\lambda_k}\frac{2\operatorname{tg}\lambda_k\ell}{1+\operatorname{tg}^2\lambda_k\ell} = \frac{\ell}{2} - \frac{1}{4\lambda_k}\frac{-2\frac{\lambda_k}{h}}{1+(-\frac{\lambda_k}{h})^2} = \frac{\ell(h^2+\lambda_k^2)+h}{2(h^2+\lambda_k^2)} :\end{aligned}$$

Այսպիսով՝

$$a_k = \frac{1}{\|\sin\lambda_k x\|^2}\int_0^{\ell}\left(\frac{hT-U}{1+h\ell}x - T\right)\sin\lambda_k x dx = \frac{2(h^2+\lambda_k^2)}{\ell(h^2+\lambda_k^2)+h}\cdot\frac{1}{\lambda_k}\cdot\left(\frac{(-1)^k U}{\sqrt{h^2+\lambda_k^2}} - T\right) :$$

Պատասխան՝

$$u(x,t) = \frac{U-hT}{1+h\ell}x - T + \sum_{k=1}^{\infty}\frac{2(h^2+\lambda_k^2)}{(\ell(h^2+\lambda_k^2)+h)\lambda_k}\left(\frac{(-1)^k U}{\sqrt{h^2+\lambda_k^2}} - T\right)e^{-(a\lambda_k)^2 t}\sin\lambda_k x,$$

որտեղ λ_k թվերը $h\operatorname{tg}\lambda\ell = -\lambda$ հավասարման դրական արմատներն են:

Խնդիրներ

$0 < x < \ell, \quad t > 0$ տիրույթում գտնել $u_t - a^2 u_{xx} = 0$ հավասարման այն $u(x,t)$ լուծումը, որը բավարարում է նշված եզրային և սկզբնական պայմաններին.

365. $u(0,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \;\; u(x,0) = \varphi(x) :$

366. $u(0,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \;\; u(x,0) = u_0 :$

367. $u(0,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \;\; u(x,0) = Ax :$

368. $u(0,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \;\; u(x,0) = 2x(\ell - x) :$

369. $u(0,t) = 0, \;\; u_x(\ell,t) = 0, \;\; u(x,0) = \varphi(x) :$

370. $u_x(0,t) = 0, \;\; u_x(\ell,t) = 0, \;\; u(x,0) = \varphi(x) :$

371. $u_x(0,t) = 0, \;\; u_x(\ell,t) = 0, \;\; u(x,0) = U :$

372. $u_x(0,t) - hu(\ell,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \;\; u(x,0) = U, \;\; h > 0 :$

373. $u_x(0,t) - hu(\ell,t) = 0, \;\; u_x(\ell,t) + hu(\ell,t) = 0, \;\; u(x,0) = U, \;\; h > 0 :$

374. $u(0,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \;\; u(x,0) = \begin{cases} x, & 0 < x \leqslant \ell/2, \\ \ell - x, & \ell/2 \leqslant x < \ell : \end{cases}$

375. $u_x(0,t) = 0, \;\; u(1,t) = 0, \;\; u(x,0) = x^2 - 1, \;\; a = 1, \;\; \ell = 1 :$

Լուծել խառը խնդիրը.

376. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} + \beta u = 0, \quad 0 < x < \ell, \;\; t > 0, \\ u(0,t) = 0, \;\; u_x(\ell,t) = 0, \\ u(x,0) = \sin \dfrac{\pi}{2\ell} x : \end{cases}$

377. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} + \beta u = 0, \quad 0 < x < \ell, \;\; t > 0, \\ u_x(0,t) = 0, \;\; u_x(\ell,t) = 0, \\ u(x,0) = \varphi(x) : \end{cases}$

378. $\begin{cases} u_t - u_{xx} + u = 0, \quad 0 < x < \ell, \;\; t > 0, \\ u(0,t) = 0, \;\; u(\ell,t) = 0, \\ u(x,0) = 1 : \end{cases}$

379. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} + \beta u = 0, \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u_x(0,t) - hu(0,t) = 0, \ \ u_x(\ell,t) = 0, \ \ h > 0, \\ u(x,0) = U : \end{cases}$

380. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u(0,t) = T, \ \ u(\ell,t) = U, \\ u(x,0) = 0 : \end{cases}$

381. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} = f(x), \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u(0,t) = 0, \ \ u_x(\ell,t) = q, \\ u(x,0) = \varphi(x) : \end{cases}$

382. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u_x(0,t) = q, \ \ u_x(\ell,t) = q, \\ u(x,0) = Ax : \end{cases}$

383. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} + \beta u = \sin \dfrac{\pi}{\ell} x, \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u(0,t) = 0, \ \ u(\ell,t) = 0, \\ u(x,0) = 0 : \end{cases}$

384. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u(0,t) = 0, \ \ u_x(\ell,t) = Ae^{-t}, \\ u(x,0) = T : \end{cases}$

385. $\begin{cases} u_t - a^2 u_{xx} = 0, \quad 0 < x < \ell, \ \ t > 0, \\ u_x(0,t) = At, \ \ u_x(\ell,t) = T, \\ u(x,0) = 0 : \end{cases}$

Գլուխ 5
Էլիպտական տիպի հավասարումներ

§ 1. Էլիպտական հավասարման բերվող պարզագույն խնդիրներ

Էլիպտական տիպի հավասարումները ստացվում են ստացիոնար՝ ժամանակի ընթացքում չփոփոխվող երևույթներ ուսումնասիրելիս: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն հիպերբոլական և պարաբոլական տիպի հավասարումների, էլիպտական տիպի հավասարումների խնդիրներում սկզբնական պայմաններ չեն դրվում: Էլիպտական տիպի հավասարումներից առավել հաճախ հանդիպում է Պուասոնի հավասարումը՝

$$\Delta u = f :$$

Այդ հավասարմանը համապատասխանող համասեռ հավասարումը, երբ $f \equiv 0$, կոչվում է Լապլասի հավասարում՝

$$\Delta u = 0,$$

որի անընդհատ լուծումները կոչվում են հարմոնիկ ֆունկցիաներ:

Ստորև նշված խնդիրներում դիտարկվում է տարածական մարմին, որը $Oxyz$ կոորդինատական համակարգում զբաղեցնում է Γ մակերևույթով սահմանափակված Ω տիրույթը:

1.1 Ստացիոնար ջերմային դաշտի հավասարումը: Մարմնի կետերի $u(x, y, z, t)$ ջերմաստիճանը բավարարում է $u_t - a^2\Delta u = 0$ ջերմահաղորդականության հավասարմանը: Երբ մարմնի ներսի ամեն մի (x, y, z) կետում հաստատվում է հաստատուն՝ ժամանակի ընթացքում չփոփոխվող $u(x, y, z)$ ջերմաստիճան, ապա այն բավարարում է $\Delta u = 0$ Լապլասի հավասարմանը: Եթե մարմնի ներսում կան ջերմային աղբյուրներ, ապա ստանում ենք

$$\Delta u = -f(x, y, z) \tag{5.1}$$

Պուասոնի հավասարումը, որտեղ $f = F/k$, F-ը ջերմային աղբյուրի խտությունն է՝ ջերմության քանակը, որը անջատվում է միավոր ժամանակում միավոր ծավալից, իսկ k-ն՝ ջերմահաղորդականության գործակիցը:

Մարմնի ներսում ջերմաստիճանի բաշխման $u(x, y, z)$ ֆունկցիայի որոշման համար ձևակերպվում է հետևյալ խնդիրը: Պահանջվում գտնել $u(x, y, z)$ ֆունկցիա, որը Ω տիրույթում բավարարում է (5.1) հավասարմանը, իսկ Γ եզրի վրա հետևյալ եզրային պայմաններից որևէ մեկին.

I. $u|_\Gamma = g_1$ (տրված է Γ-ի վրա ջերմաստիճանը):

II. $\left.\dfrac{\partial u}{\partial \nu}\right|_{\Gamma} = g_2$ (տրված է Γ-ի վրա ջերմային հոսքը):

III. $\left.\left(\dfrac{\partial u}{\partial \nu} + h(u - g_3)\right)\right|_{\Gamma} = 0$ (Γ մակերևույթով տեղի է ունենում ջերմափոխանակություն արտաքին միջավայրի հետ, որի ջերմաստիճանը g_3 է):

Այստեղ $g_1,\ g_2,\ g_3,\ h$ ֆունկցիաները որոշված են Γ -ի վրա, $\dfrac{\partial u}{\partial \nu}$ - ածանցյալն է ըստ Γ մակերևույթի արտաքին նորմալի ուղղության:

1.2 Էլեկտրաստատիկայի և մագնիտաստատիկայի հավասարումները: Վակուումում էլեկտրական դաշտի լարվածության $\vec{\mathbf{E}}$ վեկտորը կարելի է ներկայացնել

$$\vec{\mathbf{E}} = -\mathrm{grad}\, u = -\left(\frac{\partial u}{\partial x}\vec{\mathbf{i}} + \frac{\partial u}{\partial y}\vec{\mathbf{j}} + \frac{\partial u}{\partial z}\vec{\mathbf{k}}\right)$$

տեսքով, որտեղ $u(x,y,z)$ ֆունկցիան կոչվում է էլեկտրական դաշտի պոտենցիալ: Այն բավարարում է

$$\Delta u = -4\pi\rho(x,y,z)$$

հավասարմանը, որտեղ ρ-ն լիցքերի ծավալային խտությունն է: Եզրային պայմաններն են.

I. $u|_{\Gamma} = g_1$ (տրված է Γ-ի վրա պոտենցիալը):

II. $\left.\dfrac{\partial u}{\partial \nu}\right|_{\Gamma} = g_2$ (տրված է Γ-ի վրա լիցքերի խտությունը):

Վակուումում մագնիսական դաշտի լարվածության $\vec{\mathbf{H}}$ վեկտորը էլեկտրական դաշտի բացակայության դեպքում կարելի է ներկայացնել $\vec{\mathbf{H}} = -\mathrm{grad}\,\varphi$ տեսքով: Այդ դեպքում φ պոտենցիալը բավարարում է $\Delta\varphi = 0$ Լապլասի հավասարմանը:

1.3 Անսեղմելի հեղուկի պոտենցիալային հոսքը: Դիցուք Ω տիրույթում տեղի է ունենում անսեղմելի հեղուկի հոսք $(\rho = \mathrm{const.})$, որը բնութագրվում է $\vec{\mathbf{v}}(x,y,z)$ արագության վեկտորով: Եթե հեղուկի շարժումը մրրկային չէ, ապա՝ $\vec{\mathbf{v}} = -\mathrm{grad}\,\varphi$, որտեղ φ-ն կոչվում է արագության պոտենցիալ: Անխզելիության (նյութի պահպանման)

$$\frac{\partial\rho}{\partial t} + \mathrm{div}\,(\rho\vec{\mathbf{v}}) = 0$$

հավասարումից ստացվում է $\mathrm{div}\,\vec{\mathbf{v}} = 0$, որտեղից՝ $\mathrm{div\ grad}\ \varphi = 0$, կամ որ նույնն է՝ φ պոտենցիալը բավարարում է $\Delta\varphi = 0$ հավասարմանը:

Խնդիրներ

Գտնել Լապլասի օպերատորի տեսքը.

386. բևեռային կոորդինատական համակարգում՝

$$x = r\cos\varphi, \qquad y = r\sin\varphi :$$

387. գլանային կոորդինատական համակարգում՝

$$x = r\cos\varphi, \qquad y = r\sin\varphi, \qquad z = z :$$

388. սֆերիկ կոորդինատական համակարգում՝

$$x = r\sin\theta\cos\varphi, \qquad y = r\sin\theta\sin\varphi, \qquad z = r\cos\theta :$$

Գտնել k-ի այն արժեքը, որի դեպքում u ֆունկցիան կլինի հարմոնիկ.

389. $u(x_1, x_2) = x_1^3 + k\,x_1 x_2^2$:

390. $u(x_1, x_2) = x_1^2 + x_2^2 + k\,x_3^2$:

391. $u(x_1, x_2) = e^{2x_1}\operatorname{ch} kx_2$:

392. $u(x_1, x_2) = \sin 3x_1 \operatorname{ch} kx_2$:

Գտնել R^2-ում հարմոնիկ այն բոլոր ֆունկցիաները, որոնց համար տեղի ունի նշված պայմանը.

393. $u_y(x, y) = 3xy^2 - x^3$:

394. $u_x(x, y) = x^2 - y^2 - 2y$:

395. $u_y(x, y) = u(x, y)$:

396. $u_x(x, y) = 2u(x, y)$:

Դիցուք $u(x)$, $x = (x_1, x_2, \cdots, x_n)$ ֆունկցիան հարմոնիկ է: Պարզել, հարմոնի՞կ է արդյոք $\tilde{u}(x)$ ֆունկցիան.

397. $\tilde{u}(x) = u(x + h)$, $h = (h_1, h_2, \cdots, h_n)$ – հաստատուն վեկտոր է:

398. $\tilde{u}(x) = u(\lambda x)$, λ – սկալյար հաստատուն է:

399. $\tilde{u}(x) = u(Cx)$, C – հաստատուն օրթոգոնալ մատրից է:

400. $\tilde{u}(x) = u_{x_1} u_{x_2}, \quad n = 2$:

401. $\tilde{u}(x) = u_{x_1} u_{x_2}, \quad n > 2$:

402. $\tilde{u}(x) = x_1 u_{x_1} + x_2 u_{x_2} + x_3 u_{x_3}, \quad n = 3$:

403. $\tilde{u}(x) = x_1 u_{x_1} - x_2 u_{x_2}, \quad n = 2$:

404. з) $\tilde{u}(x) = x_2 u_{x_1} - x_1 u_{x_2}, \quad n = 2$:

405. $\tilde{u}(x) = u_{x_1}^2 - u_{x_2}^2, \quad n = 2$:

406. $\tilde{u}(x) = u_{x_1}^2 + u_{x_2}^2, \quad n = 2$:

§ 2. Հարմոնիկ ֆունկցիաների հիմնական հատկությունները: Հիմնական խնդիրների դրվածքը էլիպտական հավասարումների համար

Մաքսիմումի սկզբունքը: Ω տիրույթում հարմոնիկ ֆունկցիան, եթե նույնաբար հաստատուն չէ, Ω-ի ոչ մի կետում չի կարող հասնել իր մաքսիմումին:

Թեորեմ միջին արժեքի վերաբերյալ: Դիցուք Ω-ն R^n տարածության տիրույթ է, $u(x)$ ֆունկցիան հարմոնիկ է Ω-ում, $x^0 \in \Omega$ կամայական կետ է, R-ը կամայական թիվ է, այնպիսին, որ x^0 կենտրոնով R շառավղով $B_R(x^0)$ գունդն ընկած է Ω-ի մեջ, $S_R(x^0)$ սֆերան $B_R(x^0)$ -ի եզրն է: Այդ դեպքում՝

$$u(x^0) = \frac{1}{\omega_n\, R^{n-1}} \int\limits_{S_R(x^0)} u(x) ds \qquad \text{և} \qquad u(x^0) = \frac{1}{\sigma_n\, R^n} \int\limits_{B_R(x^0)} u(x) dx,$$

որտեղ ω_n-ը միավոր սֆերայի մակերևույթի մակերեսն է, σ_n-ը՝ միավոր գնդի ծավալը R^n-ում:

Լիուվիլի թեորեմը: R^n-ում հարմոնիկ ֆունկցիան եթե սահմանափակ է վերևից կամ ներքևից, ապա այն հաստատուն է:

Հառնակի անհավասարությունը: Դիցուք $u(x)$ ֆունկցիան հարմոնիկ է $B_R(0)$ գնդում և անընդհատ է $\overline{B_R(0)}$-ում: Այդ դեպքում՝

$$u(0) R^{n-1} \, \frac{R - \|x\|}{(R + \|x\|)^{n-1}} \leqslant u(x) \leqslant u(0) R^{n-1} \, \frac{R + \|x\|}{(R - \|x\|)^{n-1}} :$$

Թեորեմ հոսքի վերաբերյալ: Դիցուք $u(x)$ ֆունկցիան հարմոնիկ է Ω սահմանափակ տիրույթում և $u \in C^1(\overline{\Omega})$: Այդ դեպքում՝

$$\int\limits_{\partial\Omega} \frac{\partial u}{\partial \nu}\, ds = 0,$$

որտեղ ν վեկտորը $\partial\Omega$-ի արտաքին նորմալն է:

Էլիպտական հավասարումների համար հիմնականում դրվում են երեք տիպի խնդիրներ: Ձևակերպենք դրանք հարմոնիկ ֆունկցիաների համար:

Դիցուք Ω-ն Γ եզրով սահմանափակ տիրույթ է:

- *Առաջին եզրային խնդիր կամ Դիրիխլեի խնդիր:* Պահանջվում է գտնել $u \in C(\overline{\Omega})$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի

  $$u = \varphi(x), \quad x \in \Gamma$$

  եզրային պայմանին, որտեղ $\varphi(x)$-ը Γ-ի վրա տրված անընդհատ ֆունկցիա է:
- *Երկրորդ եզրային խնդիր կամ Նեյմանի խնդիր:* Դիցուք Γ եզրը ողորկ է: Պահանջվում է գտնել $u \in C^1(\overline{\Omega})$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի

  $$\frac{\partial u}{\partial \nu} = \varphi(x), \quad x \in \Gamma$$

  եզրային պայմանին, որտեղ ν-ն Γ-ի արտաքին նորմալն է, իսկ $\varphi(x)$-ը Γ-ի վրա տրված անընդհատ ֆունկցիա է:

  Որպեսզի Նեյմանի խնդիրը ունենա լուծում, անհրաժեշտ է և բավարար, որ

  $$\int\limits_{\Gamma} \varphi(x) dx = 0 :$$

  Այդ դեպքում ասում են, որ Նեյմանի խնդիրը դրված է ճիշտ:
- *Երրորդ եզրային խնդիր կամ խառը խնդիր:* Դիցուք Γ եզրը ողորկ է: Պահանջվում է գտնել $u \in C^1(\overline{\Omega})$ հարմոնիկ ֆունկցիա, որը բավարարի

  $$\sigma(x)\, \frac{\partial u}{\partial \nu} + u = \varphi(x), \quad x \in \Gamma$$

  եզրային պայմանին, որտեղ $\sigma(x)$-ը և $\varphi(x)$-ը Γ-ի վրա տրված անընդհատ ֆունկցիաներ են:

Խնդիրներ

Գտնել նշված բազմությունում $u(x,y)$ ֆունկցիայի էքստրեմումի կետերը.

407. $u = xy, \quad \{(x,y) \mid x^2 + y^2 \leqslant 1\}$:

408. $u = x^2 - y^2, \quad \big\{(x,y) \;\big|\; x^2/4 + y^2/9 \leqslant 1\big\}$:

409-413 խնդիրներում՝

$$B_a^n(x^0) = \big\{x \in \mathrm{R}^n \;\big|\; \|x - x^0\| < a\big\}, \quad S_a^n(x^0) = \big\{x \in \mathrm{R}^n \;\big|\; \|x - x^0\| = a\big\} :$$

409. $u(x)$ ֆունկցիան հարմոնիկ է $B_a^n(O)$ գնդում, անընդհատ է $\overline{B_a^n(O)}$-ում և $u(O) = 0$: Գտնել կապը

$$\int\limits_{B^+} u(x)dx \qquad \text{և} \qquad \int\limits_{B^-} u(x)dx$$

թվերի միջև, որտեղ՝ $B^+ = \big\{x \in B_a^n(O) \big|\; u(x) > 0\big\}, \;\; B^- = \big\{x \in B_a^n(O) \big|\; u(x) < 0\big\}$:

410. $u(r,\varphi)$ ֆունկցիան հարմոնիկ է $r \leqslant 1$ շրջանում: Գտնել՝

$$\int\limits_0^{2\pi} u_{rr}(1,\varphi)d\varphi :$$

411. Դիցուք $u \in C^2(B_1^2(0)) \cap C(\overline{B_1^2(0)})$ և

$$\begin{cases} \Delta u = 0, & (x,y) \in B_1^2(0), \\ u = y^2, & (x,y) \in S_1^2(0), \;\; y \geqslant 0, \\ u = y, & (x,y) \in S_1^2(0), \;\; y < 0 : \end{cases}$$

Գտնել՝

$$\int\limits_{B_{1/2}^2(0)} u(x)dx :$$

412. Դիցուք $\Delta u = 1, \;\; x \in \overline{B_2^2(0)} \setminus B_1^2(0)$: Ո՞րն է մեծ՝

$$\int\limits_{S_1^2(0)} u_r ds, \qquad \text{թե՞} \qquad \int\limits_{S_2^2(0)} u_r ds :$$

413. Գոյություն ունի՞ արդյոք $B_1^3(0)$-ում հարմոնիկ, ոչ բացասական ֆունկցիա այնպիսին, որ

$$u(0,0,0)=0, \qquad u(0,0,1/2)=10:$$

414. Դիցուք Ω-ն $\partial\Omega$ ողորկ եզրով սահմանափակ տիրույթ է, $u \in C^2(\Omega) \cap C^1(\overline{\Omega})$ և

$$\begin{cases} \Delta u = 0 & x \in \Omega, \\ \dfrac{\partial u}{\partial \nu} = \psi(x) & x \in \partial\Omega, \end{cases}$$

որտեղ ν վեկտորը $\partial\Omega$-ի արտաքին նորմալն է: Ապացուցել, որ $\psi(x)$ ֆունկցիան $\partial\Omega$-ի վրա զրո արժեք է ընդունում առնվազն երկու կետում:

§ 3. Փոփոխականների անջատման մեթոդը

Պարզագույն տիրույթների դեպքում (շրջան, ուղղանկյուն) եզրային խնդիրների լուծումը Լապլասի և Պուասոնի հավասարումների համար կարելի է ստանալ փոփոխականների անջատման եղանակով: Դիտարկենք Լապլասի երկչափ հավասարումը բևեռային կոորդինատական համակարգում՝

$$u_{rr} + \frac{1}{r}\, u_r + \frac{1}{r^2}\, u_{\varphi\varphi} = 0: \tag{5.2}$$

Փնտրենք այդ հավասարման ոչ տրիվիալ լուծումը

$$u(r,\varphi) = F(r)\cdot\Phi(\varphi)$$

տեսքով, $F(r)\not\equiv 0,\ \ \Phi(\varphi)\not\equiv 0$: Հավասարման մեջ տեղադրմամբ հանգում ենք՝

$$F''(r)\Phi(\varphi) + \frac{1}{r}F'(r)\Phi(\varphi) + \frac{1}{r^2}F(r)\Phi''(\varphi) = 0:$$

Անջատելով փոփոխականները, կստանանք՝

$$\frac{r^2F''(r)+rF'(r)}{F(r)} = -\frac{\Phi''(\varphi)}{\Phi(\varphi)}:$$

Ստացված հավասարությունը կլինի նույնություն, եթե աջ մասը ցանկացած r-ի, իսկ ձախ մասը ցանկացած φ-ի դեպքում հավասար լինեն նույն հաստատունին՝

$$\frac{r^2F''(r)+rF'(r)}{F(r)} = -\frac{\Phi''(\varphi)}{\Phi(\varphi)} \equiv \lambda:$$

Այստեղից, $\Phi(\varphi)$ ֆունկցիայի որոշման համար կստանանք

$$\Phi''(\varphi)+\lambda\Phi(\varphi)=0 \tag{5.3}$$

հավասարումը, իսկ $F(r)$ ֆունկցիայի որոշման համար՝

$$r^2F''(r)+rF'(r)-\lambda F(r)=0 \tag{5.4}$$

Էյլերի հավասարումը:

Քանի որ $u(r,\varphi+2\pi k) = u(r,\varphi)$, $k\in Z$, ապա՝ $\Phi(\varphi+2\pi k)=\Phi(\varphi)$, այսինքն՝ փնտրվում են (5.3) հավասարման 2π-պարբերական լուծումները: Դիտարկենք երեք դեպք:

1) $\lambda<0$ դեպքում (5.3) հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$\Phi(\varphi)=c_1e^{-\sqrt{-\lambda}\varphi}+c_2e^{\sqrt{-\lambda}\varphi},\quad c_1,c_2\in\mathrm{R},$$

որը պարբերական չէ, եթե c_1-ը և c_2-ը միաժամանակ զրո չեն:

2) $\lambda=0$ դեպքում (5.3) հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$\Phi(\varphi)=\alpha_0+\beta_0\,\varphi,\quad \alpha_0,\beta_0\in\mathrm{R},$$

որը կլինի պարբերական, եթե $\beta_0=0$, այսինքն՝ $\lambda=0$ դեպքում (5.3) հավասարման 2π-պարբերական լուծումը ցանկացած հաստատուն է՝ $\Phi_0(\varphi)\equiv\alpha_0$, ընդ որում՝ $\alpha_0\neq0$:

3) $\lambda>0$ դեպքում (5.3) հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$\Phi(\varphi)=c_1\cos\sqrt{\lambda}\varphi+c_2\sin\sqrt{\lambda}\varphi,\quad c_1,c_2\in\mathrm{R}:$$

Քանի որ՝ $c_1^2+c_2^2\neq0$, ապա այն կարելի է ներկայացնել

$$\Phi(\varphi)=A\cos\big(\sqrt{\lambda}\,\varphi-\theta\big),\qquad A=\sqrt{c_1^2+c_2^2},\quad \theta=\operatorname{arctg}\frac{c_2}{c_1}$$

տեսքով: $\Phi(\varphi+2\pi)=\Phi(\varphi)$ պայմանից՝

$$A\cos(\sqrt{\lambda}(\varphi+2\pi)-\theta)=A\cos(\sqrt{\lambda}\varphi-\theta),$$

որտեղից, հաշվի առնելով, որ $A\neq0$, կստանանք՝

$$-2\sin(\sqrt{\lambda}\,\varphi+2\pi\sqrt{\lambda}-\theta)\sin\pi\sqrt{\lambda}\equiv0,$$

ուրեմն՝ $\sin\pi\sqrt{\lambda}=0$, որտեղից՝ $\pi\sqrt{\lambda}=\pi n$ կամ $\lambda=n^2$, $n=1,2,\dots:$

Այսպիսով, երբ $\lambda > 0$, (5.3) հավասարման 2π-պարբերական լուծումներն են

$$\Phi_n(\varphi) = \alpha_n \cos n\varphi + \beta_n \sin n\varphi, \quad \alpha_n,\ \beta_n \in \mathrm{R}, \quad n = 1, 2, \dots$$

ֆունկցիաները: Գտնենք (5.4) հավասարման լուծումները ստացված λ-ների դեպքում:

Երբ $\lambda = 0$, (5.4) հավասարման ընդհանուր լուծումն է՝

$$F_0(r) = c_1 + c_2 \ln r, \qquad c_1,\ c_2\ \in \mathrm{R},$$

իսկ $\lambda = n^2$ դեպքում՝

$$F_n(r) = c_1^{(n)}\ r^n + c_2^{(n)}\ r^{-n}, \qquad c_1^{(n)},\ c_2^{(n)}\ \in \mathrm{R}:$$

Այսպիսով՝

$$u_0(r,\varphi) = F_0(r)\Phi_0(\varphi) = (c_1 + c_2 \ln r)\alpha_0 = A_0 + B_0 \ln r,$$

$$\begin{aligned} u_n(r,\varphi) = F_n(r)\Phi_n(\varphi) = (c_1^{(n)} r^n + c_2^{(n)} r^{-n})(\alpha_n \cos n\varphi + \beta_n \sin n\varphi) = \\ = (A_n r^n + B_n r^{-n}) \cos n\varphi + (C_n r^n + D_n r^{-n}) \sin n\varphi, \quad n = 1, 2, \dots \end{aligned}$$

ֆունկցիաները ցանկացած

$$A_0 = c_1\alpha_0, \quad B_0 = c_2\alpha_0, \quad A_n = c_1^{(n)}\alpha_n, \quad B_n = c_2^{(n)}\alpha_n, \quad C_n = c_1^{(n)}\beta_n, \quad D_n = c_2^{(n)}\beta_n$$

հաստատունների դեպքում (5.2) հավասարման լուծումներ են:

Ակնհայտ է, որ այդ հավասարման լուծում է նաև

$$u(r,\varphi) = A_0 + B_0 \ln r + \sum_{n=1}^{\infty} \big((A_n r^n + B_n r^{-n}) \cos n\varphi + (D_n r^n + C_n r^{-n}) \sin n\varphi\big) \tag{5.5}$$

ֆունկցիան, եթե միայն աջ մասում գրված շարքը և այն շարքերը, որոնք ստացվում են երկու անգամ անդամ առ անդամ ածանցելիս, հավասարաչափ զուգամետ են:

3.1 Դիրիխլեի խնդիրը շրջանում: Պահանջվում է գտնել $x^2 + y^2 < R^2$ շրջանում հարմոնիկ ֆունկցիա, որը $x^2 + y^2 = R^2$ շրջանագծի վրա հավասար է տրված $g(x,y)$ ֆունկցիային՝

$$\begin{cases} \Delta u = 0, & x^2 + y^2 < R^2, \\ u(x,y) = g(x,y), & x^2 + y^2 = R^2 : \end{cases}$$

Բևեռային կոորդինատական համակարգում խնդիրը կգրվի

$$
\begin{cases}
u_{rr} + \dfrac{1}{r}u_r + \dfrac{1}{r^2}u_{\varphi\varphi} = 0, \quad r < R, & (5.6)\\
u(R,\varphi) = f(\varphi), \quad 0 \leqslant \varphi < 2\pi & (5.7)
\end{cases}
$$

տեսքով, որտեղ $f(\varphi) = g(R\cos\varphi, R\sin\varphi)$:

$u(r,\varphi)$ ֆունկցիան պետք է լինի սահմանափակ, իսկ դա նշանակում է, որ (5.5) շարքի գումարը կլինի (5.6) հավասարման լուծում $r < R$ շրջանում, եթե $B_0 = B_n = C_n = 0$, այսինքն՝

$$
u(r,\varphi) = A_0 + \sum_{n=1}^{\infty} r^n (A_n \cos n\varphi + D_n \sin n\varphi) : \tag{5.8}
$$

Ընտրենք A_0, A_n և B_n հաստատուններն այնպես, որ տեղի ունենա (5.7) եզրային պայմանը՝

$$
f(\varphi) = u(R,\varphi) = A_0 + \sum_{n=1}^{\infty} R^n (A_n \cos n\varphi + D_n \sin n\varphi) :
$$

